Это роман о духовном становлении личности, обретении свободы, постепенном перерождении главного героя Чарльза Смитсона из типичного представителя викторианского общества в молодого человека уже новой эпохи под влиянием таинственной, загадочной женщины - Сары Вудраф. В статье «Заметки по поводу неоконченного романа» (*Notes on an Unfinished Novel*, 1969) Фаулз пишет о том, как у него зародилась идея романа. Однажды ранним утром ему привиделся образ молодой женщины, стоящей на старинном причале и смотрящей на море. *«У женщины не было лица, не было и особой сексуальной привлекательности, но она явно принадлежала викторианской эпохе и была <...> упреком этой эпохе. Отверженной».*¹¹⁵

Широкую известность в викторианскую эпоху получили произведения о поисках Святого Грааля, которые *«воспринимаются как духовное паломничество, восхождение*

¹¹³ Долинин А. Паломничество Чарльза Смитсона // Фаулз Дж. Подруга французского лейтенанта. М. Художественная литература. 1990. С. 9.

¹¹⁴ Соловьева Н. Вызов романтизму в постмодернистском британском романе. // Вестник Московского университета. Сер.9. Филология. 2000. #1. С. 56.

¹¹⁵ Fowles J. Notes on an Unfinished Novel // Fowles J. Wormholes. Vintage. London. 1999. P. 15.

души».¹¹⁶ Таким образом, Чарльз Смитсон ассоциируется с подобием странствующего рыцаря, участвующего в авантюрных приключениях и помогающего заколдованной принцессе Саре. Только принцесса сама оказывается волшебницей и снимает с рыцаря заклятие, о котором он даже не догадывался.

Период конца шестидесятых годов XIX века (время действия романа) - это период относительного процветания, затрагивающего, правда, лишь небольшую часть общества. Это было время так называемого «великого викторианского компромисса» между крупной буржуазией и аристократией. Многочисленные эпитафии и сноски из работ К.Маркса, Ф.Энгельса, Д.Д.Фрэзера, Ч.Дарвина показывают всю иллюзорность викторианской надежды на долгое процветание высших слоев, а также убожество жизни и чувство нарастающего протеста в слоях более низких.

Как известно, Англия – страна традиций. Многие современные английские установления и обычаи берут начало в викторианстве. И в романе, среди авторских размышлений о различных человеческих судьбах и философских явлениях есть фраза: *«Мы можем порой распознать в лице современника выражение минувшего века, но нам никогда не удастся распознать выражение века грядущего»*.¹¹⁷

По мнению Фаулза, ключевым понятием, воплощающим ментальность англичанина викторианской эпохи, является понятие Долга в самом широком значении этого слова. Долг регламентировал почти все проявления человеческих эмоций, отношения между людьми, не только социальные, но и личные. Сара Вудраф именно потому не вписывается в викторианское общество, что ее внутренний мир, ее мысли и чувства уже давно переросли тесные рамки пуританской морали. Настоящая жизнь шире и многообразнее установленных обществом правил

¹¹⁶ Соколова Н.И. Литературное творчество прерафаэлитов в контексте Средневекового Возрождения в викторианской Англии. Автореферат диссертации кандидата филологических наук. М. 1995. С. 7.

¹¹⁷ Фаулз Д. Подруга французского лейтенанта. М. Правда. 1990. С. 183.

поведения. Подобно Эмме Бовари или Анне Карениной, она задыхается в том ограниченном мире, в котором общество позволяет ей существовать. Еще один из литературных прототипов Сары Вудраф – это Джейн Эйр. Героиня Ш.Бронте тоже работала гувернанткой и боролась за свое счастье, правда несколькими иными способами. Сара не лжет, когда говорит, что для нее важнее чувствовать себя живой, хоть чем-то отличной от того общества, которое ее окружает, чем стать безропотным винтиком слаженно работающего механизма. Именно поэтому она фактически решает на мистификацию и, как впоследствии окажется, придумывает историю о соблазнении ее лейтенантом Варгенном. *«Жить мне позволил мой позор, сознание, что я и в самом деле не похожа на других женщин»*.¹¹⁸ Как невозможно дать абсолютно объективное описание жизни во всем ее многообразии (любое описание субъективно), так и Фаулз не пытается подробно объяснить своим читателям характер Сары Вудраф, а создает образ изначально загадочный, непостижимый.

С другой стороны, принципиальная таинственность повествования, когда речь идет о Саре, напоминает традиции английских романтиков, восходящие к готическому роману. В статье «Заметки по поводу неоконченного романа» он пишет: *«Я представляю себе мужской персонаж достаточно искусственным, а женщину своего рода реальностью. Один – холодная идея, другая – теплый факт»*.¹¹⁹

Описывая викторианское общество, Фаулз в первую очередь говорит о раздвоенности сознания викторианцев. С одной стороны – это жесткий контроль общества над истинными чувствами и стремлениями людей, страх перед всем открытым и обнаженным. Писатель ставит диагноз клаустрофилии (любовь к закрытому пространству) всему викторианскому обществу. Это было время, когда после просветительской действительности вновь началось усиление влияния церковных догматов о семье и

¹¹⁸ Фаулз Д. Подруга французского лейтенанта. М. Правда. 1990. С. 179.

¹¹⁹ Fowles J. Notes on an Unfinished Novel // Fowles J. Wormholes. Vintage. London. 1999. P. 26.

брак стал особенно почитаем, когда в Англии было построено больше церквей, чем за всю ее предыдущую историю, *«когда ни одно значительное литературное произведение не позволяло себе по части чувственности заходить дальше поцелуя – и когда порнографическая литература издавалась в количествах, не превзойденных по сию пору»*.¹²⁰

С другой стороны, чопорности и лицемерной закрытости верхних классов общества в романе противопоставлена сельская Англия с ее здоровой свободой. Фаулз испытывает большое уважение к естественным человеческим отношениям. Описывая сельскую Англию конца XIX века, Фаулз вспоминает литературу этого периода. Он пишет, что викторианские писатели потерпели жесточайшее поражение потому, что ханжески умалчивали об одном из важнейших аспектов человеческой жизни – физической любви, о том, что очень важно для любого, будь то мужчина или женщина. И лишь Т.Гарди в своих более поздних романах осмелился приоткрыть завесу молчания над столь важным вопросом, за что его роман «Джуд незаметный» был подвергнут остракизму со стороны англиканской церкви.

Интересно отношение Фаулза ко времени, в котором происходит действие, к истории и современности. Все это прекрасно согласуется с традицией, созданной и утвержденной в литературе еще Дж.Джойсом и унаследованной постмодернистами. Постмодернизм уничтожал границы между художественной литературой и историей или автобиографией, смешивал реальность и фантазию, различные жанры и формы, создавая оригинальную картину собственного мира. Фаулз считает, что автор не должен мысленно переноситься в прошлое. *«Роман должен иметь прямое отношение к настоящему времени писателя – поэтому не притворяйся, что ты живешь в 1867 г., или добейся того, чтобы читатель понимал, что ты притворяешься»*.¹²¹ Авторское «я» в романе комментирует

¹²⁰ Фаулз Д. Подруга французского лейтенанта. М. Правда. 1990. С. 262.

¹²¹ Fowles J. Notes on an Unfinished Novel // Fowles J. Wormholes. Vintage. London. 1999. P. 17.

события с точки зрения современного человека, иронически сопоставляет различные временные пласты. Чтобы создать викторианскую картину мира, он делает многочисленные заимствования, цитирует авторов той эпохи, в то же время противопоставляя им современную культуру.

Роман начинается с описания залива Лайма и его старинного мола Кобб, по которому гуляют главные герои повествования: палеонтолог-любитель из Лондона Чарльз Смитсон и его невеста Эрнестина Фримен встречаются на дальнем конце мола женщину, чья романтическая внешность и, особенно, напряженный взгляд, поражают Чарльза с первой же минуты. Она смотрела «как-то не так», не совсем привычно, и автор тут же поясняет нам, что она смотрела слишком смело для женщины викторианской эпохи. Мы сразу узнаем, что в городе ее называют «Трагедией», что она была влюблена в некоего французского лейтенанта, который ее бросил. Эта случайная встреча станет поворотным пунктом в жизни главных героев. Загадочность девушки, трагичность ее положения произведут огромное впечатление на Чарльза, а встречи с ней полностью перевернут его жизнь.

В конце романа Чарльз после долгих поисков найдет Сару в доме, принадлежащем членам Братства прерафаэлитов. Фаулз отмечает, что *«революцией в искусстве той поры было, разумеется, движение прерафаэлитов; они, по крайней мере, сделали попытку признать природу и сексуальность»*.¹²² Феномен прерафаэлитизма очень важен в структуре романа «Подруга французского лейтенанта». Основная тенденция творчества прерафаэлитов – противостояние всей викторианской картине мира. Прерафаэлитское братство было одним из первых проявлений феномена, названного самими викторианцами *«medieval revival»* (средневековым возрождением). Его основными представителями были Данте Габриель Россетти, Кристина Россетти, Джон Эверетт Миллес и Уильям Хольман-Хант.

¹²² Фаулз Д. Подруга французского лейтенанта. М. Правда. 1990. С. 180.

Прерафаэлизм в живописи возник прежде всего как реакция на господство классицизма, официально принятого стиля викторианской живописи. основополагающим правилом своей эстетики и художественного творчества прерафаэлиты считали верность природе. Но принцип этот у них имел несколько смыслов. С одной стороны, «верность природе» понималась как предельно достоверное, детальное ее изображение. Их внимание к деталям в какой-то степени тоже было выражением протеста против наиболее распространенного мнения того времени, что детали не так уж и важны и, создавая картины, в частности, на историческую тему, стоит отказаться от воплощения деталей эпохи в картине, чтобы изображение было «на все времена».

С другой стороны, принцип верности природе для прерафаэлитов был связан с представлением о тождестве природы и искусства. Мысль о связи человека с миром растений была высказана еще Д.Рескином в его работе «Прозерпино», а о тождестве искусства и природы писал Р.У.Эмерсон в эссе «Природа». *«Сам отказ художников “Братства” от классических правил был связан с их неприятием искусства, классифицирующего природу, а не тождественного ей»*.¹²³ Именно этот принцип верности природе больше всего импонирует Фаулзу в творчестве прерафаэлитов.

Фаулзовская концепция мира и человека неотделима от природы. Его персонажи делятся не на положительных и отрицательных, а на характеры, близкие к природе, чувствующие ее, или напрочь лишенные этого чувства. Не случайно первые встречи Чарльза с Сарой, перевернувшие его мировоззрение, научившие его чувствовать жизнь, происходят на лоне природы. Лес, меловые скалы и зеленая трава, тишина и особая, не связанная с людьми жизнь природы, все это – немаловажный аргумент в пользу условности, искусственности викторианских правил поведения, впитанных Чарльзом с молоком матери. Даже

¹²³ Соколова Н.И. Литературное творчество прерафаэлитов в контексте Средневекового Возрождения в викторианской Англии. Автореферат диссертации кандидата филологических наук. М. 1995. С. 12.

будучи натуралистом и любителем природы, Чарльз до определенного времени остается чужд красоте окружающей природы. Он подходит к ней с точки зрения классификатора и исследователя, и поначалу его интересуют лишь ископаемые мертвые окаменелости. Он ходит, смотря только под ноги, чтобы не пропустить удачно сохранившийся экземпляр. Лишь впоследствии, после встреч с Сарой, он станет обращать внимание на окружающую его природу. Сара же, наоборот, кажется естественной частью дикой природы. Для Чарльза она останется духом места, слитым воедино с Верской пустошью.

Но идея тождества природы и искусства не была для прерафаэлитов представлением об искусстве как зеркальном отражении природы. Многие из них подчеркивали свое негативное отношение к «реализму» или «имитации», под которыми они понимали натуралистическое копирование. В искусстве прерафаэлиты искали и старались изображать внутреннюю сущность явлений, а не их внешнюю оболочку. Под влиянием идей Рескина они делили произведения искусства на идеальные, порожденные воображением, и неидеальные. Именно поэтому прерафаэлитов можно назвать непосредственными предшественниками символизма в английской живописи и литературе, в частности, – эстетизма Оскара Уайльда.

В «Подруге французского лейтенанта» Фаулз отмечает, что торжество рационализма, характерное для викторианской эпохи, было логичным следствием развития промышленного производства, а также естественно-научных открытий Дарвина, Лайелла, Чемберса. Именно эти открытия поставили под сомнение достоверность библейской Книги Бытия. Они меняли первоначальное представление о нравственной сущности природы. Природа теперь представлялась безжалостным началом, в котором господствует стихийный случай. Эти мысли вызвали естественную реакцию в сфере философии, эстетики, литературы, религии. Романтический образ природы – друга и наставника человека, воспеваемый У.Вордсвортом, сменился иным: в творчестве Э.Арнольда, А.Теннисона, Т.Карлайля, близких к прерафаэлитам, природа предстает средоточием деструктивных сил, губительных для человека.

Таким образом, викторианская эпоха в романе Д.Фаулза «Подруга французского лейтенанта» представлена достаточно противоречиво. Автор оппозиционирует городское общество и сельскую общину, их уклад и нравственные устои. В искусстве же викторианство отображается как с точки зрения самих представителей эпохи (при помощи документов, использованных в качестве эпитафий или цитируемых в тексте романа), так и с точки зрения автора романа, живущего на сто лет позже описываемых событий.

Կարինե Գուլանյան

**ՎԻԿՏՈՐԻԱՎԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ Ջ.ՖՈՎԼԷՅԻ
«ՖՐԱՆՍԻԱՑԻ ԼԵՅՏԵՆԱՆՏԻ ԿԻՆԸ» ՎԵՊՈՒՄ**

Հոդվածը նվիրված է այն հնարների ուսումնասիրությանը, որոնք օգտագործվել են Վիկտորիական դարաշրջանը՝ որպես կերպար ներկայացնելու համար Ջ.Ֆաուլզի «Ֆրանսիացի լեյտենանտի կինը» վեպում: Գրողը հակադրում է քաղաք և գյուղ համայնքները, ուսումնասիրում է արվեստը՝ որպես ժամանակաշրջանի գաղափարախոսությունն արտացոլող միջոց:

Karine Gulanyan

**THE IMAGE OF VICTORIAN AGE IN J.FOWLES' "THE
FRENCH LIEUTENANT'S WOMAN"**

The article explores the image of Victorian age, the ways of its creation and visualization in J.Fowles' novel "The French Lieutenant's Woman". The writer contrasts the urban and rural communities of the period and studies Art as a means of reflecting the ideology of the times.

**ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԴՈՆ ԴԵԼԻՆՈՅԻ
«ՄԱՈ ԵՐԿՐՈՐ» ԵՎ «ԸՆԿՆՈՂ ՄԱՐԴ» ՎԵՊԵՐՈՒՄ**

Ամերիկյան արդի գրականության ականավոր ներկայացուցիչ Դոն ԴեԼիլոն իր բոլոր ստեղծագործություններում բարձրաձայնում է ժամանակակից աշխարհում առկա հասարակական խնդիրների մասին (ահաբեկչություն, ՋԼՄ-ներ, նորագույն տեխնոլոգիաներ և այլ): Ուսումնասիրելով ամերիկացի գրողի մի քանի ստեղծագործություններ, այդ թվում՝ «Մառ Երկրորդ», «Կոսմոպոլիս», «Խաղացողները», «Սպիտակ աղմուկ», «Ընկնող մարդը», «Օմեգա կետը» վեպերը, կարող ենք փաստել, որ հեղինակը միտում ունի ներկայացնելու ամերիկյան հասարակության ներկայիս պատկերը: Իր առջև դրված խնդիրը հեղինակը լուծում է մի շարք միջոցներով, որոնք են՝ ահաբեկչության ազդեցությունը հասարակության վրա, նորագույն տեխնոլոգիաների անվերահսկելի հոսքը մարդկանց առօրյա, արվեստի և արվեստագետի դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում: Տվյալ հոդվածի շրջանակներում կանդրադառնանք միայն արվեստի խնդրին:

Արվեստի թեման հստակ արտացոլում ունի հեղինակի գրեթե բոլոր վեպերում. ԴեԼիլոյի հերոսները գրողներ են, լուսասնկարիչներ, ռեժիսորներ, դերասաններ, ռոք երաժիշտներ և այլն: Անդրադարձն արվեստին բացատրվում է նրանով, որ հեղինակն առաջնային է համարում արվեստագետի տեղն ու դերը հասարակական գործընթացներում, արվեստագետն այն անփոխարինելի գործիքն է, որով հնարավոր է ազդել հասարակական մտածողության վրա: Ինչպես նշում է ամերիկացի գրականագետ Ջոն Դյուվալը, Դոն ԴեԼիլոն միշտ էլ անդրադարձել է այն հարցին, որ արվեստագետը հնարավորություն ունի փոխելու աշխարհը: ԴեԼիլոյի համոզմամբ՝ արվեստագետը միշտ դուրս է ընդհանուր նորմերից և պատկերացումներից, պետք է միշտ «օտարվածի»¹²⁴ կարգավիճակում լինի, կողքից հետևի հասարակությունում կատարվող իրադարձություններին, քանի որ

¹²⁴ Amend, Ch., Diez, G. I don't know America anymore. Interview with DeLillo <http://dumpendebat.net/static-content/delillo-diezeit-Oct2007.html>

միայն այդպես է հնարավոր ճիշտ գնահատել իրավիճակը և լուծումներ առաջարկել: ԴեԼիլլոն հենց ինքն իրեն պիտակում է որպես «օտարացած» արվեստագետ:¹²⁵ Նա անգամ այցեքարտ է պատվիրել հարցասերների և լրագրողների համար, որի վրա գրված էր հետևյալը. «Ես չեմ ցանկանում խոսել այդ մասին»:¹²⁶ ԴեԼիլլոն երկար տարիներ խուսափել է հանրության հետ որևէ շփումից, այդ թվում՝ իր ստեղծագործություններն ընթերցելուց: Բայց վերջին տարիներին, հատկապես 2001թ-ից հետո, նա դուրս է եկել իր ստեղծած «առանձնացված» կերպարից և արդեն հանրությունը հնարավորություն ունի ընթերցելու բազմաթիվ հարցազրույցներ, ինչպես նաև ունկնդրել հանրային ընթերցումներ ԴեԼիլլոյի մասնակցությամբ:

Ուսումնասիրելով Դոն ԴեԼիլլոյի գործունեությունը՝ կարող ենք եզրակացնել, որ վերջինս բավական հռետետեսական մոտեցում է դրսևորում արվեստագետի դերի և գործունեության վերաբերյալ: Ըստ նրա՝ եթե ժամանակին գրողն ի վիճակի էր ազդելու հասարակության վրա, ապա այժմ նա անկարող է անել դա: Այսօրվա անհանգիստ ու փոփոխվող աշխարհում արվեստագետը կորցրել է իր վաղեմի հզորությունը՝ տեղը զիջելով «հրացանով տղաներին»¹²⁷:

Ահաբեկչությունն այսօր հրատապ խնդիր է դարձել, իսկ ահաբեկիչներն արդեն այնքան ճանաչողություն և հզորություն ունեն, որ կարծես թե փոխարինում են արվեստագետներին և կատարում են նրանց գործառույթը՝ ազդելով հասարակության վրա: Ահաբեկիչ-արվեստագետ նույնացումը հատկապես արտացոլված է «Մաո Երկրորդ» վեպում, որը լույս է տեսել 1981 թվականին: Վեպի հերոսը՝ Բիլ Գրեյը, հաջողության հասած գրող է, ով այլևս ի վիճակի չէ ապրելու մի հասարակությունում, որտեղ իրականություն են ստեղծում լուսանկարները, զանգվածային լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ահաբեկիչները: Նա փախչում է

¹²⁵ Olster, S. "Don DeLillo", NY, 2011, p. 155

¹²⁶ <http://www.theatlantic.com/magazine/archive/1997/10/underhistory-of-mid-century-america/376979/>

¹²⁷ DeLillo, D. *Mao II*. Penguin Books USA Inc. New York. 1992, p. 73

մարդկանց աշխարհից և անհետ կորածի խաբկանք է ստեղծում: Գրեյը գիտակցում է, որ որպես գրող այլևս անգոր է և որևէ փոփոխություն անելու միակ ճանապարհն աշխարհին համընթաց քայլելն է: Տարիներ անց նա որոշում է կայացնում վերադառնալ ընդհատակից՝ հանրությանը ներկայացնելով իր լուսանկարը կամ պատկերը որպես միակ դեռևս գորեղ միջոց: Փաստորեն, այն, ինչից փախչում էր Գրեյն, այժմ դառնում է նրա վերադարձի երաշխիքը: Այսինքն՝ արվեստն այս դեպքում ծառայում է բացասական երևույթի տարածմանն ու նոր աշխարհի ստեղծմանը, ինչից փախչում է և ուր վերադառնում է ԴեԼիլլոյի հերոսը: Մակայն նա դատապարտված է անգամ իր այս ընտրությամբ: Այստեղ նորից արտահայտվում է հեղինակի հոռետեսությունը, քանի որ, փորձելով օգնության հասնել ահաբեկիչների կողմից պատանդի կարգավիճակ ստացած մեկ այլ գրողի՝ Բիլ Գրեյը մահանում է:

Դոն ԴեԼիլլոյի ստեղծագործական կյանքի ու կենսագրության ուսումնասիրությունը մի կարևոր փաստ է բացահայտում, որին հարկ ենք համարում անդրադառնալ, քանի որ այն բեկումնային է եղել նրա ստեղծագործական կյանքի համար: ԴեԼիլլոն երկար ժամանակ աշխատել է գովազդային ընկերությունում և լինելով գործընթացի ներսում՝ շատ վաղ գիտակցել է պատկերի կարևորությունն ու ազդեցությունը անհատի վրա: Մա էլ սկիզբ է դնում հեղինակի անվերջանալի մտահոգություններին, որ մի օր ամեն ինչ դառնալու է պատկեր՝ *«մարդիկ այլևս մտածելու կարիք չունեն՝ նրանց պետք է ուղղակի հավատար»*¹²⁸: Այսպես կորցնում է իր կարևորությունը նաև արվեստագետը, ով, ըստ հեղինակի, առաջնային է հասարակության զարգացման համար: Փաստորեն «Մաո Երկրորդ» վեպում հեղինակը որպես արվեստի արտացոլում դիտարկում է լուսանկարը, ինչը նոր աշխարհի ապացույցն է, սակայն այդ աշխարհում իրական արվեստագետը, ի դեմս Բիլ Գրեյի, տեղ չունի: Արվեստագետի գործառույթն այլևս ահաբեկիչներին է պատկանում:

Արվեստի խնդրին Դոն ԴեԼիլլոն անդրադառնում է նաև իր «Ընկնող մարդը» վեպում, որի գործողությունները ծավալվում են Նյու Յորքում՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած

¹²⁸ Olster, S. "Don DeLillo", NY, 2011, p. 153

ահաբեկչական գործողություններից անմիջապես հետո՝ բացահայտելով «վնասվածք» ստացած ամերիկյան հասարակության իրական պատկերը: Ահաբեկչական գործողությունները դարձնելով իր վեպի հիմնաքար՝ ամերիկացի գրողը կարողանում է ընթերցողին ներկայացնել այն բոլոր հասարակական խնդիրները, որոնք առաջացել են տեղի ունեցածի հետևանքով: Միաժամանակ հեղինակը չի անտեսում արվեստի գործունը, այն դառնում է միջոց՝ պայքարելու ահաբեկչության դեմ: Արվեստը դառնում է կարևոր երաշխիք 9/11-ի դեպքերը հիշելու և հիշատակելու համար:

«Ընկնող մարդը» վեպում արվեստի թեման քննարկելիս Դոն ԴեԼիլոն անդրադառնում է մասնավորապես գեղանկարչությանը և պերֆորմանսին: Ընթերցողի և արվեստի հանդիպումը տեղի է ունենում գլխավոր հերոսների միջոցով, որոնցից մեկը արվեստաբան է, մյուսը զբաղվում է նկարների վաճառքով: Այս համատեքստում առաջնային են դառնում 20-րդ դարի իտալացի գեղանկարիչ Ջորջիո Մորանդիի կտավները, որոնք վեպում դառնում են գործող կերպարներ և ներկայացնում են հերոսների նոր աշխարհայացքը: Մորանդիի կտավներում հիմնականում կարելի է տեսնել շշեր, տարաններ, ծաղկամաններ, որոնք թեև «անկենդան» են, բայց ստեղծված են բավարարելու մարդու կարիքները և «արտացոլում են մարդկային հարաբերությունների փոփոխման հավանականությունը»¹²⁹: Այս գաղափարը ԴեԼիլոն գրական միջավայր է տեղափոխում՝ իր հերոսներին դասավորելով այնպես, ինչպես նկարիչը անշունչ առարկաները՝ դրանով իսկ ցույց տալով հերոսների աշխարհայացքի և հարաբերությունների փոփոխությունը, ինչն ահաբեկչության հետևանք է:

Մորանդիի կտավները՝ նատյուրմորտ են և պատահական չէ ԴեԼիլոյի կողմից հենց այս ժանրի ընտրությունը: Նատյուրմորտ կամ *natura morta* լատիներենից թարգմանաբար նշանակում է մեռած բնություն, բայց անգլերենում այն ներկայացվում է *still life* արտահայտությամբ, որը նշանակում է կանգնած, մեռած կամ անզգայացած կյանք: Միաժամանակ կարևոր ենք համարում նշել,

¹²⁹ Schweighauser. P., Schneck.P,” Terrorism, media, and the ethics of fiction: transatlantic perspectives on Don DeLillo”, NY, 2010, p.102

որ *still life* արտահայտությունը, որն առաջին հայացքից բացասական երանգավորում ունի և ներկայացնում է ամերիկյան հասարակության «սառած» վիճակը, միաժամանակ կարելի է ընկալել որպես կյանք, որ դեռ կա, այսինքն՝ հեղինակը միանշանակ չի բացառում փրկությունը:

Նկարները վեպում կարևորվում են այն դրվագով, երբ ահաբեկչական գործողություններից հետո հերոսներն այլ կերպ են սկսում ընկալել կտավներն ու դրանց բովանդակությունը. անգամ նկարները «խոսում են» ահաբեկչության մասին: ԴեԼիլոն հերթական անգամ ընդգծում է արվեստի մարգարեական հատկությունը. ստեղծագործելով դեռևս 20-րդ դարասկզբին՝ Մորանդին կարծես թե պատկերել է ԱՄՆ-ի ապագան: Մորանդիի կտավն ուղղակի մի նկար էր, սակայն ահաբեկչական գործողություններից հետո կտավում ներկայացված իրերը նմանվում են փլուզված երկնաքերերին: Կտավի վրա կարելի էր նշմարել յոթ կամ ութ առարկա, որոնցից ամենաբարձրները մոխրագույն ֆոնի ներքո էին պատկերված: Մնացած առարկաները տուփերի ու տարաների մի կույտ էին կազմում՝ հավաքված ավելի մուգ ֆոնի ներքո: Այդ երկու ամենաբարձր առարկաները մութ ու աղոտ էին՝ պարուրված մշուշով ու ծխով: Մի կարճ շիշ խախտում էր նրանցից մեկի ամբողջականությունը՝ կիսով չափ ծածկելով այն: Դա մի հասարակ շիշ էր, սպիտակ շիշ: Իսկ այդ երկու առարկաները հենց նրանք էին, ինչի մասին խոսում էր Մարտինը: «*Ինչ էս տեսնում*»,¹³⁰ - *ասաց նա: Լիանը տեսավ այն, ինչ նա էր տեսել: Նա տեսավ աշտարակները*»:¹³⁰

Վեպում արվեստի արտահայտման ձև է դառնում նաև պերֆորմանսը, երբ Դեյվիդ Ջենիաք անունով մի տղամարդ հանկարծակի հայտնվում է Նյու Յորքի փողոցներում և մեծ բարձրությունից նետվում է ցած՝ նմանակելով ահաբեկչական գործողությունների ժամանակ այրվող երկնաքերից դուրս թռչող մարդկանց: Թչող մարդկանց թեման հատուկ ուշադրության է արժանի, բանն այն է, որ ահաբեկչական գործողությունների ընթացքում մի տղամարդ ցած է նետվում երկնաքերից և այդ ակնթարթն անմահացնում է *Associated Press* լրատվական

¹³⁰ DeLillo, D. "The Falling Man", NY, 2007 ,p.49

գործակալության լրագրողը: Այդ լուսանկարը կայծակնային արագությամբ տարածվում է ողջ աշխարհում և վերնագրվում է «Ընկնող մարդը»: Այս ընկնող մարդը տեսանելի է նաև Մորանդիի կտավում: Հերոսները նկատում են միայն երկնաքերերը, բայց ավելի մանրագնին ուսումնասիրության դեպքում կարելի է տեսնել, որ երկնաքեր թվացող տարաները շատ նմանվում են ընկնող մարդու:

Այդ նկարն այնուհետ հիմք է հանդիսանում մի շարք արվեստագետների ստեղծած քանդակների համար, որոնք սակայն չեն ընդունվում ամերիկյան հասարակության կողմից: Այսպես՝ 2002 թվականին Նյու Յորքում ժամանակակից արվեստի ներկայացուցիչ Էրիք Ֆիշլը քանդակում է ընկնող մարդուն՝ մերկ կնոջ կերպարով՝ դրանով իսկ կոտրելով սեռային տարբերակման կարծրատիպը(հիշենք լուսանկարում ընկնողը՝ տղամարդ է) և տեղի ունեցածը դիտարկելով որպես համընդհանուր աղետ: Ամերիկյան հասարակությունը մեղադրում է արվեստագետին տեղի ունեցածն անարգելու մեջ, և նրա քանդակն ուղղակիորեն դուրս է բերվում ցուցադրությունից¹³¹:

Մեկ այլ արվեստագետ՝ Շերոն Փազը, ամերիկյան թանգարաններից մեկի ապակիներից ամրացնում է ընկնող մարդկանց թղթե պատկերներ՝ իբրև թե ցույց տալու, թե պատահարը դաջված է մարդկանց մտքերում¹³²: Այս փորձը նույնպես դատապարտվում է: Այնինչ ԴեԼիլոյի «ընկնող մարդը» հակասական արձագանք չի ստանում. լինելով գեղարվեստական հորինվածք՝ այն լավագույնս է ցուցադրում իրական ընկնող մարդկանց ու հիշատակում նրանց թույլ չտալով մոռանալ սեպտեմբերի 11-ին պատահածը: ԴեԼիլոյի ստեղծած կերպարը Դեյվիդ Ջենիաքը, արտացոլում է հեղինակի պատկերացումները արվեստագետի մասին, ով ունակ է հասարակությանն ինչ-որ բան հիշեցնելու կամ փոխելու: Ջենիաքը նույնպես օտարված կերպար է, ով հեռու է մարդկանցից. նրա մասին գրեթե տեղեկություն չկա, նա ուղղակի հայտնի է որպես «ընկնող մարդը»:

¹³¹ <http://artfromtheashes.blog.sbc.edu/2012/02/27/eric-fischls-tumbling-woman/>

¹³² <http://www.sharonpaz.com/falling/>

Նշենք, որ պերՖորմանսները վեպում շատ նման են այսօր ողջ աշխարհում լայն տարածում գտած ֆլեշ մոբ ակցիաներին, երբ որևէ ինդրի մասին բարձրաձայնելու համար մի խումբ մարդիկ, համաձայն նախօրոք պայմանավորվածության, հանկարծակի ու կարճ ժամանակով հայտնվում են որևէ վայրում, իրականացնում են ակցիան ու արագ անհետանում: Նույնն էլ, փաստորեն , անում է Ջենիաքը, այն տարբերությամբ, որ նա մենակ է, ինչն էլ ավելի է ուժգնացնում նրա հաղորդագրությունն ուղղված ամերիկացիներին:

Այսպիսով Դոն Դելիլլոյի «Մաո Երկրորդ» և «Շնկնող մարդը» վեպերում հեղինակն, անդրադառնալով արդի կյանքում գոյություն ունեցող ինդիբներին, առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում *արվեստ* հասկացությանը, արվեստը դառնում է կարևորագույն միջոց, որով պատկերվում են 21-րդ դարում ապրող անհատի անհանգստությունները, մասնավորապես ահաբեկչությունն ու լուսանկարներով ստեղծված իրականությունը:

Ella Asatryan

THE REFLECTION OF ART IN NOVELS *FALLING MAN* AND *MAO II* BY DON DELILLO

The article is based on the analyses of the novels *Falling Man* and *Mao II* by the American prominent contemporary writer Don DeLillo. The article concentrates on the problem of art and the role of an artist as reflected in the novels. The author reveals that art is an important tool to reflect the problems of nowadays life including terrorism, mass media and new technologies. In the novel *Falling Man* the main shift is put on the works of Italian painter Morandi and the analyses of the photo named *Falling man* which was taken during the tragic events of 9/11 which has become a prototype for DeLillo's heroes. The novel *Mao II* reveals the connection between art and terrorism.

Элла Асатрян

ОТРАЖЕНИЕ ИСКУССТВА В РОМАНАХ ДОНА ДЕЛИЛЛО «ПАДАЮЩИЙ» И «МАО II»

В статье рассматривается проблема искусства и роль искусствоведа представленная в романах «Падающий» и «Мао II». Анализ романов показывает, что искусство является важным инструментом для отражения социальных проблем, таких как

терроризм, масс медиа и новейшие технологии. В романе «Падающий» в центре внимания - картины итальянского художника Дж. Моранди и фотография «Падающий», сделанная во время террористических событий 9/11. Роман «Мао II» отражает связь искусства и терроризма.

**ԳՐԱԿԱՆ ԱԼՅՈՒԶԻԱՆԵՐԸ ԷՂՎԱՐԴ ՕԼԲԻԻ
«ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ՊԻԵՍՈՒՄ**

Ամերիկացի թատերագիր Էդվարդ Օլբիի՝ 1961 թվականին լույս տեսած երկրորդ պիեսը՝ «Ամերիկյան երազանքը», մեծ իրարանցում առաջացրեց ամերիկյան բեմում: Քենեդյան էյֆորիայի տարիներին, երբ իշխանությունների կողմից փորձ էր արվում ամերիկյան հասարակությանը համոզել «ամերիկյան երազանք» հասկացության արդյունավետության մեջ, Օլբիի այս պիեսն ամբողջովին դիմագրկեց այն:

Բնականաբար, «Ամերիկյան երազանք» պիեսը, անդրադառնալով ամերիկյան հասարակության համար այդքան կարևոր երևույթին, չէր կարող աննկատ մնալ գրաքննադատների կողմից: Մասնավորապես, Գոշեն քոլեջի պրոֆեսոր Էրվին Բեքը պիեսում առկա կերպարային այլաբանությունները վերլուծել է «Աբսուրդի թատրոնի» տեսանկյունից¹³³, իսկ Ժանետ Բարնան անդրադարձել է պիեսում հին և նոր «ամերիկյան երազանք» հասկացությունների դերին:¹³⁴

Մեկ ակտից բաղկացած այս պիեսը ներկայացնում է ամերիկյան ընտանիքի կյանքից մեկ օր: Մյուսժեն, ինչպես Օլբիի այլ պիեսներում, առաջին հայացքից պարզունակ է՝ մայրիկը և հայրիկը հյուրասենյակում սպասում են ինչ-որ այցելուի: Երկխոսությունից ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծում, որ նրանք սպասում են ինչ-որ իր վերանորոգողի, որն անընդհատ ուշանում է: Ամեն ինչ փոխվում է, երբ վերջապես դուռը զանգում են և ժամանում է սպասված հյուրը: Պարզվում է, որ ամբողջ ընթացքում զույգը սպասել է մանկատան տնօրենին: Միննույն ժամանակ, ծանոթանում ենք տատիկի կերպարին, որին զույգը այնքան է ծաղրել՝ ներկայացնելով նրան որպես զառամյալ մի ծեր տիկին, որը

¹³³ Beck E. Allegory in Edward Albee's «The American Dream». <https://www.goshen.edu/english/ervinb/DREAM.html>

¹³⁴ Barna Zs. Old vs. New. Edward Albee Dreams of America. <http://americanajournal.hu/vol6no1/barna>

բողոքելուց և տուփեր պատրաստելուց բացի ուրիշ ոչնչի ընդունակ չէ, որ անգամ հանդիսատեսն է նրան անլուրջ մոտենում: Մակայն, երբ մանկատան տիկինը չի հասկանում, թե ինչու են իրեն այստեղ կանչել, հենց տատիկն է նրան բացատրում եղելությունը: Պարզվում է, որ 20 տարի առաջ, գույգը, չկարողանալով զավակ ունենալ հայրիկի հիվանդության պատճառով, տղա է որդեգրել: Հենց այստեղ էլ այլաբանությունների միջոցով Օլբին ներկայացնում է «ամերիկյան երագանք» երևույթի իսկական դեմքը: Տատիկի խոսքերից հանդիսատեսը հասկանում է, որ, որդեգրել ասելով, տատիկը նկատի ունի, որ գույգը գումար է վճարել երեխային որդեգրելու համար, այսինքն՝ բառացիորեն գնել է երեխային: Եվ ինչպես յուրաքանչյուր գնած իրի, նրանք տղային էլ են վերաբերվել որպես ապրանքի: Ջուլգին դուր չի եկել, որ իրենց նորածինը գիշերները լացում է, նրանց դուր չի եկել, որ մի փոքր մեծանալով՝ նա սկսել է ձեռքերով ուսումնասիրել իր մարմինը, և նրանք կտրել են երեխայի ձեռքերը: Մայրիկը, պատմելով տղայի մասին, ասում է, որ նա ավելի շատ հորն էր սիրում, իսկ մորը տանել չէր կարողանում՝ սրանով ակնարկելով նրա միասեռական լինելը, ինչը գույգին նույնպես դուր չի եկել: Իսկ պատանի տարիքում նրանք կտրել են տղայի լեզուն՝ մորը վիրավորելու համար: Այսպես, խոշտանգումների ենթարկելով, նրանք սպանել են իրենց որդուն: Իսկ եթե գնված ապրանքը չի համապատասխանում գնորդի սպասելիքներին, այն կամ վերադարձնում են, կամ փոխում: Մայրիկն ու հայրիկն էլ, կանչելով մանկատան տնօրենին, ցանկանում են իրենց որդու դիմաց կամ գումարը վերադարձնել, կամ նորը ստանալ: Սրանով Օլբին ծաղրում է «ամերիկյան երագանք» երևույթը և սպառողական հասարակությունը, որը այնքան անտարբեր է դարձել, որ անգամ արտուրդային թվացող իրավիճակները նրա համար բնական են թվում:

«Ամերիկյան երագանք» պիեսում հանդիպում ենք պոստմոդեռնիզմի գեղագիտական կարևոր հնարներ՝ գրական այլուզիաներ: Այսպես, օրինակ, պիեսում Օլբին ակնարկում է Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգությունը՝ իր կերպարներին

նմանեցնելով Մակբեթին և նրա տիկնոջը:¹³⁵ Նա, կարծես, Շեքսպիրի հերոսներին տեղափոխում է 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկյան հասարակություն և ցույց տալիս, որ մեր ժամանակներում հասարակությունն այնքան է փոխվել, որ Մակբեթը՝ ի դեմս հայրիկի, 20-րդ դարում հանդես է գալիս որպես թուլակամ մի էակ, որին մայրիկը խորամանկությամբ կարողանում է կառավարել: Չի օգնում նաև այն փաստը, որ պիեսի ընթացքում պարզվում է, որ հիվանդության պատճառով հայրիկը ամորձատվել է: Օլբին այդպես է բացատրում այն փաստը, որ նա կորցրել է իր տղամարդկությունը, և կինը դարձել է տան տղամարդը:

Հատուկ ուշադրության է արժանի տատիկի կերպարը, որը առանցքային դեր է կատարում պիեսում: Տատիկի կերպարի մեջ տեսնում ենք երկու նախատիպ: Առաջին նախատիպը Շեքսպիրյան պիեսներից հատկապես «Լիր արքայից» հայտնի խեղկատակի կերպարն է, որին լուրջ չեն ընդունում, ծաղրում են, բայց որը գրեթե բոլոր կերպարներից ամենախելացին է:

Մյուս նախատիպը՝ ռեժիսորի օգնականի կերպարն է: Բանն այն է, որ հենց տատիկն է պիեսի վերջում, երկու անգամ քանդելով չորրորդ պատը, դիմում հանդիսատեսին՝ այսպիսով սովորական կերպարից դառնալով ռեժիսորի օգնական: Ինչպես գիտենք, ռեժիսորի օգնականի կերպարը առաջին անգամ ամերիկյան բեմում 20-րդ դարի սկզբին ներկայացրեց Թորնթոն Ուայլդերը իր «Մեր քաղաքը» պիեսում: Սա մի կերպար էր, որը միտված էր հանդիսատեսի հետ կապ պաշտպանելու, նրան որոշակիորեն ներգրավելու ներկայացման մեջ, ինչպես նաև որոշ բացատրություններ տալու համար: Ռեժիսորի օգնականը պիեսում կարող էր կատարել մի կամ մի քանի դերեր: Այսպիսով՝ Օլբին տատիկի կերպարի մեջ համադրելով երկու կերպարները՝ ցույց է տալիս, որ խեղկատակի կերպարի տրամաբանական զարգացումը 20-րդ դարում տեսնում է ռեժիսորի օգնականի կերպարի մեջ:

Պիեսի վերջում դուռը նորից զանգում են և ներս է մտնում երիտասարդ տղան, որը աշխատանք է փնտրում: Նա այնքան գեղեցիկ է, որ տատիկը միանգամից նրան համեմատում է

¹³⁵Shakespeare W. The Tragedy of Macbeth. Oxford University Press. UK. 1998.

«ամերիկյան երազանքի» հետ՝ այսպիսով կնքելով տղայի անունը «Ամերիկյան երազանք», որն այդպես էլ մնում է մինչև պիեսի ավարտը:

Երիտասարդ տղայի, այսինքն՝ «Ամերիկյան երազանքի» կերպարը Օլբին համեմատում է Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպի գլխավոր հերոսի կերպարի հետ: Երիտասարդ տղան, իր մասին պատմելով տատիկին, ասում է, որ իրեն և իր երկվորյակ եղբորը մոր մահից հետո որդեգրել են, որից հետո այլևս երբեք չի տեսել իր եղբորը: Մեծանալով ինքը հետզհետե զգացել է, թե ինչպես է փոխվում և դատարկվում: Սկզբում նա դադարել է սեր զգալ, հետո վախ զգալ, իսկ այնուհետև մարդուն հարիր բոլոր զգացմունքները դադարել են նրա համար գոյություն ունենալ: Իսկ այժմ նա միայն ձանձրույթ է զգում, քանի որ նրան ոչինչ չի հետաքրքրում: Պատմության ընթացքում տատիկը նրան ինչ-որ մեկին է նմանեցնում, իսկ պատմության ավարտից հետո հասկանում, որ այս տղան իրենց խոշտանգված և մահվան հասցված որդու երկվորյակ եղբայրն է:

Օլբին պոստմոդեռնիստական մետատեքստ է ստեղծում այս պիեսի և Դորիան Գրեյի միջև: Ինչպես գիտենք, Ուայլդի վեպում Դորիան Գրեյը, անբարոյական կյանք վարելով, հոգեպես փոխվում էր, բարոյազրկվում, սակայն նրա արտաքինը նույնն էր մնում: Դրա փոխարեն այլանդակվում էր նրա դիմանկարը: Այսպիսով՝ Օլբիի այս պիեսում երիտասարդ տղան՝ «Ամերիկյան երազանքը», հանդես է գալիս որպես Դորիան Գրեյ, իսկ նրա երկվորյակ եղբայրը՝ մայրիկի և հայրիկի կողմից խոշտանգված և արդյունքում մահացած որդին, հանդիսանում է նրա յուրօրինակ դիմանկարը: Սակայն եթե Ուայլդի վեպում առաջինը Դորիան Գրեյն է փոխվում հոգեպես, որից հետո միայն արտաքինապես փոխվում է նրա դիմանկարը, ապա Օլբին տեղերով փոխում է կերպարները: Օլբին, վերցնելով դասական տեքստը, իր ձևով է այն մեկնաբանում՝ փոխելով իմաստը: Սա կարող է ունենալ որևէ նպատակ կամ կատարվել գուտ ընթերցողի հետ խաղալու համար:

«Ամերիկյան երազանքին» նմանեցնելով Դորիան Գրեյին՝ Օլբին ևս մեկ մարտահրավեր է նետում «ամերիկյան երազանք» երևույթին՝ ցույց տալով, որ որքան Դորիան Գրեյն էր գեղեցիկ, բայց

ներքուստ բարոյագրկված, այնքան էլ «ամերիկյան երագանքն» էր գեղեցիկ թվում, սակայն իրականում ծուղակ էր պարունակում:

Գտնելով իրենց որդու երկվորյակ եղբորը՝ զույգը կատարում է այն, ինչ բնորոշ է սպառողական հասարակությանը. փոխում է իրենց հին ապրանքը նոր ապրանքի հետ: Նրանք որդեգրում են այս նոր տղային: Իսկ տատիկը հեռանում է տնից:

Նշենք, որ այս պիեսում Օլբին կատարում է նաև հետաքրքիր լեզվական բառախաղ: Սկզբում, սպասելով իրենց հյուրին, մայրիկը հարցնում է. «*Ե՞րբ պիտի գա և վերանորոգի ջոնիին*»: Ինչպես գիտենք, Ջոնին՝ Ջոն անվան փառաբշական տարբերակն է, սակայն հեղինակը դիտմամբ այն գրում է փոքրատառով, որպեսզի ընթերցողին շփոթության մեջ գցի և ավելի հասկանչի պիեսի իմաստը: Նա դա անում է, որպեսզի ավելի ընդգծի այն փաստը, որ զույգը իրենց որդուն՝ Ջոնին, վերաբերվում է որպես իրի, առարկայի: Միննույն ժամանակ, կա ևս մի պատճառ, որ Օլբին որդու կերպարի համար ընտրել է հենց այս անունը: ԱՄՆ-ում փողոցում գտնված անանուն արական սեռի ներկայացուցիչներին կամ նրանց դիակները, որոնց ինքնությունն անհնար է պարզել, բայց որոնց անհրաժեշտ է անուն տալ, կոչում են Ջոն Դոու: Սրանից էլնելով՝ խոսակցական ամերիկյան անգլերենում «ջոնի» ասելով, հասկանում են անանուն, անպետք մի էակ, որն էլ հենց համապատասխանում է որդու կերպարին և ծնողների՝ նրա հանդեպ վերաբերմունքին:

Тамара Антонян

**ЛИТЕРАТУРНЫЕ АЛЮЗИИ В ПЬЕСЕ ЭДВАРДА ОЛБИ
«АМЕРИКАНСКАЯ МЕЧТА»**

Вторая пьеса Эдварда Олби “Американская мечта” является поэтичным изображением США в эпоху потребительства эры Кенедизма. Эта статья является попыткой показать использование литературных аллюзий, которые присущи постмодернизму, таким образом, обозначая переход от театра абсурда к постмодернизму в работах автора.

Tamara Antonyan

**THE USE OF LITERARY ALLUSIONS IN «THE AMERICAN
DREAM» BY EDWARD ALBEE**

Edward Albee's second play called 'The American Dream' is a poetic representation of the USA during the Kennedy era Consumerism. This article is an attempt to show the use of literary allusions in the play, which are inherent in Postmodernism, thus denoting the transition from the Theatre of Absurd to Postmodernism in the works of the author.

*ԲելաՄարգարյան
Գայանե Եղիազարյան*

**«ՄԵՐ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-
ԳՈՐԾՍԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ Ֆ.Ս.ՖԻՑՋԵՐԱԼԴԻ
«ԳԻՇԵՐՆ ԱՆՈՒՅՇ Է» ՎԵՊԻ ԲՆԱԳՐՈՒՄ և ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ինչպես հայտնի է, գեղարվեստական տեքստն ուղղված է ընկալողի գիտակցության մեջ «հնարավոր» աշխարհների ստեղծմանը, որոնք արտահայտում են մարդու հոգևոր ներաշխարհը: Այս առումով աշխարհի պատկերման հարցում չափազանց կարևոր է, թե մարդկային միտքն ուղղված է իրեղեն, թե՞ հոգևոր աշխարհի օբյեկտներին: Ժամանակակից լեզվաբանական դրույթները ոչ միայն համահունչ են միմյանց, այլև առաջ են քաշում լեզվի մարդակենտրոն ուսումնասիրության միտումը: Սա հիմք է տալիս խոսել տեքստի բազմակողմանի ընկալման և մեկնաբանության մասին:

Ժամանակակից լեզվաբանությունում թարգմանությունը ընկալվում է որպես հաղորդակցման գործընթաց, որը բնորոշվում է քերականական, իմաստային և գործաբանական կապերի բարդ համակարգով: Թարգմանության գործընթացում կարևոր նշանակություն ունեն բովանդակության ոչ միայն անվանողական և հավելիմաստային բաղադրիչները, այլև գործաբանական բաղադրիչը, որը կանխորոշվում է լեզվական արտահայտման և հաղորդակցության մասնակիցների միջև փախհարաբերությամբ:

Գործաբանական հայեցակերպի կարևորությունը, ըստ Ա. Դ. Շվեյցերի՝ «...պայմանավորված է հասարակական փորձում, ինչպես նաև տարբեր լեզվական հանրույթների լեզվամշակութային սովորույթներում գոյություն ունեցող տարբերություններով»:¹³⁶

Ինչպես Ա.Ա. Վորոժբիտովան է փաստում՝ «Ժամանակակից գիտությունը և հատկապես ճանաչողական լեզվաբանությունը ուսումնասիրում է երևույթներ, որոնք առաջանում են

¹³⁶ Швейцер А. Д., Перевод и лингвистика, М., Воениздат, 1973, с.65.

լեզվաճանաչողական մակարդակում մտքից դեպի խոսք անցման շրջանում»:¹³⁷

Հեղինակը նաև նշում է, որ ճանաչողական լեզվաբանության նվաճումներից են.

1. աշխարհի պատկերման ճանաչողական ուսումնասիրությունը, որտեղ նրա լեզվական պատկերը հանդես է գալիս որպես հիմնական բաղադրիչ,

2. տեսությունը հասկացությունների մասին, որոնք հանդես են գալիս՝ որպես աշխարհի պատկերման բաղադրիչներ:¹³⁸

Իսկ ինչպես Մ.Գ. Վորկայովն է նշում՝ «Հասկացությի արժեքային հատկանիշը բնորոշվում է կոնկրետ լեզվի բառաքերականական համակարգում տվյալ հասկացությի զբաղեցրած տեղով, ուր ներկայացվում են նրա ստուգաբանական և գուգորդային հատկանիշները»:¹³⁹

Շատ հետազոտություններ էլ խարսխվում են այն պատկերացումների վրա, որ մեր գիտելիքները համակարգվում են որոշակի կառույցների՝ ճանաչողական կաղապարների միջոցով:¹⁴⁰

Կարևորելով թարգմանության ժամանակ գեղարվեստական տեքստի իմաստային և ոճական կառուցվածքի պահպանման, ինչպես նաև ճանաչողական փոխաբերության մեկ լեզվից մյուսը համարժեք վերարտադրման խնդիրը՝ սույն հոդվածում փորձում ենք մեր ուսումնասիրության շրջանակներում ներառել այնպիսի գործոններ, ինչպիսիք են անվանողական և ճանաչողական/գործաբանական բաղադրիչները, որոնք էլ իրենց հերթին պահանջում են թարգմանական մեկնաբանություն, որն էլ կարող է հանգել նաև հասկացական մեկնաբանման: Հասկացական

¹³⁷ Ворожбитова А.А., Теория текста: Антропоцентрическое направление, М., Высшая школа, 2005, с. 39-40.

¹³⁸ Նույն տեղում, էջ 41-42 .

¹³⁹ Воркачев С. Г., Методологические основания лингвоконцептологии // Теоритическая и прикладная лингвистика, Воронеж, 2002, с. 25.

¹⁴⁰ Lakoff G., Johnson M. Metaphors We Live by, Chicago: The University of Chicago Press, 2003.

մեկնաբանության համար կարևորվում են նաև տեքստի իմաստային կառուցվածքը կազմող տարբեր իմաստային և ոճական բաղադրիչները, ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններ:

Կարելի է փաստել, որ գրեթե յուրաքանչյուր մշակույթում գոյություն ունեն տարբեր հույզեր և զգացմունքներ արտահայտող այնպիսի համընդհանուր հասկացություններ, ինչպիսիք են **սերը, հավատը, վախը, աստելությունը, ուրախությունը** և այլն: Մակայն նույնիսկ նման համընդհանուր և գրեթե նույնատիպ իմաստային լիցքով հազեցած հասկացությունները կարող են ունենալ ոչ միայն համարժեք, այլև միանգամայն տարբեր իմաստային նրբերանգներ տարբեր լեզուներում, և չափազանց հետաքրքիր նյութ լինել գուգադրական քննության և համարժեք թարգմանության հիմնահարցերի վերլուծության համար: Նման հասկացությունների ճանաչողական արժեքը վերհանելը և դրանք որպես ճանաչողական փոխաբերության հիմնանյութ ուսումնասիրելը, առավել ևս՝ կոնկրետ հեղինակի աշխարհընկալման և աշխարհապատկերման անհատական դիտակետից, առավել հետաքրքրական է և արդիական:

Սերը մարդուն բնորոշ զգացմունք է, խորը, անձնուրաց նվիրվածություն այլ մարդու կամ օբյեկտի նկատմամբ: Շատ ու շատ հանճարեղ մարդիկ, փիլիսոփաներ ու հոգեբաններ, կրոնական մտածողներ ու ստեղծագործական տարբեր ոլորտների ներկայացուցիչներ փորձել են վերծանել սիրո մեծագույն գաղտնիքը, մարդկային կյանքի մեծագույն հանելուկը: Մակայն մինչ այժմ գոյություն չունի սիրո՝ բոլորի համար ընդունելի բնորոշում: Սիրո ամենահայտնի տիպաբանությունը պատկանում է կանադացի հոգեբան և սոցիոլոգ Ջոն Ալլան Լիին, որը նկարագրել է սիրո վեց տեսակ՝ դրանք անվանելով հունական տերմիններով **ագապե, ստորգե, պրագմա, մանիա, լուդուս, էրոս**:¹⁴¹ Սիրո այս տեսակները մասամբ կախված են հասարակության մշակութային

¹⁴¹<http://www.harmonia.am/articles>.

նորմերից, մարդու խառնվածքից, նրա հոգևոր հասունության մակարդակից, ինչպես նաև դաստիարակությունից:

Մեքը համաշխարհային մշակույթի և արվեստի հիմնարար թեմաներից մեկն է: Սիրո մասին մտորումները, **սեք** հասկացության բարդությունն ու բազմաշերտ բնույթը հանգեցրել է տարբեր լեզուներում և մշակույթներում այդ երևույթի բազմաթիվ մեկնաբանությունների:

Սույն հոդվածում ուսումնասիրվում է **սեք** հասկացությունը և դրա բառայնացման որոշ օրինակներ Ֆ. Ս. Ֆիցջերալդի «Գիշերն անույշ է» վեպի բնագրում և հայերեն թարգմանության մեջ: Դիտարկվում է **սեք** հասկացության ճանաչողական տարբեր գուգորդումներն անգլերենում և հայերեն թարգմանության մեջ այդ կաղապարների և դրանք առկայացնող լեզվառճական միջոցների պահպանման խնդիրը:

Մեք բառն անգլերեն բառարաններում սահմանվում է որպես՝ 1. a strong feeling of deep affection for somebody/something, especially a member of your family or a friend, 2. a strong feeling of affection for somebody that you are sexually attracted to, 3. the strong feeling of enjoyment that something gives you, 4. a person, a thing or an activity that you like very much, 5. a great interest and pleasure in something: Մեր հասկացությունն ամրագրված է հետևյալ բառային միավորներով՝ **love, affection, fondness.**

Հայերենի բացատրական բառարաններում **սեք** բառի սահմանումները հետևյալն են՝ 1. գորովանքի, կապվածության խոր զգացում մեկի, մի բանի նկատմամբ, 2. հակառակ սեռի ներկայացուցչի նկատմամբ տաժվող համակրանքի բնական ուժեղ զգացում, բուռն զգացմունք՝ ձգտում, 3. սիրային հարաբերություն, կապ, 4. համակրանքի հարգանքի զգացմունք մեկի նկատմամբ, 5. հետաքրքրություն, որևէ բանի հակում, ձգտում, 6. սիրելի անձ, 7. որևէ բանի մոլություն, 8. միմյանց նկատմամբ ունեցած բարեկամական ու համերաշխ հարաբերություն՝ վերաբերմունք, 9. սիրելը, սիրահարվելը, սիրահարություն, 3. սիրո հաճույք, սեռական ցանկություն: Հայերենում սեք բառն առկայանում է հետևյալ բառային միավորներով՝ **սեք, սիրահարվածություն, կապվածություն, մտերմություն.**

Սույն հոդվածում ուսումնասիրվում է *սեք* հասկացությունը և դրա բառայնացման որոշ օրինակներ Ֆ. Ս. Ֆիցջերալդի «Գիշերն անույշ է» վեպի բնագրում և հայերեն թարգմանության մեջ: Դիտարկվում է *սեք* հասկացության ճանաչողական տարբեր գուգորդումներն անգլերենում և հայերեն թարգմանության մեջ այդ կաղապարների և դրանք առկայացնող լեզվատճական միջոցների պահպանման խնդիրը:

Փոխաբերական կաղապարների թարգմանության հնարների համարժեք թարգմանության խնդիրը կիրառենք գործնականում՝ վերլուծելով Ֆ. Ս. Ֆիցջերալդի «Գիշերն անույշ է» վեպի (տե՛ս Fitzgerald 1933) և դրա՝ Ս. Սեֆերյանի կողմից կատարված հայերեն թարգմանության (տե՛ս Ֆիցջերալդ 1981) մի շարք օրինակներում:

1. In her mother's lap afterward Rosemary **cried and cried**.

"I love him, Mother. I'm **desperately in love with him**—I never knew I could feel that way about anybody. And he's married and I like her too—it's just hopeless. Oh, I love him so!"(p. 22).

Որոշ ժամանակ անց Ռոզմարին , գլուխը մոր ծնկներին դրած, հուսահատ արտասվում էր:

-Ես սիրում եմ նրան, մայրիկ:Խելքս գնում է նրա համար: Երբեք չէի կարծում, որ այդպիսի զգացումը կարող եմ ունենալ որևէ մեկի հանդեպ:Իսկ նա ամուսնացած է և ունի սիրուն կին :Ի՞նչ անեմ, մայրիկ: Որ իմանաս, ինչքա՛ն եմ նրան սիրում(էջ 218-219).

Նկատենք, որ այս օրինակում առկայանում է ոչ միայն *Սերը օրենքներ չի ճանաչում* գաղափարը, այլև *Սերը տառապանք է* ճանաչողական փոխաբերությունը, որոնք հանդես են գալիս հետևալ հատվածներով **Rosemary cried and cried, I'm desperately in love with him , and he's married and I like her too—it's just hopeless**. Հարկ է նշել, որ մեր պատկերացմամբ հաջող է թարգմանված **cried and cried** բառակապակցությունը, քանի որ թարգմանիչը հավելել է **հուսահատ** մակբայը՝ դրանով ուժեղացնելով տվյալ հատվածի հուզականությունը: Շատ տիպիկ է ընտրված նաև **I'm desperately in love with him**-ի համար **խելքս գնում է նրա համար** ամբողջական փոխակերպված տարբերակը, քանի որ այն հայերենի

լեզվամտածողության մեջ ամրագրված համարժեք արտահայտություն է: Համամիտ չենք բնագրի **and I like her too** հատվածը **և ունի սիրուն կին** թարգմանական տարբերակով փոխարինելու հետ: Բնագրի հեղինակը այդ արտահայտությամբ ևս մեկ անգամ ընդգծում է Ռոզմարիի հուսահատությունը և կարծում ենք արժեք դա նույնությամբ վերստեղծել հայերենում՝ պահպանելով հեղինակի հաղորդակցական միտումը: Բնագրի այս օրինակից պարզ է, որ Ռոզմարին, հուսահատ վիճակում գտնվելով, նետվում է մոր գիրկը սփոփվելու: Ըստ այդմ, տեղին ենք համարում ամբողջական փոխակերպում հնարի միջամտությունը **it's just hopeless** նախադասության թարգմանության ընթացքում՝ **Ինչ անես, մայրիկ**, որը լրացուցիչ հուզականություն է առաջացնում հայ ընթերցողի մոտ: Նույն նպատակին է ծառայում նաև **Oh** ձայնարկության փոխարինումը **Որ իմանաս** արտահայտությամբ:

2. She looked up at him as he took a step toward the door; she looked at him without the slightest idea as **to what was in his head**, she saw him take another step in slow motion, turn **and look at her again**, and she **wanted for a moment to hold him and devour him, wanted his mouth, his ears, his coat collar, wanted to surround him and engulf him; she saw his hand fall on the doorknob** (p. 66).

Ռոզմարին բարձրացրեց գլուխը և տեսավ, թե ինչպես Դիքը մի քայլ արեց դեպի դուռը: Աղջիկը նայում էր նրան առանց նվազագույն պատկերացման, թե ինչ էր կատարվում նրա հոգում: Դիքը ևս մի քայլ արեց դանդաղ, հետո շրջվեց, և մի պահ Ռոզմարին ցանկացավ գրկել նրան, խժոռել նրան, ցանկացավ անհագորեն համբուրել նրա շուրթերը, ականջները, զգալ, շոշափել նրա բաճկոնի օձիքը, ցանկացավ պարուրել նրան ու կլանել, բայց արդեն ուշ էր, Դիքը ձեռքը դրեց բռնակին(էջ 267-268):

Ամբողջ հատվածը նկարագրում է Ռոզմարիի բուռն սերը: Այս օրինակում ուշագրավ է **as to what was in his head** արտահայտության թարգմանությունը: Հայերեն տարբերակում **head** բառը փոխարինվել է **հոգում** բառով, որն առավել ուժգնացրել է բնագրի ճանաչողական-գործաբանական արժեքը: Կարծում ենք, վերոնշյալ հատվածը կարելի էր թարգմանել՝ **թե ինչ կար նրա**

մտքին, սակայն **միտք** բառը հայերենում **սիրտ** բառով փոխարինելն արդարացված է, քաի որ հայերի համար սերը հիմնականում հոգու և ոչ թե մտքի արտահայտություն է: Նկատենք, որ բնագրում գործածված **and look at her again** հատվածը հայերեն տարբերակում բացակայում է, որը մեղմացնում է տվյալ պահի այն հուզականությունը, զգացմունքների փոթորիկը, որը ստեղծել է բնագրի հեղինակը: **Wanted his mouth, his ears, his coat collar, wanted to surround him and engulf him;she saw his hand fall on the doorknob/ ցանկացավ անհագորեն համբուրել նրա շուրթերը, ականջները, զգալ, շոշափել նրա բաճկոնի օձիքը, ցանկացավ պարուրել նրան ու կլանել. քայց արդեն ուշ էր, Դիքը ձեռքը դրեց բռնակին** հատվածներն առկայացնում են **Մերը կիրք է** ճանաչողական փոխաբերությունը: Հայերեն տարբերակում **wanted his mouth, his ears** հատվածը համալրվել է **անհագորեն համբուրել** բառակապակցությամբ, ինչպես նաև **mouth** գոյականի թարգմանության ընթացքում օգտագործվել է կոնկրետացում հնարը՝ **շուրթերը, his coat collar** բառակապակցությունը համալրվել է **զգալ, շոշափել** բայերով, որոնց շնորհիվ թարգմանական տարբերակում վերստեղծվել է նույն զգացական պատկերը, որն առկա է բնագրում: Վերոնշյալ հատվածի հայերեն տարբերակում թարգմանիչը հավելել է նաև **քայց արդեն ուշ էր** նախադասությունը՝ դրանով ստեղծելով նաև **Մերը տառապանք է** ճանաչողական փոխաբերությունը, որով պահպանվել է հեղինակի գործաբանական/հաղորդակցական միտումը:

3. **When she saw him face to face their eyes met and brushed like birds' wings.** After that everything was all right, everything was wonderful, she knew that he was beginning to fall in love with her. **She felt wildly happy**, felt the warm sap of emotion being pumped through her body. **A cool, clear confidence deepened and sang in her.** She scarcely looked at Dick but she knew everything was all right (p. 68).

Եվ երբ Դիքի հետ դեմ առ դեմ ելավ, նրանց հայացքները հանդիպեցին ու շոյեցին միմյանց թռչունների թևերի նման: Դրանից հետո ամեն ինչ կարգին էր, ամեն ինչ հիանալի: Ռոզմարին հասկացավ, որ Դիքն արդեն սիրահարվել էր իրեն: Նրան սիրեց

անասելի երջանկություն, և զգացմունքի ջերմ հոսք տարածվեց ամբողջ մարմնով մեկ: Մի ինչ-որ գրնգուն, ինքնավստահ ձայն թափ առնելով երգեց նրա ներսում: Նա համարյա չէր նայում Դիքին, բայց գիտեր, որ ամեն ինչ կարգին է (էջ 270):

Այս հատվածի պատկերավորությունը հիանալի կերպով վերստեղծվել է հայերենում: Բնագրի **their eyes met** հատվածի հայերեն թարգմանության մեջ **eyes** գոյականը փոխարինվել է **հայացքները** գոյականով, որը թարգմանվածքում համարժեքորեն վերստեղծել է բնագրի այդ բառի գործաբանական արժեքը: **Մերն** այս օրինակում առկայացել է սիրահարների հայացքների հանդիպումը թռչունների թևերի շոյանքի հետ համեմատելու միջոցով: Հետևյալ հատվածում առկայանում է նաև **Մերը զգացումների հորձանուտ** է ճանաչողական փոխաբերությունը: Թարգմանչին հաջողվել է ամբողջական փոխակերպման շնորհիվ պահպանել **she felt wildly happy** նախադասության հաղորդակցական արժեքը՝ հայերենում ընտրելով **նրան սիրեց անասելի երջանկություն** տարբերակը: **A cool, clear confidence deepened and sang in her** նախադասության հայերեն տարբերակում տեղի է ունեցել խոսքիմասային փոխակերպում՝ **confidence** գոյականը փոխարինվել է **ինքնավստահ** ածականով և համարել տվյալ հատվածի մակդիրների շարքը, ինչպես նաև տեղի է ունեցել բառային փոխհատուցում՝ հավելվել է **ձայն** գոյականը: **A cool, clear confidence** բառակապակցությունը թարգմանելիս օգտագործվել է կրճատում հնարը: Բնագրի **cool, clear** ածականներից ոչ մեկն առանձին չէր կարող հայերենում արտահայտել անզլերեն տարբերակում ամրագրված իմաստը, ուստի այդ երկու ածականների համաձուլումը, որն ունենք հայերեն տարբերակում՝ **գրնգուն**, փոխանցում է այդ ածականների ճանաչողական-գործաբանական արժեքը և միանգամայն արդարացված է:

4. He saw Rosemary for the first time that morning. They exchanged glances, trying to recognize the emotions of the day before. For a moment each seemed unreal to the other—then the slow warm hum of love began again (p. 84).

Այդ առավոտ Դիքն առաջին անգամ էր տեսնում Ռոզմարիին: **Նրանք հայացքներ փոխանակեցին, փնտրելով նախորդ օրվա զգացմունքների հետքերը: Մի պահ նրանց թվաց, թե ոչինչ էլ չէր եղել, բայց անմիջապես սկսվեց սիրո դանդաղ, ջերմ բզզոցը** (էջ 287):

Այս օրինակում սերն առկայացել է **exchanged glances, the slow warm hum of love** լեզվական միավորների միջոցով: Հայերեն օրինակում **փնտրելով նախորդ օրվա զգացմունքների հետքերը** հատվածում հանդիպում ենք բնագրի **trying to recognize** հատվածի կրճատման և բառային փոխակերպման հնարներին՝ **փոխանակեցին: The emotions of the day** բառակապակցության թարգմանության մեջ թարգմանչական խնդիրները հաղթահարելու միտումով թարգմանիչը դիմել է բառային փոխհատուցման հնարի օգնությանը՝ հավելելով **հետքերը** գոյականը, որը նպաստում է բնագրի հաղորդակցական արժեքի լիարժեք փոխանցմանը, այլապես թերի կհնչեր՝ **նախորդ օրվա զգացմունքները** բառակապակցությունը: Հայերեն թարգմանության **Մի պահ նրանց թվաց, թե ոչինչ էլ չէր եղել** հատվածի համար կառաջարկեինք՝ **Մի պահ նրանց թվաց, թե օտար էին միմյանց** տարբերակը, որն ավելի ուժգին հուզական երանգ է պարունակում: Վերոնշյալ օրինակում **սերն** առկայացել է նաև **then the slow warm hum of love began again** փոխաբերության միջոցով, որը նույնությամբ վերստեղծվել է հայերեն տարբերակում:

5. She smiled at him, making sure that the smile gathered up everything inside her and directed it toward him, **making him a profound promise of herself for so little, for the beat of a response, the assurance of a complimentary vibration in him.** Minute by minute the sweetness drained down into her out of the **willow trees**, out of the dark world (p.136).

Նա ժպտաց Դիքին, փորձելով ամփոփել հոգում եղածը այդ ժպտի մեջ և իր անձը անշահախնդրորեն տալով պահանջում էր շատ քիչ բան՝ մի պատասխան աւձագանք, մի փոխադարձ սրտի բարբախյուն: Ըոպե առ ըոպե **ուռենիների** և դրսի մուրթ աշխարհի քաղցրությունը ներարկվում էր Նիքոլի արյան մեջ (էջ 170):

Այս օրինակում ուշագրավ է հատկապես **making him a profound promise of herself** հատվածի թարգմանությունը, որտեղ կատարվել է հականիշային թարգմանություն, խոսքիմասային փոխակերպում, ինչպես նաև կրճատում՝ **profound promise/անշահախնդրորեն**: Նույն հատվածում տեղի է ունեցել նաև ընդլայնում, հավելվել է *պահանջում էր* ստորոգյալը: Թարգմանչական մի քանի հնարներ են գործածվել նաև հետևյալ հատվածի թարգմանության ժամանակ՝ **for the beat of a response, the assurance of a complimentary vibration in him/ մի պատասխան արձագանք, մի փոխադարձ սրտի բաբախյուն**, որտեղ **beat** գոյականը փոխարինվել է *արձագանք* գոյականով, այսինքն տեղի է ունեցել բառային փոխակերպում, իսկ **the assurance of a complimentary vibration in him** հատվածի հայերեն տարբերակն ամբողջական փոխակերպման վառ օրինակ է: Այս օրինակի վերջին նախադասության մեջ ևս առկայանում է **սեր** հասկացությունը՝ նկարագրելով սիրահարված էակի զգայունությունը արտաքին աշխարհի նկատմամբ, որը դրսևորվել է փոխաբերության միջոցով:

6. **The voice fell low, sank into her breast** and stretched the tight bodice over her heart as she came up close. He **felt the young lips, her body sighing in relief against the arm growing stronger to hold her**. There were now no more plans than if Dick had arbitrarily made some indissoluble mixture, with atoms joined and inseparable; you could throw it all out but never again could they fit back into atomic scale. As **he held her and tasted her**, and as she **curved in further and further toward him, with her own lips, new to herself, drowned and engulfed in love, yet solaced and triumphant, he was thankful to have an existence at all, if only as a reflection in her wet eyes**.

"My God," he gasped, "you're fun to kiss."

That was talk, but Nicole had a better hold on him now and she held it; she turned coquette and walked away, leaving him as suspended as in the funicular of the afternoon. She felt. There, that'll show him, how conceited; how he could do with me; oh, wasn't it wonderful! **I've got him, he's mine**. Now in the sequence came flight, but it was all so sweet and new that she dawdled, wanting to draw all of it in (p. 154-155).

Չայնը նվաղեց, ընկավ կրծքի խորքը, ձգելով այն սեղմիրանի տակ, երբ աղջիկն առաջ եկավ: Նա այժմ այնքան մոտ էր կանգնած, որ Դիքը պրկեց բազուկը նրան պահելու, բայց այդ պահին զգաց նրա հանդարտված մարմնի և մատողաշ շուրթերի հպումը: Այժմ այլևս ծրագրեր չէիր կազմի, բացի նրանցից, որ քեզնից անկախ կազմել էս: Դիքը անբաժան մասնիկներով մի անլուծելի խառնուրդ էր միացրել, այն թափել հնարավոր էր, բայց մասնատել՝ երբեք: Երբ Դիքը նրան գրկած ճաշակում էր, Նիքոլն ավելի ու ավելի էր սեղմվում իր շուրթերով, ինքն իրեն չճանաչելով, մխրճված սիրո մեջ, սփռված ու հաղթական: Նա զգաց, որ ինքը գոյություն ունի միայն որպես արտացոլում աղջկա խոնավ աչքերի մեջ և դրա համար երախտապարտ էր նրան:

- Աստված ծ իմ,-հնաց նա,-աստվածային բան է քեզ համբուրելը:

Դա խոսք էր միայն, բայց այժմ Նիքոլը իշխում էր նրա վրա և կառչեց դրանից: Նա պչրուհու պես առաջ անցավ, թողնելով նրան օդում կախված՝ ցերեկը ճամփի եզրին կանգնած ձուպանուղու վագոնի նման: Նիքոլը մտածում էր. «Լավ եղավ, թող սա նրան դաս լինի անխղճության, ինձ տանջելու համար: Ա՛յ քեզ հրաշք: Ես նրան բռնեցի, նա իմն է»: Եվ որպես օրենք, այդ բոլորի շարունակությունը փախուստը պետք է լիներ, սակայն ամեն ինչ այնքան քաղցր էր ու նոր, որ աղջիկը դանդաղում էր՝ ցանկանալով ըմպել մինչև վերջին կաթիլը (էջ 189-190):

Հետևյալ նախադասության **felt the young lips, held her and tasted her, she curved in further and further toward him, drowned and engulfed in love** հատվածներն առկայացնում են **Սերը կիրք է** գաղափարը: Առաջին նախադասության **fell low/նվաղեց** հատվածի թարգմանության մեջ օգտագործվել է կրճատման հնարը, **sank into her breast/ ընկավ կրծքի խորքը** հատվածում ակներև է ընդլայնման հնարի գործածությունը. հավելվել է **խորքը** բառը: Սակայն համամիտ չենք տվյալ հատվածի թարգմանության հետ, քանի որ այն բառացի է հնչում, և կառաջարկեինք այդ հատվածը փոխարինել հետևյալ՝ **Չայնը նվաղեց, հուզմունքից կտրվեց** նախադասությամբ:

Stretched the tight bodice over her heart/ ձգելով այն սեղմիրանի տակ հատվածի հայերեն տարբերակում զեղչված է **her**

heart բառակապակցությունը, որը վկայում է կրճատման հնարի օգտագործման մասին, ինչպես նաև **tight bodice** բառակապակցության հայերեն տարբերակը կրճատման հնարի գործածության արդյունք է: Այս հատվածում ակնհայտ է նաև քերականական փոխակերպման նախադասությունների միավորման ...*as she came up close. He felt the young lips, her body sighing in relief against the arm growing stronger to hold her/ էրբ աղջիկն առաջ եկավ: Նա այժմ այնքան մոտ էր կանգնած, որ Դիքը պրկեց բազուկը նրան պահելու, բայց այդ պահին զգաց նրա հանդարտված մարմնի և մատղաշ շուրթերի հպումը:* Վերոնջյալ նախադասության **the arm growing stronger/ պրկեց բազուկը** հատվածում թարգմանիչը միաժամանակ գործածել է բառային փոխակերպման և կրճատման հնարները, և կարծում է նրան հաջողվել է իմաստային համարժեքություն պահպանել, քանի որ բացատրական բառարաններում *պրկել* բայը սահմանվում է որպես **պինդ, ուժգին սեղմել, լարել:** Ինչ վերաբերում է **grow** բառին, ապա այն թարգմանված տարբերակում պահպանել է իր գործաբանական արժեքը: Բառային փոխակերպման և կրճատման հնարներն է օգտագործվել նաև **sighing in relief** բառակապակցությունը թարգմանելիս՝ *հանդարտված:* Հետևյալ հատվածի **curved in further and further toward him, with her own lips** հայերեն տարբերակում բառային փոխակերպման արդյունք է **curved** բայի *սեղմվում* թարգմանությունը: Այդ հատվածում առկա է նաև կրճատման հնարի գործածությունը, բնագրի այդ հատվածից բաց է թողնված **toward him** բառակապակցությունը, ինչպես նաև **own** ածականը: Թարգմանիչը **new to herself/ ինքն իրեն չճանաչելով** հատվածը թարգմանելիս միաժամանակ դիմել է բառային փոխակերպման և հականիշային թարգմանության հնարներին: Կրճատման հնարի օրինակ է **drowned and engulfed in love/ մխրճված սիրո մեջ** հատվածի թարգմանությունը, որը տեղին է նաև համարում, քանի որ **drowned and engulfed** բառակապակցության իմաստը փոխանցվել է *մխրճված* բառի միջոցով: Այս օրինակի "My God," he gasped, "you're fun to kiss" նախադասությունն առկայացնում է *Մերը աստվածային զգացմունք է* ճանաչողական փոխաբերությունը, որն ավելի բարեհունչ է

թարգմանված տարբերակում՝ *Աստված իմ,-հեաց նա,-աստվածային քան է քեզ համբուրելը*, որտեղ **fun** բառը փոխակերպվել է *աստվածային* բառով: Տեղին ենք համարում այս բառային փոխակերպումը, քանի որ այն ուժգնացրել է սիրո դրսևորումը: Միրո վառ դրսևորում է նաև **Nicole had a better hold on him now and she held it** հատվածը, որի թարգմանված տարբերակում նկատելի է կրճատման հնարի օգտագործումը՝ **had a better hold on/իշխում էր: I've got him, he's mine** նախադասությունն առկայացնում է *Մերը սեփականատիրության զգացում է* ճանաչողական փոխաբերությունը, որի հայերեն տարբերակի հետ այդքան էլ համամիտ չենք և , հետևաբար, կնախընտրեինք *ես նրան բռնեցի* հատվածը փոխարինել *նա ինձ է պատկանում* թարգմանությամբ:

Այսպիսով, զգացմունք ցույց տվող **սեր** հասկացությունը Ֆ. Ս. Ֆիցցերալդի «Գիշերն անույշ է» վեպում առկայացել համատեքստի և մի շարք ճանաչողական փոխաբերությունների միջոցով: Նշված հասկացության առկայացմանը մեծապես նպաստել են նաև **սեր** բառի հոմանիշները, ոճական տարբեր հնարների՝ մակդիրների, փոխաբերությունների և համեմատությունների գործածությունը: Թարգմանչի խնդիրն է ըմբռնել հեղինակի աշխարհայացքը, ապա փորձել համարժեքորեն վերատեղծել այդ ամենը թարգմանության լեզվում: Հայերեն թարգմանված տարբերակում նույնպես առկա են այս ճանաչողական փոխաբերությունների /*Մերը տառապանք է, Մերը կիրք է, Մերը աստվածային զգացմունք է, Մերը զգացմունքների հորձանուտ է, Մերը աստվածային զգացմունք է, Մերը օրենքներ չի ճանաչում, Մերը սեփականատիրության զգացում է/* և այլն, ինչպես նաև ոճական հնարների համարժեք թարգմանությունների ներկայանալի նմուշներ: Իհարկե, հնարավոր է, որ աղբյուր լեզվի այս կամ այն բառը կամ բառակապակցությունը չունենա փոխաբերական նույն նրբերանգը թարգմանող լեզվում, ուստի թարգմանչի խնդիրն է եղել ընտրել լեզվական այնպիսի միավորներ, որոնք հարագատ մնալով բնագրի ոգուն՝ միաժամանակ նույն գործաբանական/ճանաչողական ազդեցությունն են թողնում թիրախ լեզվում:

Бела Маргарян, Гаяне Егиазарян

**КОГНИТИВНО-ПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
ВОСПРИЯТИЯ ПОНЯТИЯ «ЛЮБОВЬ» В РОМАНЕ
Ф.С.ФИЦДЖЕРАЛЬДА «НОЧЬ НЕЖНА» И В ЕГО АРМЯНСКОМ
ПЕРЕВОДЕ**

В статье рассматриваются когнитивно-прагматические особенности, концептуальные и ценностные составляющие понятия «Любовь» в романе Ф.С.Фицджеральда «Ночь нежна», а также концептуальные метафоры, лингвистические средства их актуализации и адекватность армянского перевода.

Bela Margaryan, Gayane Yeghiazaryan

**COGNITIVE –PRAGMATIC PERCEPTIONS OF THE NOTION
OF *LOVE* IN THE NOVEL “ TENDER IS THE NIGHT” BY F. S.
FITZGERALD AND IN ITS ARMENIAN TRANSLATION.**

The article touches upon some peculiarities of perception of the notion of *Love* in the novel “ Tender is the Night” by F. S. Fitzgerald and in its Armenian translation. It aims at revealing the conceptual and value constituents of the notion of *Love* in English, some cognitive metaphors the emotion verbalizes, the linguistic means of its actualization and the equivalence of their translation into Armenian.

«ՄԿԶԲԻ» ԵՎ «ՎԵՐԶԻ» ԽՆԴԻՐԸ ԹԻՆԳՉՓԻԼԵՐՈՒՄ

(Ռ. Օյրինգերի «Գերմանիայի չարչարանքները 1933» և Է.Վ. Մյուլլերի «Ֆրանկենբուրգյան գառախաղը» թինգզփիլերի օրինակներով)

Հոդվածի նպատակն է թինգզփիլերի «սկզբի» և «վերջի» վերլուծության միջոցով ցույց տալ, թե ինչպես են նացիստները ներկայացնում Երրորդ Ռայխի հաստատումը ժողովրդին իրենց համախոհ դարձնելու համար: Վերլուծությունը հիմնվում է երկու թինգզփիլերի՝ Ռիխարդ Օյրինգերի «Գերմանիայի չարչարանքները 1933»-ի (*Deutsche passion 1933*) և Էբերհարդ Վոլֆգանգ Մյուլլերի «Ֆրանկենբուրգյան գառախաղի» (*Das Frankfurter Würfelspiel, 1936*) վրա:

«Գերմանիայի չարչարանքները 1933» թինգզփիլը ի սկզբանե գրվել է որպես ռադիոդրամա, այնուհետև վերատպվել որպես թինգզփիլ: Այն նացիստական առաջին դրաման է, որ ստացել է «թինգզփիլ» անվանումը Համաձայն հեղինակի տվյալների՝ ռադիոդրաման ուրվագծվել է 1932 թ. Մուրբ Օննդին և պատրաստ է եղել 1933 թ. մարտի սկզբին: Այն Առաջին անգամ հեռարձակվել է Գերմանիայի բոլոր ռադիոկայաններով 1933 թ. ապրիլին՝ Ավագ հինգշաբթի օրը, «Ազգի ժամը» ծրագրի շրջանակում:

Թինգզփիլի վերնագիրն արդեն իսկ ցույց է տալիս, որ այն պետք է ընկալվի Քրիստոսի չարչարանքների պատմությանը զուգահեռ: «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգզփիլը, Ավագ հինգշաբթի օրը հեռարձակելով, գերմանական ռադիոկայանները, ըստ էության, հանդես են գալիս որպես «առաքելության» գործիք՝ ժողովրդին գերմանիայի չարչարանքների ու հարության մասին հայտնելով, ինչպես Քրիստոսն է Ավագ հինգշաբթի օրն իր աշակերտներին հայտնում սեփական խաչելության և Զատիկի մասին: Քրիստոսի չարչարանքների և հարության զուգահեռը ավելի է ընդգծվում երեսուներեք թվի շնորհիվ (որը պատահաբար համընկնում է): Ինչպես Քրիստոսը երեսուներեք տարեկանում կրում է իր չարչարանքները և հարություն առնում, այնպես էլ

Գերմանիան, 1933 թվականին չարչարանքների մեջ լինելով, «հարություն» է առնում՝ վերածվելով Երրորդ Ռայխի:

«Գերմանիայի չարչարանքները 1933» թինգզփիլը սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտով և «չար ոգու» իշխանության հաստատմամբ, որը խորհրդանշում է Վայմարյան Հանրապետության «անհաճո ժամանակի ոգին» և ավարտվում «Բարի ոգու» հաղթանակով և Երրորդ Ռայխի հաստատմամբ: «Երրորդ ռայխ» հասկացությունը ծագում է Յոախիմ ֆոն Ֆիորեի և միջնադարյան այլ աստվածաբանների աշխարհի վերջի մասին պատկերացումից, համաձայն որի՝ «Երրորդ» կամ «Մուրբ հոգու կայսրությունը» հաջորդում է «Հոր» և «Որդու կայսրություններին»: Ամենից առաջ հատկանշական է Արթուր Մոելլեր վան դեն Բրուքի՝ 1923 թ. հրատարակված Երրորդ Ռայխի մասին հրատարակած գիրքը, որի միջոցով նա ներկայանում է իբրև նոր պետության ստեղծման միջնորդ, որը պետք է փոխարիներ Վայմարյան աստվածաբանական կայսրության, այնպես էլ բիսմարկյան կայսրության ավանդույթների վրա¹⁴²: «Երրորդ Ռայխն» այս թինգզփիլում իր մեջ ներառում է և՛ քաղաքական, և՛ կրոնական իմաստները: Հռոմեական սրբազան կայսրությունից և բիսմարկյան կայսրությունից հետո, գերմանական երրորդ կայսրությունը լինելուց բացի, նացիստական Երրորդ Ռայխը «բարի ոգու» հետ „Heiliger Geist“, „Guter Geist“ զուգահեռի միջոցով նույնանում է նաև միջնադարյան քրիստոնեական «Մուրբ հոգու կայսրությանը»:

«Գերմանիայի չարչարանքները 1933» թինգզփիլը սկսվում է «չար ոգու» խոսքով. *«Գիշեր: Գիշեր: Արյան պես կարմիր գիշեր: // Նրանք լուռ են: Վերջապես: // Ամեն բան կատարվեց: // Վերջինը, ով շրջվեց, // ջարդեցի կողերը: // Այժմ նա լուռ է: // Պատերազան ավարտվել է: // Խաղաղությունն է եկել: // Ահա կանգնած եմ ես՝ հաղթողը նրա, ում մասին ասում են, // որ նա չարն է: Չար ոգին: // Հսկա՝ դիակների դաշտի վրայով տարածված, // Բարձրացող մինչև*

¹⁴² Enzyklopädie des National Sozialismus, hrsg. von **Benz** Wolfgang, **Graml** Hermann, **Weiß** Hermann (5. Aktualisierte und erweiterte Auflage), Deutsche Taschenbuch Verlag GmbH & Co. KG, München, 2007, S. 479-480.

*աստղերի վրանը // Կանգնած եմ ես տարածած ոտքերով: // Մահացածները մահացած են: // Կայսրությունն իմն է*¹⁴³: «Չար ոգին» արտաբերում է խաչված Քրիստոսի վերջին խոսքերը՝ «ամեն բան կատարվեց»: Մա նշանակում է, որ Գերմանիան գտնվում է Նեոի իշխանության տակ, և «չար ոգու» բերանից արտաբերած «ամեն բան կատարվեց» արտահայտությունը նշանակում է, որ նա զբաղեցրել է Աստծո տեղը և հասել իր իշխանության գագաթնակետին: Մա իր հերթին նշանակում է, որ մոտ է Ահեղ դատաստանի ժամը¹⁴⁴: Ահեղ դատաստանի հետ արվող զուգահեռը հանդիսատեսին ոչ միայն պետք է նախապատրաստեր «փրկությանը», այլ դրդեր «բարի ոգու» հետևողը լինել «փրկությանն» արժանանալու համար: Վերջում նույն խոսքերն արտաբերում է «մարտում ընկած անանուն զինվորը»՝ վերածված «բարի ոգու», որը փաստորեն իրական փրկիչն ու Աստվածն է, ով վերակենդանանում է, որպեսզի կրի Գերմանիայի չարչարանքները, իսկ «ամեն բան կատարված է» նշանակում է, որ կատարված է «փրկչի» առաքելությունը և Գերմանիան ազատված է չար ոգու տիրապետությունից:

«Չար ոգու» այն միտքը, որ ինքը հաղթողն է «նրա, ում մասին ասում են, որ նա չարն է, չար ոգին», է՛լ ավելի է ընդգծում «բարի ոգու» և Քրիստոսի զուգահեռը, որին հրեաները՝ որպես չարագործի, Պիղատոսի դատին են հանձնում¹⁴⁵: Քրիստոսի հետ զուգահեռի, ինչպես նաև «չար ոգու» հակառակորդը լինելու միջոցով «մարտում ընկած անանուն զինվորը» հենց սկզբից արժանանում է հանդիսատեսի վստահությանը և համակրանքին:

¹⁴³ Der Böse Geist: Nacht. Nacht. Blutrote Nacht. // Sie schweigen. Endlich. // Es ist vollbracht. // Dem letzten, der sich drehte um, // zerbrach ich die Rippen. // Nun ist er stumm. // Der Sieg hat ein End genommen, // Der Friede ist gekommen. // Da Steh ich, der Sieger, von dem es heißt, // er sei der Böse. Der böse Geist. // Riesig überm Leichenfeld, // Ragend bis ans Sterngezelt // steh' ich mit gepfeiztem Bein. // Die Toten sind tot. // Das Reich ist mein. **Euringer** Richard, Deutsche Passion 1933, Gerhard Stalling, Oldenburg i. O., 1933, S. 9.

¹⁴⁴ Նոր Կտակարան, Պողոս Առաքյալի երկրորդ թուղթը թեսաղոնիկցիներին, Գլուխ Բ:

¹⁴⁵ Տե՛ս, Նոր Կտակարան, Ավետարան ըստ Հովհաննու, 18, 30:

Մարտում ընկած անանուն զինվորի նկարագրությունը նույնպես համապատասխանում է Քրիստոսի արտաքինին. «Մայր. Նրա վերքերը շողարձակում են: Նրա հոգին ճառագում է փշե պսակից»¹⁴⁶:

Վերջում «բարի ոգին» կատարում է իր գործը՝ ժողովրդին աշխատանքի առաջնորդելով, իսկ աշխատանքը ազգային միաբանության գլխավոր տարրերից մեկն է. «*Աշխատող ժողովուրդ: Ի կատար է ածված: // Իմ հոգին է արթուն մնում, որը ձեզ արթնացնում է*»¹⁴⁷, և ավարտելով իր առաքելությունը միանում է «սրբազան ռազմիկների երգչախմբին»: Իսկ «չար ոգին» մոնչունով անդունդն է գլորվում:

Օյրինգերը ցուցումներում նշում է, որ «Չար ոգին պետք է չդարձվի թատերական հայտնի սատանա: Ժամանակի անհաճո ոգին պետք է արթնացվի և իրականանա հնչեղության մեջ՝ ոչ թե զգվելի այլ դժոխային [...]: Վերջին քայլերգը պետք է այդպես նախատեսված լինի: Այն պետք է ճառագի երգեհոնի ձայնի միջոցով»¹⁴⁸: Երգեհոնի կատարած դերն այս թինգզվիլում կարելի է նկարագրել ռոմանտիզմի գեղագիտության միջոցով՝ ըստ որի երգեհոնի խոր և վերամբարձ հնչյունները կարծես հոգիների կայսրությունից են ցած իջնում: Սա մի գործիք է, որը կրոնական ջերմեռանդություն է արթնացնում և հետևաբար իր բնությունը սակրալ է:¹⁴⁹ «Երկինքներից» հնչելով և «դժոխայինին»

¹⁴⁶ „Die Mutter: Aus seinen Wunden bricht ein Glanz. // Sein Geist strahlt aus der Dornenkron. // Unsterblich stirbt der Mutter Sohn“. **Euringer** Richard, Deutsche Passion 1933, S. 46:

¹⁴⁷ „Ein Volk am Werk. Es ist vollstreckt. // Es macht mein Geist, der euch erweckt“. Նույն տեղում:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 8:

¹⁴⁹ *Դարեր շարունակ եկեղեցին երգեհոնի միջոցով տիրել է «ձայների ուժին»: Նացիստական վարչակարգի ղեկավարները քաջատեղյակ էին այս ուժից և չարաշահում էին իրենց նպատակների օգտին: Հատուկ Նյուրնբերգի Ռայխի կուսակցության համագումարի համար մի հասկայական համերգային երգեհոն է կանգնեցվում, որը պետք է ապահովեր միջոցառման «օման» ցանկալի ճառագումը:*

հակադրվելով՝ երգեհոնի ձայնն այստեղ խորհրդանշում է երկնայինը, դրախտայինը, ինչպես Ահեղ դատաստանից հետո ստեղծվում է նոր երկինք ու նոր երկիր և սատանայի ու Աստծո վերջին մարտից հետո հաստատվում է Նոր Երուսաղեմը, որը «երկնքից է իջնում»¹⁵⁰: Այդպես էլ «չար» և «բարի» ոգիների պայքարից հետո առաջանում է Երրորդ ռայխը և երկինքն ու երկիրը կապվում են իրար երգեհոնի ձայնի միջոցով, որը «*հեռվից, սրբազան կերպով, ռիթմիկ և հարմոնիկ միանում է երկրային շքերթի երգին*»:¹⁵¹ Այսուհետև «երանելի են» ոչ միայն «բեռից ազատված կատարյալները», այլ «երանելի են» նաև «կենդանի մարդիկ, քանզի այժմ նրանց ժամանակն է». «*Մայր. Երանելի են կատարյալները՝ բեռից ազատված: // Երանելի են ողջերը, քանի որ նրանցն է ժամանակը*»:¹⁵²

Առաջին և վերջին տեսարանների հակադրության կարևորության մասին հեղինակն ինքն է նշում. «*Բեմի՛ առաջին տեսարանից դեպի վերջինը անցումը պետք է հստակ մշակվի: Փոխվում է միայն գույնը. Առաջինն ընկղմված է գորշի մեջ, վերջինում վարդագույնով լուսանում է*»:¹⁵³: Գունային ֆոնի, ինչպես նաև օրվա ժամերի միջոցով ուժեղանում է վերը նշված հակադրությունների ազդեցությունը հանդիսատեսի վրա, քանի որ «գույնն ազդում է տեսողական ընկալման վրա և դրա միջոցով նաև հոգեկան տրամադրության վրա»¹⁵⁴: Մուգ մոխրագույնը ճնշող ազդեցություն ունի (օրինակ՝ «մոխրագույն» օրեր, որ, թերևս ցանկալի տրամադ-

Anachronismus Orgel, МК 1998, http://www.orgelexperte.de/?page_id=34
– 01.05.2014.

¹⁵⁰ Նոր Կտակարան, Յայտնություն Յովնանու, 21, 10:

¹⁵¹ **Euringer** Richard, *Deutsche Passion* 1933, S. 47.

¹⁵² „Die Mutter: Selig die Vollendeten, schwerebefreit. // Selig die Lebendigen; denn ihrer ist die Zeit“. Նույն տեղում:

¹⁵³ Նույն տեղում, էջ 7:

¹⁵⁴ **Göme**, **Иоганн Вольфганг фон, К учению о цвете**. Մեջբերումը՝ ըստ **Серов**, Н.В., Эстетика цвета. Методологические аспекты хроматизма. СПб, ФПБ-ТОО «БИОНТ», 1997, <http://psyfactor.org/lib/aestcolor.htm> - 23.04.2014.

րություն չեն ենթադրում)¹⁵⁵ և հոռետեսական է (օրինակ դարձվածքերի մեջ, ինչպես *Alles grau in grau malen*¹⁵⁶, որ նշանակում է որևէ իրավիճակ ներկայացնել հոռետեսաբար): Դրան հակառակ՝ վարդագույնը լավատեսության գույնն է (օրինակ՝ ամեն բան վարդագույն ակնոցով տեսնել, այսինքն՝ չափազանց լավատես լինել), այն բնության զարթոնքի գույնն է, մեր համատեքստում նաև լուսաբացի: Մեղմ գույն է և ուրախություն է առաջացնում: Այն մարմնավորում է կարգուկանոն, իդեալիզմ և կարեկցանք, տալիս է ներքին ազատություն և ապահովություն է ներշնչում հատկապես մարդու հոգեկան ճնշվածության դեպքում¹⁵⁷: Բոլորը այս զգացողություններն էին, որ Երրորդ Ռայխի հանդեպ պետք է առաջանային և ամրապնդվեին վերջին տեսարանում, իսկ ամբողջ թինգզփիլը ճնշված ժողովրդի և իշխող վարչակարգի բախումն է, որը վերջնական լուծում է ստանում «փրկչի» օգնությամբ:

Եթե «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգզփիլում ժողովուրդը «չար ոգու» (Նեռի) տիրապետությունից անցում է կատարում «բարի ոգու» (Աստծո) իշխանության, ապա «Ֆրանկենբուրգյան զառախաղում» նա ճանապարհորդություն է կատարում դժոխքից դեպի դրախտ և դրախտում հանդիպում իր «փրկչին» և առաջնորդին:

«Ֆրանկենբուրգյան զառախաղն» ունի հանդիսատեսին ուղղված նախերգանք ու վերջերգ: Նախերգանքում հանդիսատեսին դիմելու միջոցով ներկաները սկզբից ևեթ ընդգրկվում են գործողության մեջ:

Թինգզփիլի «սկզբում» հանդիսատեսը տեղեկանում է կայանալիք դատավարության մասին, որն Աստծո կողմից է կազմակերպվելու, Աստծո ամենազորության և

¹⁵⁵ Farbwirkungen auf der psychischen Ebene, http://www.farbenundleben.de/farbwirkung/farbwirkung_psychisch.htm#rosa – 15.05.2014.

¹⁵⁶ Բառացի՝ ամեն գորշ գորշով նկարել, <http://www.phraseo.de/phrase/7718545/> - 15.05.2014.

¹⁵⁷ Farben und ihre Wirkung auf unsere Psyche und unseren Körper, http://www.wellness-und-entspannung.de/content/balance_harmonie/index.php?cat=3&subcat=50&article=226 – 15.05.2014.

արդարադատության մասին: «Ի փառս Աստծո և անունից // գերմանական ժողովրդի, ում ձայնը խոսում է. // Դու՛ք հազարավորներդ, որ հավաքվել էք այստեղ, // լսե՛ք խաղը, որ խաղ է և դատավարություն: // Մեծ է Տերը, երբ նա մի ազգի օժտում է, // և նրա ներողամտությունը շարունակվում է անսահման, // սակայն փչի՛ր նրա վրա, ում նա հրավիրում է // արդարադատության ամբիոնի առաջ: // Ոչ մի բան երկնքում չի տեղաշարժվի՝ // լուսինը չի պտտվի, և ոչինչ խաղաղ չի մնա, // խոտը չի աճի, բունը չի պտղավորվի, // և անկատար ոչինչ չի մնա, եթե նա չկամենա: // Ով ցանկանում էր թաքնվել նրա ցասումից, // ով ցանկանում էր խույս տալ նրա դատավճռից: // Նա հանցավորներին կանչում է իրենց դազադներից // և կանչում խեղճերին, ում հետ դժբախտություն է պատահել: // Նա ժամանակներին իրեն վկաներ է կանչում // և հենց ժողովրդին կարգում դատավոր, // նա ստիպում է հզորներին իրենց առաջ խոնարհվել // և ճնշվածներին դարձնում է մեղադրողներ: // Ուստի, ընդունեք ներկայացումը որպես խորհրդանիշ, որը պարտադրում է: // Անցյալը դառնում է ներկա: // Դատավորները կանգնած են, սակայն ձեր կամքն է դատում, // և ձեր բերանը դատապարտում է և ներում»¹⁵⁸:

¹⁵⁸ „Zum hohen Ruhme Gottes und im Namen // des Volkes der Deutschen, dessen Stimme spricht: // Ihr Tausende, die hier zusammenkamen, // hört dieses Spiel, das Spiel ist und Gericht. // Groß ist der Herr, wenn er ein Volk Begnadet, // und seine Langmut währt unendlich weit; // doch wehe über jene, die er ladet // vor die Tribüne der Gerechtigkeit. // Es wird kein Ding am Himmel sich begeben, // kein Mond sich drehen und keiner stehen still, // kein Gras geht auf, kein Stock trägt seine Reben, // und nichts bleibt unerfüllt, wenn er nicht will. // Wer wollte sich vor seinem Zorn verbergen, // wer wollte seinem Urteilspruch entgehen. // Er ruft die Frevler auf aus ihren Särgen // und ruft die Armen, denen Leid geschehn. // Er ruft die Zeiten auf zu seinen Zeugen // und setzt die Völker selbst zu Richter ein, er läßt die Mächtigen sich ihnen beugen // und läßt die Unterdrückten Kläger sein. // So nehmt das Spiel als Gleichnis, das verpflichtet. // Zur Gegenwart wird die Vergangenheit. // Die Richter stehn, doch euer Wille richtet, // und euer Mund verurteilt und verzeiht“. **Möller**, Eberhard Wolfgang, Das Frankenburger Würfelspiel In: **Rühle**, Günther. Zeit und Thetater: Diktatur und Exil: 1933- 1945, Band 3, Propyläen Verlag Berlin, 1974, S. 339.

Նախերգանքը հետաքրքիր կառուցվածք ունի: Այն հանդիսատեսին, այսինքն՝ գերմանացի ժողովրդին, դիմում է հենց ժողովրդի անունից: Փաստորեն ժողովրդի ձայնը դիմում է ժողովրդին՝ շահելով վերջինիս վստահությունը, քանի որ ձայնը, նրանցից մեկն է, իրենց ամենամոտ գտնվող ձայնը, որին հուզում են նույն խնդիրները, հետևաբար նրա խոսքը իրենց շահերից է բխում: Նախերգանքը, Տիրոջ մասին պատմելով, հանդիսատեսին նախապատրաստում է նրա հետ հանդիպմանը: Այս նախապատրաստման շնորհիվ «վերջում» աստվածային միջական կերպարի հետ հանդիպումը, բնական է, պետք է ավելի սպասված, հետևաբար ավելի ազդեցիկ և բերկրալի լիներ: Վերջերգն ամփոփում է եղելությունը և հաստատում, որ «Սև գրահով կերպարը» Աստված էր, որը մոտեցել է գերմանացի ժողովրդին, տեսել նրա տառապանքը և օգնության ձեռք մեկնել:

«Ահա կայացավ խաղը և ամբողջականացավ մի փոքրիկ // պատկեր բռնի աշխարհի, որը բացվեց դատավորների համար: // Շատ այլաբանություններ պետք է հարթվեն, սակայն մեկն // այժմ հարթվել է և մնացած բոլորի համար իրականացվել: // Ուժեղը մշտապես ոտնատակ է տալիս թույլին, // մշտապես գիշերն իջնում է սայթաքածների վրա: // Ավելի ուժեղ վկաները վերակենդանացնում են արդար գործը, // իսկ կենսալին ապրում է մոռացված գերեզմանի վրա: // Փակվի՛ր, հիշողությա՛ն դամբարան: Վերցրու՛ քո հերոսներին // կրկին հետ քո խաղաղված ընդերքը: // Տե՛ս, արտերի և արյունոտ դաշտերի վրա // ծաղկում է մի նոր ազգ՝ անպարտելի և մեծ: // Եվ այն, ինչ նախորդներին՝ դժբախտներին երբեք չի վիճակվել, // որ Աստված իրենց մոտենա, որպեսզի տեսնի նրանց վերքերը, // դա պատահում է այսօրվաններին»¹⁵⁹: Ահեղ

¹⁵⁹ „Also vollzog sich das Spiel und vollendet ein kleines // Bild der gewaltigen Welt, das sich den Richtern enthüllt. // Viele Gleichnisse sind zu begleichen, doch eines // ist nun beglichen und für alle anderen erfüllt. // Ewig schreitet das Kräftige über das Schwache; ewig senkt sich die Nacht auf das Gestürzte hinab. // Stärkere Zeugen erstehn der gerechten Sache, // und das Lebendige lebt überm vergessene Grab. // Schließe dich, Gruf der Erinnerung. Nimm deine Helden // wieder zurück in deinen befriedeten Schoß. // Siehe: über den Äckern und blutigen Felden // grunt ein neues Geschlecht, unüberwindlich und groß. // Und was den Vorderen nich, den

դատաստանից հետո, այսպիսով, ստեղծվում է «նոր ազգ՝ անպարտելի և մեծ», քանի որ գտնվում է արդարադատ Աստծո հովանավորության ներքո: Ինչպես «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշփիլի դեպքում, պետք է անվերապահորեն լինի նրա կողմնակիցը «դրախտին» արժանանալու համար:

«Ֆրանկենբուրգյան գառախաղը» սկսվում է մեղադրանքով, ավարտվում՝ պատժով և պատմության «մութ» էջի ավարտով, որից հետո ամեն չարիք դառնում է անցյալ և թաղվում «հիշողության դամբարանում», իսկ նացիստական Գերմանիայի հաստատումով սկսվում է գերմանական պատմության «նոր և լուսավոր» էջը:

Տիրոջ և հանդիսատեսի (ժողովրդի) հանդիպումը տեղի է ունենում նաև Դիտրիխ-Էկարտ-Բյունեի համապատասխան ճարտարապետության օգնությամբ: Այս թինգ հրապարակի հանդիսասրահը աստիճաններով կապվում է դատավորների հարթակին: Աստիճանը վերևի և ներքևի՝ կոսմիկական տարբեր գոտիների կապի միֆոլոգիական պատկերն է, ավարտուն տեսքով այն հատում է կոսմիկական երեք գոտիները՝ կապելով աստվածների, մարդկանց և մեռյալների կամ չար ոգիների աշխարհները՝ համապատասխանաբար դժոխքը և դրախտը: Երկրի վրա՝ միջին աշխարհում (հազվադեպ երկնքում), գտնվում է աստիճանի սկիզբը՝ սահմանելով շարժման ուղղությունը դեպի վեր՝ երկինք կամ ներքև՝ ստորգետնյա աշխարհ: Աշխարհի ամբողջական պատկերի մեջ՝ երկրի վրա, գտնվում է աստիճանի կենտրոնը: Ոչ հազվադեպ կոսմիկական աստիճանի պատկերը ծագում է գլխավոր ծեսի մեջ՝ հարմարեցված կոսմիկական կենտրոնին, երբ սահմանային իրավիճակում (կազմակերպված կոսմիկական աշխարհի անկման վտանգը դեպի քաոս) պահանջվում է ստեղծել կապ երկրի և երկնքի միջև, որպեսզի երկրի նոր կառուցվածքի համար օգտագործվեն երկնքի կոսմիկական ուժերը: Աստիճանով դեպի վեր շարժման հետ մասնավորապես կապվում է մարդու մասին միֆոլոգները, որ երկինք է ընկել

Glücklosen niemals beschieden, // daß sich der Gott ihnen naht, um ihre Wunden zu sehn, // das wird den Heutigen nun, die ihr da wandelt im Frieden, // heiligen Verständnisse voll und true den Getreuen, geschehn".
Նույն տեղում, էջ 377:

աստիճաններով: Աստիճանով դեպի ներքև շարժումը կապվում է աստվածության՝ երկնքից երկիր գալստյան հետ¹⁶⁰:

Հանդիսատեսը, փաստորեն, խոսքի միջոցով կապվելով դատավորներին, շարժում է կատարում «դժոխքից» դեպի «դրախտ», իսկ ահեղ դատաստանից հետո ստեղծվում է «երկրի նոր կառուցվածքը»: Միանալով դատավորներին՝ հանդիսատեսն ամբողջ ընթացքում շարժում է կատարում դեպի վեր՝ դեպի երկինք՝ ընդառաջ գնալով Տիրոջը, որն էլ իր հերթին ցած է իջնում երկնքից, և նրանց հանդիպումը տեղի է ունենում նացիստական Գերմանիայում:

Փաստրեն՝ թինգշփիլում նացիստական Գերմանիայի հաստատումը ներկայացվում է որպես անցում «չարի» տիրապետությունից կամ դժոխքից դեպի «բարու», «Տիրոջ» դրախտային տիրապետություն, և այդ հակադրության ու կրոնի հետ զուգահեռի միջոցով ուժեղանում է քարոզչության ազդեցությունը:

Гоар Паносян

ПРОБЛЕМА «НАЧАЛА» И «КОНЦА» В ТИНГШПИЛЕ

(на примере произведений «Страсти Германии 1933» Р.Ойрингера и «Франкенбургская игра в кости» Э.В.Меллера)

На основе анализа «начала» и «конца» в тингшпиле автор показывает, как нацисты представляли создание Третьего рейха, ставя перед собой цель превратить народ в своих последователей. Анализ основан на двух тингшпилях: «Страсти Германии 1933» Р.Ойрингера и «*Франкенбургская игра в кости*» Э.В.Меллера. Анализ «начала» и «конца» позволяет сделать вывод о том, что в тингшпиле создание нацистской Германии представлено как переход от господства «зла» или ада к «добру», небесному господству «Бога». Данное противопоставление, а также религиозные параллели усиливают эффект пропаганды.

Gohar Panosyan

¹⁶⁰ **Мифы народов мира**, энциклопедия, том 2, издательство „Советская Энциклопедия“, Москва 1992, стр. 50-51.

THE ISSUE OF «THE BEGINNING» AND «THE END» IN THINGSPIELE (R. EURINGER'S «PASSION OF GERMANY 1933» AND E.W. MOELLER'S «THE FRANKENBURGER DICE-PLAY»)

Through the analysis of “the beginning” and “the end” of thingspiele, the article shows how the Nazis present the establishment of Third Reich in order to turn the people into their followers. The analysis is based on two thingspiele; “Passion of Germany 1933” by R. Euringer, and “The Frankenburger Dice-Play” by E.W. Moeller. The analysis of “the beginning” and “the end” allows to draw the conclusion that in thingspiele the installment of Nazi Germany is presented as a transition from the domination of “the evil” or hell to the “good”, heavenly domination of “the God.” This contrast, along with religious parallels, increases the effect of propaganda.

**ԶՐՈՒՅՑԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԱՐՔ Թ.ՖՈՆՏԱՆԵՒ «ՇԹԵԽԼԻՆ» և Գ.ԳՐԱՄԻ
«ԱՆԵԶՐ ԴԱՇՏ» ՎԵՊԵՐԻ ՊՈՆՏԻԿԱՅՈՒՄ**

Գերմանական գրականության մեջ Թեոդոր Ֆոնտանեի գրական երկերը առանձնանում են իրենց բարձր գեղարվեստական ոճով: Հատկապես նրա վեպերը, որոնք աչքի են ընկնում գրույցների բազմազանությամբ և գունագեղությամբ, անկրկնելի ու բացառիկ են ոչ միայն ռեալիզմի դարաշրջանի, այլև 20-րդ դարի գերմանական գրականության ողջ համատեքստում:

Թերևս արկածային գրականություն փնտրողին կարող դուր չգալ Ֆոնտանեի ստեղծագործական ոճը, քանզի փոթորկուն իրադարձությունների, հետաքրքիր հանգուցա- լուծումների կամ սիրային գեղեցիկ պատմության փոխարեն հեղինակը մատուցանում է վեպի ծավալի և բովանդակության մեծ մասը կազմող երկար գրույցների մի անվերջանալի շղթա: Կարելի է կարծել, որ Ֆոնտանեի վեպերում դեպքերի և գործողությունների բացը լրացնում են գրույցները, և որ դրանք օգնում են փարատել ձանձրույթը, ինչպես այն մարդիկ, որոնք սովորաբար կարճում են ճանապարհը կամ երկար ձմեռային երեկոները ծայր առած գրույցների միջոցով: Եթե ընդունենք այս տեսակետը, պետք է նաև ընդունենք, որ նման պարագայում Ֆոնտանեն չէր լինի գերմանական գրականության կարկառուն ներկայացուցիչներից մեկը, նրա տաղանդի առջև չէին խոնարհվի գերմանական գրականության մյուս մեծությունները, ինչպիսիք են Թոմաս և Հայնրիխ Մաները, Գյունթեր Գրասը և, ի վերջո, չէր լինի այն հազարավոր ընթերցողների և գրականագետների սերն ու համակրանքը, որը մինչ այսօր շարունակում է վայելել Թեոդոր Ֆոնտանե գրողը:

Այս հողվածում կփորձենք վերհանել գեղարվեստական գրույցի առանձնահատկությունները Ֆոնտանեի «Շթեխլին», ինչպես նաև նրա գրական ավանդույթը շարունակող Գյունթեր Գրասի «Անեզր դաշտ» վեպերում, ուսումնասիրել և առանձնացնել այն

բոլոր գործառույթները, որոնք կրում է զրույցը որպես վեպի կառուցման միջոց:

Ֆոնտանեն որպես ռեալիստ գրող, այն կարծիքին էր, որ լավ վեպը պետք է ծառայի ժամանակի և հասարակության քննադատությանը: Նրա արձակ ստեղծագործության շարքերը լրացնում են հիմնականում սոցիալական վեպերը, որոնք ցայտուն կերպով ներկայացնում են հասարակությունը և քննադատում այս կամ այն հասարակական իրողությունը: Անդրադարձը հասարակական կյանքին վառ արտացոլված է նաև Ֆոնտանեի «Ժամանակի վեպում», որը, սակայն, ավելի հեռուն է գնում՝ իր ուսումնասիրության առարկան դարձնելով հենց ժամանակը: Բացի բովանդակային առանձնահատկություններից «Ժամանակի վեպին» հատուկ է նաև կառուցվածքային յուրահատկությունը. վեպի հիմքում ընկած են զրույցները, որոնք ետ են մղում պատումը հեղինակի խոսքի միջոցով և ստեղծում երկխոսությունների մի յուրօրինակ աշխարհ:

Ֆոնտանեի պոետիկայի առանցքը կազմող գեղարվեստական զրույցը ժամանակի ընթացքում մշտապես եղել է գրականագետների ուշադրության կենտրոնում: Վոլֆգանգ Փրայզեդանցը¹⁶¹, Վ.Մյուլլեր-Չայդելը¹⁶², Յուլիուս Պետերսենը¹⁶³ բազմիցս անդրադարձել են հատկապես «Շթեխլին» վեպի կառուցվածքային առանձնահատկություններին, սակայն նրանց ուսումնասիրությունները ուղղված են եղել Ֆոնտանեի գրական երկերի մակրոկառուցվածքին, իսկ ահա «Շթեխլինի» միկրոկառուցվածքը, այն է՝ վեպում զրույցների կառուցվածքը, պարբերականությունը և դրանց գործառույթները ավելի խորը ուսումնասիրությունների կարիք ունեն: Հատկապես մեծ է Պետեր Հագուբեկի ավանդը Ֆոնտանեի «Ժամանակի վեպի» շուրջ լայն ուսումնասիրությունների հարցում, որը ոչ միայն մանրամասնորեն հետազոտության է ենթարկում գեղարվեստական զրույցը որպես վեպի կառուցման միջոց, այլ նաև քննարկում և անց է կացնում այդ

¹⁶¹ Preisedanz, Wolfgang: Theodor Fontane. Darmstadt 1973

¹⁶² Müller-Seidel, Walter: Theodor Fontane. Soziale Romankunst in Deutschland. Stuttgart 1975

¹⁶³ Petersen, Julius: Fontanes Altersroman. In: Euphorion 29, 1928

գրույցները նաև վեպի ողջ պրիզմայի միջով՝ շեշտը դնելով նաև հեղինակի պոետիկայի և պատումի առանձնահատկությունների վրա: Հայնզրականագիտության շրջանակներում, ցավոք, Ֆոնտանեն բավականաչափ գիտական ուշադրություն դեռևս չի վայելում, ուստի սույն ուսումնասիրությունը միտված է մասամբ լրացնելու այդ բացը:

Գեղարվեստական գրույցը Ֆոնտանեի ստեղծագործություններում քննարկող ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են 20-րդ դարի երկրորդ կեսից հետո, այսինքն՝ «Շթեխլինի» լույս տեսնելուց հետո գրեթե կես դար անց: Այս հանգամանքը փաստում է նաև այն, որ «Շթեխլինը»՝ որպես «Ժամանակի վեպ», մեծ հետաքրքրություն է սկսել վայելել ժամանակակից գրականության շրջանակներում և նոր գրականագիտական տեսությունների լույսի ներքո: Առհասարակ, գեղարվեստական գրույցը ավելի լայնորեն սկսում է ուսումնասիրվել 20-րդ դարում: Որպես օրինակ կարող ենք նշել Ռոբերտ Փեթչի՝ 1934 թվականին լույս տեսած աշխատությունը,¹⁶⁴ որտեղ էպիկական և դրամատիկական երկխոսություններն ղիտվում են որպես առանձին հասկացություններ: Զրույցը, ըստ Փեթչի, ծառայում է երկու նպատակի՝ նվազեցնել պատումը և բնութագրել կերպարներին: Այսինքն, որքան շատ են գրույցները, այնքան քիչ է պատումը, և հակառակը: Կերպարներին բնութագրմանը ծառայում են լեզվական միջոցները, բարբառները, մասնագիտական բառապաշարը, որոնք միաժամանակ օգնում են նաև տիպականացնել կերպարներին իրենց խոսքի միջոցով:

1969 թվականին Գերհարդ Բաուերը հրատարակում է իր աշխատությունը¹⁶⁵ երկխոսության պոետոլոգիական խնդիրների մասին: Նա նաև կատարում է երկխոսության ձևերի դասակարգում և տարբերակում՝

¹⁶⁴ Petsch R. Deutsche Dramaturgie von Lessing bis Hebbel. Nabu Press 2013

¹⁶⁵ Bauer G. Zur Poetik des Dialogs. Leistung und Formen der Gesprächsführung in der neueren deutschen Literatur, Darmstadt. 1969.

- Փոխկապակցված երկխոսությունը, որի հիմքում ընկած է երկուստեք փոխընթացումը

- Բաց, տարերային զրույցը, որի ժամանակ, ինչպես վեճի ընթացքում, վտանգվում է զրուցակիցների հաղորդակցությունը

- Դիալեկտիկական կամ փորձարարական զրույցը, որի հիմնական նպատակը որևէ հարցի քննարկումն է և վերջնական հայտարարի գալը

- Անբռնազբոսիկ, թեթև զրույցը (*Konversation*)՝ որպես ժամանցի ձև

Թեև Բաուերի կողմից արված այս դասակարգումը բազմաթիվ քննադատությունների առիթ է հանդիսացել, այնուամենայնիվ, երկխոսության վերջին տեսակը չափանիշ և խթան է հանդիսացել Ֆոնտանեի, այնուհետև Գ.Գրասի գրական երկերում զրույցի ուսումնասիրության համար: Ըստ Բաուերի՝ զրուցակցությունը (*Konversation*) հատուկ է մարդկանց փոքրիկ խմբերին, որոնք սիրում են խոսել «դեսից-դենից»: Այստեղ ոչ այնքան կարևոր է զրույցի առարկան, բովանդակությունը, որքան զրույցը վարելու ձևը: Առաջնային են դառնում այնպիսի լեզվական հմտությունները, որոնք թույլ են տալիս սահուն անցում կատարել մի թեմայից մյուսը, թեթև մթնոլորտ ստեղծել երկխոսության համար և որ ամենակարևորն է, կարճել ժամանակը, որովհետև նման զրույցների հիմնական նպատակը ժամանցն է, ուստի նաև հավանական է, որ մի քանի անգամ կրկնվի խոսակցության թեման: Հասկանալի է, որ այստեղ հիմնական «զենքը» լեզուն է, ճիշտ կառուցված խոսքը, զրույց վարելու հմտությունը:

Բաուերի այս աշխատությունը քննադատվել է մասնավորապես այն պատճառով, որ այն հիմնված չէ լեզվաբանական ուսումնասիրությունների մեթոդների և արդյունքների վրա: Նման քննադատական մոտեցումը միգրացե ընդունելի կլինէր այսօրվա տեսանկյունից, քանզի լեզվաբանությունը՝ որպես առանձին գիտակարգ, ավելի ուշ է հաստատվել՝ Բաուերի աշխատությունից տասնամյակներ անց: Թեպետ այսօր նույնպես հազվադեպ են խաչվում լեզվաբանության և գրականագիտության ճանապարհները: Պարզ է, որ գրականության մեջ գրավոր խոսքը ենթարկվում է այլ

օրինաչափությունների, տարբեր են կենդանի խոսքի և գեղարվեստական ստեղծագործության մեջ մտացածին կերպարների խոսքի խնդիրները և նպատակները: Բացի այդ, լեզվաբանությունը լեզուն ուսումնասիրում է որպես առանձին կատեգորիա, ուստի անհնարին է դառնում խոսքի ուսումնասիրությունը միջերկխոսության հարթության վրա: Իհարկե, լեզվաբանությունը կարող է ուսումնասիրել երկխոսության լեզուն, սակայն այս ուսումնասիրությունը միտված կլինի գուտ լեզվաբանական հատկանիշներին, ինչպիսիք են շարահյուսական և ձևաբանական հատկանիշները:

Ինչպես նշվեց, գերմանական գրականության համատեքստում Ֆոնտանեի «Շթեխլին» վեպը համարվում է նորարարական այն առումով, որ այստեղ առաջին անգամ երկխոսությունը կիրառվում է որպես վեպի կառուցման հիմնական միջոց, որը նախատիպ է դառնում 20-րդ դարի գերմանական գրականության համար: Բավական է հիշել Մանի «Դոկտոր Ֆաուստուս» վեպում սատանայի հետ զրույցը, որն իր խոհափիլիսոփայական և բարդ հոգեբանական բնույթով թերևս կարող է մրցել մեկ այլ՝ Դոստոևսկու «Կարամազով եղբայրները» վեպում ընթացող զրույցի հետ:

Ճիշտ է, վեպը, որտեղ գերիշխող է դառնում գործող անձանց խոսքը, բնորոշ է ուշ շրջանի գրականությանը, սակայն հետադարձ հայացքը թույլ է տալիս նկատել, որ նման վեպի առաջին նշանները նշմարելի են նաև ավելի վաղ: Եվրոպական գրականության հիմքում՝ որպես առաջին երկխոսության նմուշներ, ընկած են պլատոնյան զրույցները, որոնք, որպես կանոն, իրենց բովանդակության հիմքում կրում են ճշմարտության որոնումները:¹⁶⁶ Նման զրույցը շատ հաճախ վերածվում է մենախոսության, որովհետև մշտապես գերիշխող է դառնում միայն մեկ զրուցակից, որն էլ վարում և եզրափակում է զրույցը, իսկ մյուս զրուցակիցները պարզապես լսողի դերում են հանդես գալիս: Եթե Պլատոնի մոտ *logos* հասկացությունը նույն նշանակությունն ունի՝ ճառ և զրույց, ապա ժամանակի ընթացքում նրանց իմաստները

¹⁶⁶ Hasubek P. Das Gespräch in Th.Fontanes Roman “Der Stechlin”. Erich Schmidt Verlag, Berlin 1998, S. 18

առանձնացվում են, ընդ որում ճառը և ճարտասանության արվեստը ավելի մեծ կարևորություն են ստանում, քան գրույցը: «Սոկրատեսյան դիալոգը», որը որպես առանձին ժանր է դիտարկվում Բախտինի կողմից¹⁶⁷, հիմնված լինելով Սոկրատեսի՝ «մանտիկայի» սկզբունքի վրա, երկխոսության միջոցով սադրանք է ստեղծում գրուցակցի համար՝ ստիպելով նրան բացել իր մտքերը: Հավելենք նաև, որ հին հունական և հռոմեական գրականության մեջ հայտնի են Արիստոտելի, Ցիցերոնի, Պլուտարքոսի երկխոսության շուրջ ուսումնասիրությունները, Դիոգենես Լաերտացու կողմից ներկայացված 14 երկխոսության ձևերի մասին աշխատությունը¹⁶⁸:

Միջնադարը՝ ի դեմս սխոլաստների հերքում է պլատոնյան գրույցը որպես ճշմարտության հասնելու միջոց: Բացարձակ ճշմարտություն ընդունելով Սուրբ Գիրքը՝ միջնադարյան մշակույթը հատկապես կարևորում է քրիստոնեություն դավանող ուսուցողական գրույցը՝ որպես հավաստի և ճշմարիտ գիտելիքի մատուցման հիմնական ձև: Միջնադարը մերժում է ցանկացած այլ միջոց, որը կարող է բանալ ճշմարտության ուղին, ուստի հատկանշական է, որ բանավեճը, իմաստասիրական գրույցները, արգելված լինելով հանդերձ, մինչև ուշ միջնադար անստեղծվում են: Միայն 14-րդ դարից սկսած հետզհետե սկսում է զարգանալ աստվածաբանական բանավեճը, որը ծավալվում և այլ ձևեր է ստանում հումանիզմի և Վերածննդի դարաշրջանում: Զրույցը եվրոպական գրականության մեջ աստիճանաբար դառնում է կոլեկտիվ սկզբունքի գրավական, այն միավորում է մարդկանց ընդհանուր թեմաների շուրջ և հագեցնում առօրյա հաղորդակցության «քաղցր»: Ուլրիխ ֆոն Հուլենի «Զրույցների գրքույկ» (1521), Հանս Սաքսի «Երկխոսություններ» (1524) աշխատությունները վկայում են, որ գեղարվեստական գրույցը գերմանական և, առհասարակ, եվրոպական գրականության մեջ կրկին սկսում է ուշադրության կենտրոնում հայտնվել:

¹⁶⁷ Տե՛ս՝ Бахтин М. Проблемы поэтики Достоевского. М. 1979.СС. 122-130

¹⁶⁸ Hasubek, Peter, ebd., S. 21

17-րդ դարի Ֆրանսիայում՝ պալատական ոճի զարգացմանը զուգահեռ, ձևավորվում է գրույցի այնպիսի մի տեսակ, որը հետագայում իր ազդեցությունն է թողնում նաև բարոկկոյի դարաշրջանի Գերմանիայի հասարակական և մշակույթային կյանքի վրա: Այսպես, օրինակ, ֆրանսիական արքունիքում ընդունված էին գրույցի կանոններ, որոնք խստորեն պահպանվում էին: Արգելվում էր ընդհատել գրուցակցին, շեղել խոսակցության ընթացքը որևէ ակնարկով, ընդունված չէր գրույցի ընթացքում ցուցաբերել հուզականություն: Աստիճանաբար՝ մեծ քաղաքների ստեղծմանը զուգահեռ, սկսում է փոխվել նաև գրուցակցության աշխարհագրությունը. գրույցն իր շուրջն է համախմբում մարդկային ավելի մեծ խմբերի: Հարկ է նշել, սակայն, որ Լուսավորության դարաշրջանում գրույցը կենցաղում շարունակում է անհասանելի մնալ, քանի որ գրույցի համար փիլիսոփայությանը, գիտությանը կամ քաղաքականությանը վերաբերող արդի թեմաները սահմանափակում էին գրուցակիցների ներգրավվածությունը, քանզի պահանջում էին որոշակի գիտելիքներ և տեղեկատվություն, որին այդ ժամանակ շատ քչերն էին տիրապետում:

Գեղարվեստական գրույցի ակունքներ կարելի է փնտրել նաև 17-րդ և 18-րդ դարերում: Նշենք Գրիմելսհաուզենի «Ռաթսշյուրբել կամ հարուստ դառնալու արվեստ» (1672) կամ «Արկածային Միսլիցիսիմուսը» (1679), Յոհան Բերսի «Գերմանական ձմեռային գիշերներ, ամառային կարճ օրեր» (1682), Գելերթսի «Շվեդ կոմսուհի ֆոն Գ.-ի կյանքը» (1747-48) երկերը: Այստեղ գրույցը հանդես է գալիս մասնավորապես երկխոսության տեսքով, ընդ որում գրուցակիցներից մեկը մշտապես լսողի դերում է հանդես գալիս, ուստի նման գրույցները հաճախ վերածվում են մենախոսության: Վիլանդի՝ 1758 թվականին լույս տեսած «Արասպես և Պանթես» վեպ-երկխոսության (*Dialogroman*) մեջ գրույցը ավելի բազմանշանակ գործառույթ է կատարում. այն ավելի համապարփակ է դարձնում հեղինակի պատումը, թույլ է տալիս մեծ ծավալով պատմողության նյութը սեղմել, դարձնել ավելի հակիրճ:

Առավել ուշագրավ է Ֆրիդրիխ Թդաուգոթ Հազեի «Գուստավ Ադլերման» վեպը (1779), որտեղ մի փոքր այլ են գրույցի նպատակները և թեմաները: Եթե Վիլհանդը իր վեպի գործողությունների համար ասպարեզ է ընտրում անտիկ դարաշրջանը, ապա Հազեն իր ուսումնասիրության նյութը դարձնում է իր ժամանակի հասարակության նկարագիրը: Հազեի մոտ խոհափիլիսոփայական բնույթի երկարաշունչ գրույցներն իրենց տեղը զիջում են անընդհատ փոխվող գրուցակիցների միջև ընթացող կարճ և թեթև գրույցներին: Զրույցների խայտաբղետությունը, որը հատուկ է հասարակության մեծ և փոքր խմբերին, երբ վերջիններս հավաքվում են և ժամանակ անցկացնում, գրական երկերում կարծես թե ստեղծում են տվյալ ժամանակահատվածին հատուկ միջավայր: Հազեն, այսպիսով, փորձում է ընկալելի դարձնել իր ժամանակը: Հատկանշական է նաև այն փաստը, որ Հազեն իր պլոթեն կառուցում է մեծ մասամբ գրույցների միջոցով, նախապատվություն է տալիս կերպարների խոսքին՝ ետին պլան մղելով գործողությունները: Ինչպես տեսնում ենք, Հազեի այս վեպը մոտենում է 19-րդ դարի հասարակական վեպին և հատկապես «ժամանակի վեպին», որտեղ ժամանակի և հասարակության պատկերը արտացոլված են կերպարների հարուստ և բազմաբովանդակ գրույցների մեջ:

Զրույցը գերմանական գրականության մեջ անցել է ձևավորման երկար ճանապարհ և ընթացել է վեպի ժանրի ձևավորմանը զուգընթաց: Այս երկու ժանրերի սահմանազատումը նախադրյալներ է ստեղծել նաև «գրույց» և «երկխոսության» եզրույթների տարբերակման համար: Եթե երկխոսությունը դրամայում միտված է արտահայտել ներքին ապրումները և հուզականություն ու արտահայտչականություն հաղորդել կերպարների խոսքին, ապա գրույցը վեպում լրացնում կամ փոխարինում է պատումը, մեծացնում և բազմակողմանի է դարձնում ուսումնասիրության դիտանկյունը: Ուստի զարմանալի չէ, որ հատկապես գրույցն է դառնում սոցիալական վեպի «այցեքարտը», քանի որ այն համախմբում է մարդկանց որևէ թեմայի շուրջ, ստեղծում սոցիալական խումբ: Այսուհետ նրանք հասարակության անդամներ են, և այլևս դժվար է նրանց

պատկերացնել այդ կուլեկտիվից դուրս, հասարակությունից անջատ: Կարելի է ասել, որ ստեղծվում է շղթա՝ գրույց – կուլեկտիվ – հասարակություն – սոցիալական վեպ հարաբերակցությամբ: Այսինքն, սոցիալական վեպի կառուցման համար հատկապես մեծ է գրույցների դերակատարությունը, քանզի այդ գրույցները թույլ են տալիս ստեղծել այնպիսի մի մթնոլորտ, որտեղ զգալի է դառնում ժամանակի կենդանի շունչը: Հայտնի փաստ է, որ հնում թագավորները ծպտված շրջվել են քաղաքում և ականջ դրել մարդկանց խոսակցությանը՝ իմանալու, թե ինչ է խոսում իր ժողովուրդը իր մասին: Ռեալիստ գրող Ֆոնտանեի համար արդիական է՝ իր ընթերցողներին ստիպել ականջ դնել հասարակ մարդկանց գրույցներին և առօրեական մանրուքների մեջ փնտրել կենդանի ժամանակը արտապատկերելու ուղիները: Ինքը՝ Ֆոնտանեն, մի առիթով ասել է. «*Այն ամենը, ինչ կարելի է իմանալ որևէ դարաշրջանի և նրա մարդկանց մասին [...] պետք է փնտրել այլ տեղ. վեց անեկդոտներում ավելի շատ բան կգտնես ձեր Ֆրիցի մասին, քան պետական փաստաթղթերում*¹⁶⁹: Այս սկզբունքը նա կիրառում է նաև իր «ժամանակի վեպում», որտեղ պատմական, քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական իրողությունների մասին խոսում են կերպարները, իսկ ընթերցողը՝ «ծպտյալ թագավորը», ուշի ուշով ականջ է դնում նրանց գրույցներին: «*Միայն գրույց, երկխոսություններ, որոնց ընթացքում մեզ են հառնում մարդկային խառնվածքները և դրանց հետ նաև պատմությունը: Ես, իհարկե, գտնում եմ, որ դա ոչմ միայն ամենարնդունված, այլև ամենաճիշտ ձևն է «ժամանակի» վեպ գրելու համար*»,¹⁷⁰ - սրանք Ֆոնտանեի խոսքերն են «Շթեխլինի» մասին, որոնք այս վեպի վերլուծության համար կարևոր նշանակություն ունեն. վեպի նյութը կառուցվում է մասնավորապես գրույցների հիման վրա ոչ թե այն պատճառով, որ այստեղ առհասարակ բացակայում է նյութը, և հեղինակը, կարծես թե, ասելիք չունի, այլ միայն այս կերպ կարելի է ներկայացնել, ըստ

¹⁶⁹ Fontanes Brief an Hermann Wichmann, 2. Juni 1881. In: HFA IV/3, S. 131

¹⁷⁰ Theodor Fontanes Briefe. Zweite Sammlung. Hrsg. von Otto Pniower und Paul Schlenther. 2 Bände. Berlin. 1910. S.428

Ֆոնտանեի, կենդանի ժամանակը: Մինչդեռ «Շթեխլինում» արծարծվող թեմաները շատ են, որոնք ընդգրկում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ պետություն, քաղաքականություն, կրոն, կրթություն, մշակույթ, շոշափվում են նաև օտարի և հայրենիքի թեմաները: Պատմությունը և քաղաքականությունը այստեղ մեծ անդրադարձ են գտնում, ինչը նաև որոշ դեպքերում տարակարծություններ է առաջացնում՝ պատմավեպ է սա արդյոք, թե քաղաքական վեպ: Գլխավոր հաղթաքարտը «ժամանակի վեպի» համար նրա կառուցվածքն է՝ հիմնված կերպարների խոսքի վրա: Ճիշտ է, հասարակական վեպին նույնպես բնորոշ է գրույցների բազմազանությունը, սակայն այստեղ գրույցները լրացնող տարր են հանդիսանում գործողությունների համար, իսկ «ժամանակի վեպում» գրույցներն են կազմում վեպի բուն գործողությունը: «Շթեխլինը» չի կարող համարվել պատմական կամ քաղաքական վեպ, որովհետև այստեղ պատմությունը կամ քաղաքականությունը չէ վեպի նյութը, այլ այն, թե ինչպես են այդ իրողությունները անդրադառնում ժամանակի պատկերի վրա: Ահա թե ինչու են այստեղ առավել գերադասելի գրույցները, այս կերպ է առավել ցայտուն դառնում մարդկային գործոնը, որովհետև այն փաստը, որ հեղինակի փոխարեն խոսում են իր հերոսները, ռազմավարություն է՝ ընտրված հենց հեղինակի կողմից: Ֆոնտանեն, այսպիսով, ցանկանալով հնարավորինս չեզոք դիրքում մնալ, ընտրում է իր ասելիքը բարձրաձայնելու այս եղանակը: Զրույցները Ֆոնտանեի համար և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային առումով կարևորագույն նշանակություն են ստանում: Նրան հաջողվում է բազմաթիվ գրույցների հարուստ բովանդակությամբ ստեղծել ժամանակի խայտաբղետ մի պատկեր, և ապա իրական դարձնել այդ պատկերը գրույցների միջոցով, որոնք վեպում անկախանում են իրենց հեղինակից և ստեղծում իրենց աշխարհը: Այդ աշխարհում վեպի հերոսները ապրում են իրենց առօրյա հոգսերով և ոչնչով չեն տարբերվում իրական մարդկանցից: Ֆոնտանեն ամենայն մանրամասնությամբ հոգացել է, որ իր հերոսները լինեն այնպիսին, ինչպիսին որ կարող են լինել նման հանգամանքներում ապրող մարդիկ, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին ինքն է ուզում տեսնել նրանց, բացառությամբ թերևս

գլխավոր հերոս Դուբալավի, որը վեպում Ֆոնտանեի ես-ն է մարմնավորում: Ֆոնտանեի ռեալիզմի հիմնախնդիրներից մեկն էր և շատ հաճախ նա քննադատում էր այս կամ այն հեղինակին, որն իր ուսումնասիրության նյութն ընտրել էր անցյալից: Նա նաև թերահավատ էր պատմության ճշմարտացիության և գիտական օբյեկտիվության հանդեպ: Ուստի նա խոսում է այն իրականության մասին, որում ինքն է ապրում, ստեղծում է այնպիսի կերպարներ, որոնք կենդանի են իրենց իրականության մեջ: Այս նպատակի համար առավել կարևոր է կերպարների խոսքը, որը շատ բան է բացահայտում վերջիններիս մասին: Օրինակ, բարձր խավի ներկայացուցիչները իրենց խոսքում օգտագործում են ֆրանսերեն կամ անգլերեն բառեր՝ ի ցույց դնելով իրենց կրթությունը, իսկ հասարակ մարդկանց խոսքը ժողովրդախոսակցական և բարբառային մակարդակի վրա է: Հղում անելով Գյոթեի «Հերման և Դորոթեա» վեպին՝ Ֆոնտանեն գրում է. «*Այսպես կարող է Գյոթեն խոսել, բայց ոչ Դորոթեան: Պֆալցի մարզում ծնված հասարակ աղջիկը չի կարող այդպես խոսել*»¹⁷¹: Այսպիսով, գրույցը «ժամանակի վեպում» երկու նպատակի է ծառայում՝ ի ցույց դնել կերպարներին որպես հասարակության անդամներ և վերհանել ժամանակի կենդանի պատկերը: Վերը նշվեց, որ կերպարների խոսքը նվազագույնի է հասցնում հեղինակի սուբյեկտիվ միջամտությունը: Ֆոնտանեի մոտ հաճախ կարելի է հանդիպել բնության և որևէ տեղանքի մանրամասն նկարագրության, սակայն շատ հազվադեպ է հեղինակը որպես պատմող ներկայացնում իր կերպարներին: Դրա փոխարեն վեպի կերպարներն են խոսում են մեկը մյուսի մասին, և նրանց գրույցներից ենք մենք ստանում կերպարների բնութագիրը: Շատ հաճախ նման գրույցները, երբ խոսքը գնում է որևէ բացակա անձի մասին, նախապատրաստական բնույթի են: Օրինակ, Լորենցենը հաճախակի է դառնում գրույցի առարկա, և՛ նախքան նրան տեսնելը, և՛ ընթերցողը, և՛ վեպի մյուս հերոսները, որոնք այնքան շատ են լսել այդ յուրօրինակ քահանայի մասին, անհամբերությամբ սպասում են նրա հետ ծանոթությանը: Ֆոնտանեի կողմից կիրառվող այս առանձնահատուկ տեխնիկան, հիրավամբ, ստեղծում է փաստերի և երևակայության մի գեղեցիկ

¹⁷¹ Aus dem Nachlaß von Theodor Fontane. Berlin 1907, S. 221

խաղ, հատկապես, երբ խոսքը գնում է իրական անձանց մասին: Օրինակ, Բիսմարկը մշտապես գտնվում է զրույցների կիզակետում: Նրա կերպարը որպես պատմական անձ մեզ է հառնում ոչ թե պատմագրական փաստերի միջոցով, այլ նրա հետ միևնույն ժամանակաշրջանում ապրող հասարակ մարդկանց շուրթերից: Թեև Բիսմարկը որպես գործող անձ երբեք չի հայտնվում վեպում, բայց նրա մասին զրույցներն այնքան շատ են, որ նա երբեք էլ չի հեռանում վեպից՝ ստեղծելով իրականության պատրանք:

Հատկանշական է ևս մեկ հանգամանք. «Շթեխլինում» բացակայում են մենախոսությունները և կերպարների բարձրաձայն մտորումները: Ներքին հոգեվիճակը, հուզումները և թաքուն մտքերը երբեք բարձրաձայն չեն արտասանվում, և այստեղ առավել քան երբևէ նկատելի է «ամենագետ» հեղինակի բացակայությունը: Երբ լռում են կերպարները, լռում է նաև հեղինակը՝ որպես ունկնդիր, որը կարող է հետևել զրույցին, բայց երբեք չմիջամտել: Նման օրինակ, երբ կերպարները անկախանում են իրենց հեղինակից, մենք գտնում ենք Դոստոևսկու ստեղծագործություններում: Դոստոևսկու կերպարները անկանխատեսելի են, նրանք կարող են ընդվզել իրենց հեղինակի դեմ, հակառակվել նրան: Ֆոնտանեի դեպքում հեղինակն ինքն է ազատ թողնում նրանց՝ որևէ կերպ չմիջամտելով զրույցին իր մեկնաբանություններով: Ֆոնտանեի ոչ մի ստեղծագործության մեջ, բացառությամբ մի քանի դեպքերի, չի կիրառվում մենախոսություն: Երբեմն-երբեմն զրույցը կարող է վերածվել մենախոսության, երբ, օրինակ, զրուցակիցներից մեկը անընդհատ լռում է, բայց միևնույն է, այդ զրուցակիցը կա և նրան է ուղղված խոսքը, այլ ոչ թե ընթերցողին: Միակ դեպքը, որտեղ կերպարը միայնակ է և խոսում է իր մտքերի, հույզների մասին, նամակագրությունն է, թերևս նամակն ինքնին հաղորդակցության միջոց է, այսպես ասած լուռ երկխոսություն երկու կողմերի՝ նամակագրի և հասցեատիրոջ միջև, ուստի այս դեպքում ևս մենք ականատես ենք զրույցի:

Իրենց անկախությամբ հանդերձ՝ զրույցները «Շթեխլին» վեպում ենթարկվում են հեղինակի խաղի կանոններին: Թույլ տալով իր կերպարներին խոսել՝ Ֆոնտանեն, միաժամանակ, ուղղորդում է նրանց, ընթացք տալիս զրույցների հոսանքին և

ստեղծում գրույցի բունվելու պայմաններ: Ֆոնտանեի գրույցները որպես յուրորինակ սիմֆոնիա, կառուցվածքային որոշակի օրինաչափությունների են ենթարկվում: Օրինակ, վեպում հստակ գործում է նախագրույց-գրույց-հետգրույց մոդելը: Նախագրույցը, որպես կանոն, ընթանում է տիրոջ և սպասավորի միջև, որին հաջորդում է որևէ հյուրի հետ գրույցը, իսկ վերջինիս հեռանալուց հետո՝ հետգրույցը: Այդ շղթան պարբերաբար կրկնվում է: Ինքնին հետաքրքիր է հետգրույցը, որը շատ հաճախ բամբասանքի է վերածվում:

Ֆոնտանեն ռեժիսորի հմտությամբ կարողանում է ստեղծել գրույցների համար պատեհ պայմաններ և գրույցներին մասնակցության համար դերեր ընտրել: Օրինակ, նա ընտրում է որևէ մի հավաքույթ կամ ճաշկերույթ, որին ներկա են լինում մեկ տասնյակ մարդիկ: Այս մարդկանց նա բաժանում է զույգերի սեղանի մոտ նստելու համար և նրանց ներքաշում գրույցների սարդոստայնի մեջ: *«Ես Լորենցենին և Ռեքսին իրար կողք կնստեցնեմ. տեսնենք, թե ինչ կստացվի: Միգուցե նրանցից ինչ-որ մեկը մյուսին դարձի բերի: Ավելի շուտ, Ռեքսը՝ մեր քահանային»*:¹⁷² Դուբսլավը նման կերպ փորձում է առձակատել այս երկու կերպարներին՝ որպես հակառակ հայացքների տեր մարդկանց: Մեկ այլ օրինակ կարող է ծառայել նաև հեռագրի մասին գրույցը. *«Ահա այսպես է լինում հեռահար գրության դեպքում. որոշ դեպքերում այն օգնում է, որոշ դեպքերում էլ վնասում, իսկ ահա բարեկրթությունը հաստատ տուժում է դրանից: [...] Այժմ պետք է կարճ կապել [...]: Այ, օրինակ, «պարոն» բառը դուրս է եկել գործածությունից: [...] Այսօր տաղանդ է համարվում այն մարդը, ով կարողանում է խնայել հեռագրելիս»*,¹⁷³ - սրանք Դուբսլավի խոսքերն են, որոնց ի պատասխան բուրժուա Գունդերմանն ավելացնում է. *«Այո, պարոն Շթեյլին, այսպիսին են ժամանակները: Մրանք նորարարություններ են, որոնց մասնակից է լինում, ցավոք, նաև պետությունը: Ինչ է սա, եթե ոչ ամենաթողություն: Մրանով պետությունը ջուր է լցնում սոցիալ-դեմոկրատների ջրաղացին»*:¹⁷⁴:

¹⁷² Fontane, Th. Der Stechlin. Philipp Reclam jun. Stuttgart .1978. S. 23

¹⁷³ Ebenda, S. 26

¹⁷⁴ Ebenda, S. 25

Առաջին հայացքից այս գրույցը կարող էր սովորական թվալ, եթե այն չլիներ Ֆոնտանեի ստեղծագործության մեջ: Ֆոնտանեն հատուկ խնամքով է գրուցընկերների ընտրում իր կերպարների համար, նրանց դիվանագետի խորաթափանցությամբ ներքաշում գրույցների մեջ: Պատահական չէ, որ հեռագրի մասին խոսում են հին ազնվականը և բուրժուան: Եթե Դուբսլավը հեռագրությունը որպես բացասական երևույթ է դիտարկում միայն այն պատճառով, որ այն մարդկանց ստիպում է հրաժարվել քաղաքավարության կանոններից, ապա Գունդերմանը, որը հարմարավետության համար ընդունում է հեռագրի մուտքը կենցաղ, օգտվում է հարմար առիթից՝ քաղաքականացնելու թեման՝ հերթական անգամ թափելով իր մաղձը սոցիալ-դեմոկրատների վրա: Այսինքն, առաջին հայացքից անմեղ թվացող այս գրույցի ենթատեքստը ավելի խորն է, քան կարող է թվալ: Եվ նման օրինակները բազմաթիվ են:

Ինչպես տեսնում ենք, «Ժամանակի վեպում» գրույցը հարուստ գործածություն է ստանում: Գերմաներենում «Զրույց» հասկացության մի քանի տարբերակումից՝ երկխոսություն (*Dialog, Gespräch*), գրույց (*Gespräch*), թեթև գրուցակցություն, զբաղմունքի ձև (*Konversation, Plauderei, Causerie*), Ֆոնտանեի համար նախապատվելի է գրույցի երրորդ տեսակը՝ գրուցակցությունը որպես հասարակությանը բնորոշ երևույթ: Նրա կերպարների գրույցների հիմնական նպատակը տեղեկատվությունը կամ որևէ խնդրի լուծումը չէ, ուստի դրանց ընթացքում թեթև մթնոլորտ է տիրում: Բացառիկ դեպքերում միայն գրույցը կարող է վերածվել բանավեճի, որը, սակայն, շատ շուտ էլ ավարտվում է՝ բանավիճող երկու կողմերից և ոչ մեկին չպարզնելով հաղթության բերկրանք: Ավելին, բանավիճող գրուցակիցները, որոնք ուզում են ի ցույց դնել իրենց կարողությունները և իրենց տեսակետը համոզել, անհարմար իրավիճակներում են հայտնվում և ինչ-որ տեղ հեզնանքի ենթարկվում հեղինակի կողմից: Օրինակ, դոկտոր Վրշովիցի շեշտված առոգանությունը, որը էլ ավելի ցայտուն է դառնում բորբոքված ժամանակ, նրան ծիծաղելի է դարձնում, մեկ այլ դեպքում Վոլդեմարը նույնպես տհաճ իրավիճակի մեջ է հայտնվում՝ շփոթելով Միլլես (Millais) և Միլլե (Millet) նկարիչների անունները: Բանավեճերը վեպում միայն մեկ նպատակի են

ծառայում՝ հակասական կարծիքների միջոցով խոսել այդ ժամանակաշրջանին հատուկ արվեստի և մշակույթի միտումների մասին:

Ֆոնտանեի ամենասիրած ստույթներից մեկը հնչում է իր գլխավոր հերոսի՝ Դուբալվի շուրթերից. «*Շատախոս մարդը ամենամաքուր մարդն է*»¹⁷⁵: Ի դեպ, *rein* (մաքուր) բառը գերմաներենում երկու իմաստ է արտահայտում՝ մի դեպքում այն նշանակում է մաքուր, անբիծ, մյուս դեպքում՝ իսկական, գտարյուն: Ֆոնտանեն չի ասում «ամենալավ» մարդը, ուստի կարող ենք ենթադրել, որ նա կարող է նկատի ունենալ «մաքուր» բառի երկրորդ իմաստը՝ ըստ որի լեզուն, խոսքը զուտ մարդկային հատկանիշներ են, ինչը նաև լեզվաբանության և լեզվափիլիսոփայության դրույթներից մեկն է հանդիսանում: Ֆոնտանեի համար խոսելը որպես մարդաբանական հատկանիշ դառնում է կարևորագույն միջոց իր «ժամանակի վեպը» կառուցելու համար: Չենք կարող նաև անտեսել այն փաստը, որ նրա ստեղծագործություններում ամենադրական և պարզ մարդիկ խոսելու հակում են ունենում, ինչպես, օրինակ, Դուբալվը, որը, ինչպես և իր հեղինակը, *Causeur* էր՝ գրույցների մեծ սիրահար: «*Նա սիրով լսում էր ազատ կարծիք, մանավանդ, երբ այն դիպուկ և կտրուկ էր լինում: Հատկապես սիրում էր, երբ այդ կարծիքը չէր համընկնում սեփական տեսակետի հետ: Պարադոքսները նրա կիրքն էին: «Ես այնքան խելոք չեմ, որ ինքս կարողանամ ստեղծել պարադոքսներ, փոխարենը շատ եմ սիրում, երբ այդ ուրիշներն են անում. Այդտեղ միշտ ինչ-որ բան է թաքնված լինում: Անատարկելի ճշմարտություններ չկան, ու եթե լինեին, ապա շատ ձանձրալի կլինեին»:* Սիրում էր, երբ իրեն ինչ-որ բան էին պատմում, և սիրով էր գրույցի բռնվում»¹⁷⁶: Ֆոնտանեի Դուբալվը մարմնավորում է ամենասովորական մարդու կերպարը, որը սիրում է կյանքը և ապրում է առօրյա մանրուքներով: Առհասարակ, ամբողջ վեպը ստեղծում է առօրեականության մի մթնոլորտ, որտեղ ապրող մարդիկ իրենց մանր ու մեծ հոգսերով ապաստան են գտնում գրույցների մեջ, միաձուլվում իրենց նման մարդկանց հետ և կիսում նրանց հետ իրենց ժամանակը: Այդ

¹⁷⁵ Ebenda, S. 22

¹⁷⁶Fontane, Theodor: Der Stechlin. Philipp Reclam jun., Stuttgart 1978, S. 6

Ժամանակը, որը նաև Ֆոնտանեի ժամանակն է, հազեցած է մեծ ու բեկումնային իրադարձություններով և պատմում է 19-րդ դարի Գերմանիայի մասին: Նրա կերպարները խոսում են իրենց ժամանակաշրջանի մասին, կենդանի են դարձնում ժամանակը և դրանում տիրող իրականությունը: Ֆոնտանեն, այսպիսով, կարողացել է ստեղծել չկրկնվող գեղարվեստական ոճ, որը հետագայում կիրառելի է դարձել հաջորդ սերնդի գրականության համար: Նման օրինակ կարող է ծառայել 20-րդ դարի մեծանուն գերմանացի գրող, Նոբելյան մրցանակակիր Գյոթթեր Գրասի «Անեզր դաշտ» վեպը, որը, իր հիմքում կրելով գրույցի կիրառման գեղարվեստական մեթոդը, շարունակում է Ֆոնտանեի ավանդույթը:

«Անեզր դաշտ» վեպի գործողությունը սկիզբ է առնում 1889 թվականի դեկտեմբերին՝ Բեռլինյան պատի փլուզումից անմիջապես հետո, և ավարտվում 1991-ի ամռանը, որը նշանավորվում է Թեոդոր Վուտկեի՝ նույն Ֆոնտիի անհետանալով: Վեպի պատմողները, այսինքն՝ Պոցդամի՝ Թեոդոր Ֆոնտանեի արխիվի աշխատակիցները, սկսում են իրենց գրառումները Ֆոնտիի անհետանալուց հետո: Ֆոնտիին, որի բացակայությունը նրանք զգում են, հիշատակելու ցանկությունը առիթ է հանդիսանում պատմելու ժամանակի իրադարձությունները, որոնք հանգամանորեն ներթափանցում են վեպի գործողության մեջ, համընկնում են ընթերցողի ներկայի հետ և դեռևս թարմ են նրա հիշողության մեջ: Այս հանգամանքը հատկանշական է ժամանակը լուսաբանող վեպի (*Zeitroman*) համար: Որպես այդպիսին էր նա ընկալվել այն քննադատների կողմից, որոնք «Անեզր դաշտը» դասում են բացառապես «անցումային վեպի» շարքին: Մակայն այս մոտեցումը հակասում է վեպում արտացոլված պատմական համայնապատկերին, քանի որ գործողության մոտ երկու տարվա ժամանակահատվածում զետեղված են Գերմանիայի պատմության ավելի քան 150 տարիները՝ սկսած 1848 թ. նախահեղափոխական տարիներից և նույն թվի գերմանական մարտյան հեղափոխությունից, ռայխի հիմնադրման փուլից, գերմանական կայսրության, Առաջին համաշխարհային պատերազմի, «Երրորդ Ռայխի» և Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներից

մինչև նախկին ԳԴՀ-ն և վերամիավորումը: Պատմական այս ժամանակահատվածի իրադարձությունները ներթափանցում են գործողության ներկան երկու գլխավոր հերոսների լայնածավալ պատմական հիշողության շնորհիվ, որը պայմանավորված է Ֆոնտիի և նրա լրտես Լուդվիգ Հոֆթալերի, այսինքն նույն Թալիոֆերի կերպարների «անմահությամբ»։ «Լուդվիգ Հոֆթալերը, որի նախորդ գրական կյանքը «Թալիոֆեր» վերնագրով հայտնվել էր արևմտյան գրատոնավաճառում, գործունեության էր անցել անցյալ դարի 40-ական թթ. սկզբին, սակայն այն չէր ավարտել այնտեղ, որտեղ նրա կենսագիրը դրան վերջակետ էր դրել, այլ 20-րդ դարի 50-ական թթ. Կեսերից շարունակում էր օգուտ քաղել իր «ընդարձակ հիշողությունից»՝ ըստ երևույթին , շատ անավարտ մնացած դեպքերի պատճառով, որոնց թվին էր պատկանում նաև Ֆոնտիի դեպքը»¹⁷⁷: Այդ է պատճառը, որ Հոֆթալերը Ֆոնտիի «ցերեկային և գիշերային սուվերի» անվանումն է ստանում: Տարբեր հեռանկարներից բխող հուշերը գլխավոր հերոսները փոխանակում են իրենց զրույցներում: Գործողության հիմնական ընթացքում գլխավոր հերոսները զբոսնում են Բեռլինով մեկ և զրուցում 19-րդ և 20-րդ դդ., ԳԴՀ-ի և Պրուսիայի, 1848 թ. և 1989 թ. Հեղափոխությունների, 1871 թ. և 1989/90 թթ. Միավորումների, ինչպես նաև «Անմահի» (Թեոդոր Ֆոնտանեի) և այլ ժամանակակից և ոչ ժամանակակից գրողների կյանքի և ստեղծագործությունների մասին:

Ինչպես նշվեց, վեպին ուղղված հիմնական քննադատությունն այն էր, որ այնտեղ «ոչինչ չի պատմվում», գործողությունը բացակայում է: Սակայն նման պնդումը, անշուշտ, անհիմն է, քանի որ դժվար թե հնարավոր լիներ հաստատել այն, որ վիպական ժանրի պատմության մեջ մշտապես միայն պատմություններ են պատմվել: Ընդհակառակը, համաշխարհային գրականության մի շարք խոշորագույն վեպերի հիմքում ընկած են հենց զրույցները, օրինակ, Թոմաս Մանի «Կախարդական լեռը» վեպում կամ Ջեյմս Ջոյսի ստեղծագործություններում: Կամ անդրադառնանք նույն Ֆոնտանեի «Շթեխլին» վեպին, որի գործողությունն իր նամակներից մեկում գրողը հետևյալ սեղմ

¹⁷⁷ Grass, G. Ein weites Feld. Göttingen 1995. S. 11

նախադասությամբ էր բնութագրել. «Մի ծերունի մահանում է, և երկու երիտասարդ ամուսնանում են»¹⁷⁸: Ուշագրավն այն է, որ Ֆոնտանեի այս վեպի դեմ ուղղված քննադատության հիմքում նույնպես ձանձրալիության փաստն էր: Մակայն այսօր ժամանակակից գրականության հանրագիտարանում կարելի է «Շթեխլինի» մասին կարդալ հետևյալը. «Գործողության առումով շատ աղքատ, ամբողջովին զրույցի վրա հիմնված վեպը /.../ սկզբում քիչ ուշադրության էր արժանացել, սակայն այն այսօր համարվում է Ֆոնտանեի լավագույն երկերից մեկը»¹⁷⁹: Այն, ինչ Ֆոնտանեն գրել է իր «Շթեխլինի» մասին, ընդհանուր առմամբ, նաև վերաբերում է նրա ուշ շրջանի ամբողջ ստեղծագործությանը: Տարեց Ֆոնտանեն, այսինքն, «Ջենի Թրայբել», «Փոզենփուլս» և «Շթեխլին» վեպերի հեղինակը, հրաժարվում է ամեն տեսակի «վիպականից»: Ինչպես վկայում է նրա նամակներից մեկը, այժմ գրողի ուշադրության կենտրոնում «ամենաչնչին բաների <...> ճշգրիտ և մանրախնդիր նկարագրությունն է, ինչպես նաև վերջինիս գեղարվեստական ռճավորումը՝ թվացյալ ամենապարզ, բայց և այդ պատճառով ամենաբարդ միջոցներով, մասնավորապես պարզության, թափանցիկության և ամբողջում տեսանելիության»¹⁸⁰: Փաստորեն, Ֆոնտանեի ուշ շրջանի ստեղծագործության մեջ գործողությունը երկխոսության միջոցով փոխարինվում է իրադրության մեկնաբանությամբ:

Այս նույն սկզբունքն ընկած է նաև Գրասի «Անեզր դաշտ» վեպի հիմքում: Գրասը համարում է, որ վերականգնման ժամանակահատվածից (1814-15) ի վեր երկրում ոչ մի փոփոխությունների հանգեցնող իրադարձություն տեղի չի ունեցել:

¹⁷⁸ Briefentwurf an Adolf Hoffmann 12.5.1897. In: Fontane, T.: Werke, Schriften und Briefe. Hrsg. Von Walter Keitel und Helmut Nürnberger. München, Haser, 1970 ff. Hier Werke II, S. 424

¹⁷⁹ Մեջբերումը ըստ՝ Bachorski, H. J.: Wie der politische Furor einmal den literarischen Verstand vollends unterpflügte. Die Primärrezeption von Günter Grass „Ein weites Feld“. In: Mitteilungen des deutschen Germanistenverbands. Heft 4/2000. S. 440.

¹⁸⁰ Fontane, Th.: Briefe. Zweite Sammlung. II, S. 334.

Հետևաբար հասկանալի է դառնում, որ նա յուրաքանչյուր գործողությանը թվացյալ գործողության իմաստ է հաղորդում և վերջին հաշվով ընդհանրապես ժխտում գործողությունը: Մրա մասին է վկայում Ֆոնտիի՝ թոռնուհուն գրված նամակը. «*Դու գիտես, սիրելի՛ զավակ, որ իմ հետաքրքրությունը խոշոր, փողային երաժշտությամբ ուղեկցվող իրադարձություններից դուրս է: /.../ Քանի որ անգամ ողբերգական իրողությունների ժամանակ, ինչպիսիք են փոխիրաձգությունը կամ սպանությունը, /.../ համապատասխան արյունազեղ իրադարձությունները շատ քիչ տեղ են զբաղեցրել իմ գործերում: Սակայն ինձ համար պատմության ընթացքը մշտապես բնորոշել է ամենուրեք, անգամ հեռավոր Ամերիկայում առկա, հաճախ միայն կամաց բարսիտող մեղքը: Ինչ է գործողությունը: Հաճախ միայն աթոռների թեթև տեղափոխություն և ուրիշ ոչինչ:¹⁸¹ Ֆոնտիի դստեր հարսանյաց տոնակատարության ժամանակ հին Դաշնային Հանրապետությունում ապրող Ֆոնտիի կրտսեր որդի Ֆրիդել Վուտկեն պահանջում է «մեղքի անողոք բացահայտում»¹⁸²: Ընդ որում, մեղքի տակ նա հասկանում է Գերմանիայի բաժանումը և ԳԴՀ-ի տնտեսական անկումը: Դրան Ֆոնտին այսպես է պատասխանում. «*Ամեն բան չափազանց ճիշտ է: Սակայն մեղքը անեզր դաշտ է, և միավորումն էլ ավելի անեզր է, ուր մնաց՝ - ճշմարտությունը*» /295-296/: Ինչպես հեղինակի մյուս երկերում, այստեղ ևս հիմնականը մեղքի թեման է: Մրանից հետևում է, որ Գրասը, ի տարբերություն իր քաղաքական ճառերի, չի կարող և չի ցանկանում միանշանակ լուծում տալ, այլ դրդում է ընթերցողին խորհել այն բանի մասին, որ մեղքը պետք չէ փնտրել միայն նախկին ԳԴՀ-ում, այլ ավելի շուտ՝ պատմական գործընթացի ընթացքում: Հենց այդ պատճառով էլ նա կրկնապատկում է իր գլխավոր հերոսի կյանքը զուգադրելով այն Ֆոնտանեի կյանքին և գործունեությանը, որի արդյունքում պատմվող ժամանակահատվածը ձգվում է 150 տարի:*

Ամփոփելով, կարող ենք ասել, որ եթե Ֆոնտանեի ստեղծագործության մեջ գերակշիռ մաս են կազմում գրույցները

¹⁸¹ Grass G. Ein weites Feld. Göttingen 1995. S. 535-536.

¹⁸² Grass G. Ein weites Feld. S. 295.

հասարակական մեծ և փոքր խմբերի միջև, որոնք ստեղծում են համապատասխան միջավայր և արտացոլում են իրենց ժամանակը, ապա Գրասի վեպում հիմնականում առկա է երկխոսություն երկու գործող անձանց միջև, որոնք վերլուծության են ենթարկում ոչ միայն իրենց ժամանակը, այլ պատմական անցյալը՝ այսպիսով մերձեցնելով երկու դարաշրջաններ: Քննելով գեղարվեստական գրույցի կիրառումը Թ.Ֆոնտանեի և նրա ավանդույթը շարունակող գերմանացի մեծանուն գրող՝ Գ.Գրասի ստեղծագործություններում՝ մենք հայտնվում ենք գեղարվեստական նոր լուծումներով հագեցած և նորանոր բացահայտումներ խոստացող գրական երկերի «անեզր դաշտում»:

*Елена Этарян
Армине Мкртчян*

**БЕСЕДА КАК ПРИЕМ В ПОЭТИКЕ РОМАНОВ
«ШТЕХЛИН» Т. ФОНТАНЕ И «БЕСКРАЙНЕЕ ПОЛЕ» Г. ГРАССА**

Данная статья посвящена рассмотрению беседы как основного поэтического средства построения «романа времени». В рамках статьи рассматриваются роман немецкого писателя-реалиста 19 века Теодора Фонтане «Штехлин» и роман «Бескрайнее поле» лауреата Нобелевской премии Гюнтера Грасса. Беседы в романе Фонтане воссоздают общественную картину 19 века, а в романе Грасса превалируют диалоги между двумя главными героями, благодаря которым перед взором читателя простирается историческая картина немецкой истории за последние 150 лет.

*Elena Etaryan
Armine Mkrtychyan*

**CONVERSATION AS A DEVICE IN THE POETICS OF T.
FONTANE'S "DER STECHLIN" AND G. GRASS'S "TOO FAR
AFIELD"**

In the given paper conversation is viewed as major poetic means of organizing the "novel of the time". The study is based on the novel of "The Stechlin" by the 19th century realist writer Theodor Fontane and also the sensational novel "Too Far Afield" by Nobel prize winner Gunter Grass. The conversations in the novel by Fontane build up the picture of social life of the 19th century while in the novel by Grass the conversations which are

mainly between the major characters open up the picture of the German History of the last 150 years .

**ВТОРАЯ ВЕРСИЯ ФИЛОСОФСКОЙ ДРАМЫ
«ИСКУШЕНИЕ СВЯТОГО АНТОНИЯ» В СТАНОВЛЕНИИ
ТВОРЧЕСКОЙ ИНДИВИДУАЛЬНОСТИ ГЮСТАВА
ФЛОБЕРА**

Флобер называл философскую драму «Искушение святого Антония» «трудом всей своей жизни».¹⁸³ В основу ее сюжета положен один из эпизодов жития Антония Великого – в нем повествуется об искушениях, каким подвергал основателя монашества дьявол, являясь перед ним в разных обликах.

Своим рождением драма обязана картине Брейгеля Младшего Адского. Художник изобразил искушения отшельника как его диалог со Смертными грехами на фоне бесконечного шествия древних богов и чудовищ. Флобер нашел в картине пластическое воплощение ментальных процессов, тот «вихрь образов», что возникал в его сознании, движение внутренней, истинной для него жизни.¹⁸⁴ В юношеской повести «Мемуары безумца» (1838) Флобер писал: «Моя жизнь – не события, моя жизнь – это мысль».¹⁸⁵ И в трех версиях «Искушения святого Антония», жизнь писателя представлена в драматической форме как история его мысли.

Первая версия драмы (1849) была создана в то время, когда Флобер принял равное обету решение быть писателем, подчинить всю свою жизнь законам искусства. В первом «Искушении» он стремился изобразить превращение смертного человека в творца, его занимала проблема рождения художественного образа. Святой Антоний выступает в драме как символическая фигура художника, погруженного в самопознание и творчество.

В юности Флобер следовал романтической традиции.

183 Флобер Г. Письма; Статьи. В 2-х томах. Т.2 М.1984. С 108

184 Там же, с. 84.

185 **Флобер Г.** Мемуары безумца. Проза 1835-1842 годов / Перевод с французского Г. Модиной. М.: Текст, 2009. с. 64-65

Творчество он представлял стихийно-интуитивным процессом, и всякого творца называл Поэтом. Первую версию «Искушения» он предназначал для печати, но критика друзей, прозаика Максима Дю Кана и поэта Луи Буйе, заставила его отказаться от этого намерения.

Над второй версией «Искушения святого Антония» Флобер работал после путешествия на Восток. Во время восточного странствия (1849-1851) в сознании писателя формируется иное представление о творце. Теперь Поэту он противопоставляет Художника, способного «изображать всеобщее в природе и мире».¹⁸⁶ По возвращении из путешествия, формулируя принципы объективного письма, он скажет: «Я продвинулся в эстетике, или, по крайней мере, утвердился на давно избранном пути», и подчеркнет: «Я *знаю*, как надо писать».¹⁸⁷ Вторая версия драмы была закончена в 1856 году. Сцены из нее были опубликованы Теофилом Готье в журнале «L'Artiste».¹⁸⁸

В 1872 году Флобер вновь возвращается к истории Антония Великого. К этому времени он определил искусство как познание истины посредством прекрасного.¹⁸⁹ В третьей версии писатель занят выяснением границ человеческого познания и самой возможности истинного знания о мире. Эта версия была издана при жизни Флобера, в 1874 году.

Философская драма о святом Антонии, в отличие от знаменитых романов Флобера, редко привлекала внимание исследователей. «Сто лет забвения "Искушения святого Антония"», – назвал Андре Дюбюк опубликованную в 1974 году

186 **Flaubert G.** L'Éducation sentimentale // Œuvres complètes. Paris: Gallimard, Bibl. de la Pléiade, 2001. P. 1040.

187 **Flaubert G.** Correspondance / édition établie, présentée et annotée par Jean Bruneau. Paris: Gallimard, Bibliothèque de La Pléiade, 1980. Т. II. с. 29. (Подчеркнуто Флобером)

188 **Flaubert G.** La Tentation de Saint Antoine. Fragments // L'Artiste. 1856, décembre. P.19-22; 39-40; Flaubert G. La Tentation de Saint Antoine. Fragments // L'Artiste. 1857, janvier, P. 67-74; Flaubert G. La Tentation de Saint Antoine. Fragments // L'Artiste. 1857, février, 1857. P. 114-119

189 **Флобер Г.** Письма; Статьи. В 2-х томах. Т.1. М., 1984.с. 388

статью.¹⁹⁰ И в настоящее время, несмотря на блестящие работы французских литературоведов,¹⁹¹ она остается «самым не изученным, не читаемым и самым таинственным из всех произведений Флобера».¹⁹²

Исследователи, как правило, чаще обращались к третьему, варианту драмы, значительно реже к первому, а самостоятельность второй версии подвергалась сомнению. В ней видели исправленную драму 1849 года,¹⁹³ чаще не упоминали о ней,¹⁹⁴ а порой отрицали ее существование.¹⁹⁵

Первые публикации ранних версий драмы не позволяли составить точного представления о них.¹⁹⁶ Издатели исключили из текста неясные по смыслу строки и ремарки, какими Флобер

190 **Dubuc A.** Un centenaire oublié, La Tentation de saint Antoine // Les Amis de Flaubert. 1974. N. 45. P. 9-17.

191 **Bem J.** Désir et savoir dans l'œuvre de Flaubert. Étude de La Tentation de saint Antoine. Neuchâtel: A la Baconnière, 1979; **Bruneau J.** Les Débuts littéraires de Gustave Flaubert 1831-1845. P. Armand Colin, 1962; **Gothot-Mersch C.** Introduction // Flaubert G. La Tentation de saint Antoine / édition présentée et établie par Claudine Gothot-Mersch. P. Gallimard, 1983.P.10-45; **Séginger G.** Naissance et métamorphoses d'un écrivain: Flaubert et Les Tentations de saint Antoine. Paris: Honoré Champion éditeur, 1997; **Seznec J.** Nouvelles études sur La Tentation de saint Antoine. London: The Warburg Institute, University of London, 1949.

192 **Bruneau J.** Préface// Kim Yong-Eun. La Tentation de saint Antoine. Version de 1849. Génèse et structure. Chuncheon: Kangweon University Press, 1990. P. 11-19.

193 **Séginger G.** Naissance et métamorphoses d'un écrivain: Flaubert et Les Tentations de saint Antoine. P. Honoré Champion éditeur, 1997. P. 61-64

194 **Digeon C.** Le Dernier Visage de Flaubert. Paris: Aubier-Montaigne, 1946.; **Bruneau J.** Les Débuts littéraires de Gustave Flaubert 1831-1845. – Paris: Armand Colin, 1962 ; **Rey P.** Préface // Flaubert, Gustave. La Tentation de saint Antoine. P. Pocket, 1999. P. 7-21

195 **Bowman F.** Gisèle Séginger. Le Mysticisme dans la Tentation de Saint Antoine // Romantisme. 1987.№ 55.P. 126-127.

196 **Flaubert G.** La Tentation de Saint Antoine. Appendice versions de 1849 et de 1856//Flaubert Gustave. Œuvres complètes. P. Louis Conard, 1910. 18 vol. T. VIII. 496 p.

мог бы, по их мнению, «пожертвовать».¹⁹⁷ Рукописи были восстановлены Жизелью Сежанжер в 2013 году, их публикация открыла возможности сопоставительного изучения ранних версий «Искушения святого Антония».¹⁹⁸

Обе они имеют трехчастную композицию и сходную последовательность ключевых сцен, в то время как в драме 1874 года, более лаконичной, действие разворачивается в семи сценах, и порядок эпизодов в ней иной. Исследователи, не признавая самостоятельности второй версии, не могли не отметить ее отличия от первой. В 1856 году Флобер существенно сократил текст. Причину сокращений, как правило, объясняли несовершенством стиля первого «Искушения».¹⁹⁹

Однако стиль первой версии невозможно назвать невыразительным или грубым. Ее поэтика определена смыслом драмы, ставшей выражением творческой индивидуальности Поэта. Сущность искушений состоял в соблазне отказаться от творчества, признать неразрешимыми сомнения в том, что профанный субъект может стать существом сакральным – Поэтом. Живописность первого «Искушения» связана одной из главных проблем, организующих его смысловое пространство: проблемой рождения художественного образа. Ремарки и монологи первого «Искушения», демонстрируют бесконечность творческого воображения Поэта и одновременно составляют своеобразный архив образов, сюжетов, мотивов – набросков к новым книгам.

Работая над второй версией, Флобер руководствовался новыми эстетическими принципами, теми, что сложились во

197 **Flaubert, G.** La Première et la Deuxième Tentation de saint Antoine 1849 et 1856 // Œuvres complètes de Gustave Flaubert. - T. IX. – Paris: Club de l'Honnête homme, 1973. P 14

198 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // Gustave Flaubert. Oeuvres complètes. T.II (1845-1851). P. Gallimard, Bibliothèque de la Pléiade, 2013; **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // Gustave Flaubert Oeuvres complètes. – T.III (1851-1862. P. Gallimard, Bibliothèque de la Pléiade, 2013. P. 21- 150.

199 **Séginger G.** Naissance et métamorphoses d'un écrivain: Flaubert et Les Tentations de saint Antoine. – Paris: Honoré Champion éditeur, 1997.P.294

время его путешествия на Восток. Эти эстетические принципы излагает он в письмах 1850-х годов.

В это время отношение категорий «Прекрасное» и «Истина» приобретает в его эстетике характер гносеологический. Художественный текст он воспринимает как некий организм, обладающий телесной (форма) и духовной (мысль) сторонами. Гармония формы и воплощенной в ней мысли представляется ему условием единства истинного и прекрасного в искусстве. Рассматривая текст как единство «телесного» и «духовного», Флобер видит в нем качества физические и моральные. В зависимости от стиля произведение может обладать силой, мощью, крепостью, либо оказывается слабым, безжизненным.²⁰⁰ Сила невозможна без точности. Точное слово – критерий совершенного стиля.²⁰¹ В юности Флобер называл слово «далеким и слабым эхом мысли».²⁰²

Теперь гармония мысли и слова представляется ему возможной и необходимой. Ясную мысль можно воплотить в точном слове. Ложный пафос, мелодраматизм, дидактика и сентенциозность, лишают произведение силы. Потому бесстрастность художника – не только основа его творческой свободы, но первое условие воплощения истины в искусстве.²⁰³

В это время Флобер осознает себя не только художником, но художником-прозаиком. С прозой связывает он будущее литературы. Проза есть «новая система речи» и прозаический стиль должен достичь возможного совершенства.²⁰⁴

Ритм – первое требование, какое предъявляет Флобер к стилю прозы. Он прямо связывает ритм с точностью выражения мысли и экспрессией, то есть с теми свойствами стиля, какие

200 **Флобер Г.** Письма; Статьи. В 2-х томах. Т.1. . 1984.СС.129, 219-231, 240, 243, 399-400.

201 **Séginger G.** Naissance et métamorphoses d'un écrivain: Flaubert et Les Tentations de saint Antoine. – Paris: Honoré Champion éditeur, 1997. P. 220, 284

202 **Флобер Г.** Мемуары безумца. Проза 1835 – 1842 годов / Перевод с французского Г. Модиной – М.: Текст, 2009. с. 69

203 **Флобер Г.** Письма; Статьи. В 2-х томах. Т.1. М, 1984. с. 265, 339

204 Там же, сс.201, 256.

создают его «силу». С этим представлением о стиле Флобер работает над второй версией «Искушения святого Антония».

Трансформация драмы вызвана не изъятиями стиля первого «Искушения», но переменами в самосознании автора. В стремлении к большей объективности он исключает из второй версии эпизоды, связанные с глубоко личным переживанием творческого процесса. Увлеченность проблемами художественной формы сказалась в появлении новых смысловых акцентов. В первой версии Дьявол убеждал Антония в непреодолимых противоречиях духа и материи, с тем, чтобы уверить его в невозможности творчества. Автор драмы 1856 года убежден в том, что точная мысль может быть облечена в точную форму, и Дьявол, не отрицает этого, но теперь он внушает отшельнику сомнение в возможности понять сам принцип гармонии субстанции и формы: «Ведь прежде, чем найдешь истоки, необходимо открыть первопричину, внешний принцип, понять несотворенного Творца», – говорит он.²⁰⁵ Однако нельзя понять Природу творящую, не понимая Природы сотворенной, и наоборот, а потому обе остаются необъяснимыми, и принцип творчества оказывается непостижимым. Так, мотив искушения в драме 1856 года приобретает новый оттенок: сомнение в возможности овладеть совершенной формой. Словно преодолевая его, писатель переписывает текст, с тем, чтобы, не утратив выразительности, добиться большей точности в выражении мысли.

Он значительно сокращает ремарки и акцентирует внимание на монологах персонажей. Сами монологи становятся лаконичнее. Ритмически они организованы не менее четко, нежели монологи первой версии. Однако это иной ритм. Например, в монологе Лжепророчицы Каппадокийской их первой версии отчетливый ритм возникает, благодаря анафорам, лексическим и синтаксическим повторам и ярким ассонансам: «Я погрузалась в пропасти вулканов, главу склоняла в пасти

205 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // Gustave Flaubert Oeuvres complètes. T.III (1851-1862. P. Gallimard, Bibliothèque de la Pléiade, 2013. P. 102-103.

львов и так познала дух! Он в реве плоти, в сиянии огня, в неистовых порывах ветра! Вот он! Вот он! Упали стены городов, травую поросли руины, священник позабыл молитвы и бросился за мной в пустыню. Пусть нас с тобой умчит мой зверь, закружит смерч любви, я в бездну страсти увлеку тебя, и поцелуи, словно искры мощного пожара твои ланиты опалят, и всей душой внимать ты станешь невнятной песне леса: в ней с шорохом крыла голубки сплетается шипение змеи».²⁰⁶

Во второй версии Флобер, сократив монолог Лжепророчицы, не отказался от выразительных возможностей повторов, но замена причастий глаголами и сложных предложений простыми формирует ритм более динамичный: Дух – это пламя, плоть, дух – ураган! Он в них предстанет, только призови неистово! Мне верь! И вихрь моей любви тебе откроет бездны! Ко мне! Ко мне!²⁰⁷

С переменной ритма изменились интонации искусителей. Властно звучат бывшие прежде лирическими речи Грехов и Ересей. Эти энергичные, властные речи обращены к иному герою. Сокращая и перерабатывая живописные вступления к видениям отшельника, Флобер позволил ему больше действовать. Так, в сцене «Купания Дианы» описание не только сокращено, но перемежается репликами Антония. Видения возникают не по велению Дьявола, как это было в первой версии. Теперь Антоний читает Библию, и в его воображении оживает ветхозаветная сцена искушения Иуды Фамарью, а за ней – сцена охоты и купания Дианы. Пейзажные детали, бывшие в первой версии ремарками, становятся частью воспоминаний отшельника, характеризуют его ощущения.

Второй Антоний более сдержан в жестах и словах. Первый часто падал на колени, осенял себя крестным знаменем, вздыхал на все лады, кричал от страха, замирал в ужасе, закрывал уши ладонями, чтобы не слышать речей Гностиков,

206 Ibid., Т. II P. 384

207 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // Gustave Flaubert Oeuvres complètes. Т. III (1851-1862). P. Gallimard, Bibliothèque de la Pléiade, 2013. P. 43

метался, пытаюсь вырваться из хора Офитов и, боясь поддаться соблазняющим речам Аполлония Тианского, слезно просил: «Помилуйте! Оставьте! Уходите».²⁰⁸

Во второй версии Флобер удалил из реплик Антония значительную часть междометий, риторических вопросов, и отшельник стал более уверенным в себе. Он изумленно, со страхом слушает рассуждения Ересей, но не преклоняет колен пред Тертуллианом и гонит Аполлония Тианского словами: «Я не желаю слушать! Ступайте прочь!».²⁰⁹

Иначе ведет себя отшельник в сцене полета с Дьяволом. В первой версии Антоний, оказавшись высоко над землей, страшится бездны: «Я гибну, душа из тела рвется, а плакать страшно: вдруг с рыданиями умчится жизнь!».²¹⁰ Антоний во второй версии не испуган, но изумлен и восхищен: «Какой простор! Какая красота! Летят планеты, бесшумными снежинками кружатся звезды».²¹¹ Большую силу духа обнаруживает второй Антоний в финале драмы. Здесь он созерцает шествие древних Богов, а Дьявол и Логика внушают ему неизбежность гибели и языческих идолов, и Ветхозаветного Творца, и Бога Нового Завета. Первый Антоний, собрав все силы, гонит Логику: «Прочь, ты не нужна мне! Нет! Не нужен разум, мысли не нужны! Оставь меня, проклятая, и скройся с глаз моих навеки!» Тут же он падает на колени и, скрестив на груди руки, произносит: «Помилуй, Господи! Прости мне прегрешения! Прими меня! <...> Иисусе, помоги, спаси меня, Иисусе! Я мал, а ты велик!».²¹²

Реплика второго Антония, обращенная к Логике, энергичней и короче: «Прочь от меня! Ты – смерть духовная!».²¹³ И в ответ на слова Дьявола: «Нет тебе спасения! Не снизойдет божественная милость на грешника, столь низко павшего!».²¹⁴

208 Ibid, p. 409

209 **Flaubert G.** La Tentation de saint Antoine... p. 56

210 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // P.498

211 **Flaubert G.** La Tentation de saint Antoine... p.100

212 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // P. 571

213 **Flaubert G.** La Tentation de saint Antoine... p. 140

214 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // P. 645

Антоний уверенно провозглашает: «Иисусе, сын Божий, Бог Сын, Бог Отец, Бог Дух Святой – вы едины!».²¹⁵ Во второй версии драмы Антоний так силен, что Логика искушает его всезнанием, Гордыня – высшей гордыней, а Дьявол сетует: «Грехи состарились и одряхлели, Им не под силу обратить тебя ко мне».²¹⁶

Искуситель не только признает силу Антония, но предлагает ему занять его место: «Взгляни, истории настал конец, мир уподобился дворцу с гнилою крышей и рушится. Погибли Боги! Вавилон воскрес! Зло торжествует! ... Ты разве не желаешь стать владыкой безмерной красоты? Ты Дьяволом желаешь стать?».²¹⁷

Преодолевая искушение, отшельник взывает к Спасителю, и в итоге принимает свою судьбу, как принимает ее первый Антоний. Но первый делает это с большей покорностью: «Поступи со мной по воле твоей, я сын и раб твой!».²¹⁸ Второй произносит только: «Да будет воля твоя!».²¹⁹

Антоний второй версии – субъект более мыслящий, в отличие от первого, более чувствующего, Антония. Это не поэт, преодолевающий смятение, но художник, способный обуздать гордыню. Сопоставление первой и второй версий «Искушения святого Антония» показывает, что содержание драмы в целом осталось прежним: испытания отшельника, как и в первой версии, символизируют становление творческой личности. Стиль второго «Искушения» по-прежнему живописен. И все же в 1856 году над «Искушением святого Антония» работает другой Флобер – не поэт, но художник, прозаик, уверенный в своем призвании, ясно представляющий себе идеал стиля. Работая над второй версией, Флобер стремился придать монологам и репликам персонажей энергию, видениям Антония, психологическую достоверность, а всей драме – силу, какую

215 **Flaubert G.** La Tentation de saint Antoine... p. 140

216 *Ibid.*, p. 144

217 *Ibid.*

218 **Flaubert G.** La Tentation de saint Antoine (version de 1849) // P. 577

219 **Flaubert G.** La Tentation de saint Antoine... , p. 145

считал главным критерием совершенного стиля. Драма, завершенная в 1856 году, ставшая обобщением важного этапа в становлении творческой индивидуальности Флобера, заслуживает статуса самостоятельной версии «Искушения святого Антония».

Galina Modina

**THE SECOND VERSION OF FLAUBERT'S
PHILOSOPHICAL DRAMA THE TEMPTATION OF ST ANTHONY
IN TERMS OF FORMATION OF HIS CREATIVE PERSONALITY**

The paper deals with one of Flaubert's least read works in French and Russian literary criticism – the second version of “The Temptation of Saint Anthony”. The analysis of the style and major episodes allows considering the second version “The Temptation” to be the history of forming the creative individuality of Flaubert.

Է.ՌՈՍՏԱՆԻ «ՌՈՄԱՆՏԻԿՆԵՐԸ» ՊԻԵՄԻ ԺԱՆՐԱՅԻՆ և
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1891 թվականին նշանավորֆրանսիացիդրամատուրգԷդմոն Ռոստանն իր նամակներից մեկում գրում է. «Մի օր, կտեսնեք, ես կգրեմ իսկապես հիանալի չափածո մի պիես: Եվ այդ մի պիեսը բավարար կլինի հռչակավոր դատնալու և դասականների շարքերը դասվելու համար»:²²⁰ Այդ ծրագրի իրականացման համար առաջին մեծ փորձ է համարվում 1892 թվականին «ուրախ ստեղծագործական տենդով»²²¹ գրված երեք գործողությամբ «Ռոմանտիկները» չափածո կատակերգությունը: Այն բեմադրվեց 1894 թվականիմայիսի 21-ին, *Comédie française* թատրոնում, հայտնի դերասաններ

ԼըԲարգիի,

ԴըՖերոդիիևօրիորդՌայշենբերգիկատարմամբ, ինչը «մեծ պատիվ էր այդքան երիտասարդիեղինակիհամար»²²²: Նույն՝ 1894 թվականին Ռոստանն արժանացավ Տուարակ մրցանակին, որն ամեն թատերաշրջանում շնորհվում էր *Comédie française*-ի համար գրված լավագույն ստեղծագործության համար: Կարելի է ենթադրել, որ այս ընտրության մեջ կարևոր դեր խաղացին ֆրանսիացի մեծդերասաններԿոնստանԿոկլենիևՍառաԲերնարիդրական կարծիքները:

Պիեսիհաջողությանն արձագանքող բազմաթիվ քննադատների մի մասը դիտարկում էր հիմնականում բեմադրությունը: Այսպես՝ դարաշրջանի մեծ բեմադրող Ա. Անտուանը, գրելով, որ «*Էդմոն Ռոստանի "Ռոմանտիկները" Comédie française-ի մեծ հաջողությունն է*», միայն հպանցիկ է նկատում, որ պիեսն «*ինքն էլ շատ հաճելի գործ է*»:²²³

²²⁰Շստ. **Ripert E.** Edmond Rostand, sa vie et son oeuvre. P. 1968P.38

²²¹**Bourdon G.**La destinée de M. Edmond Rostand // L'Art du Théâtre. 1903. N 3.P.38

²²²**Anderson J.G.** Modern language teaching. Vol. IX. – London. Adam and Charles Black. 1913 – P. 26

²²³**Lautier A., Keller F.** Edmond Rostand, son oeuvre. – P., 1924. - P.13

Այդ ժամանակաշրջանի փարիզյան թերթերում Ռոստանին նվիրված հոդվածներում հիմնականում քննարկվում էր, թե որ ուղղության ավանդույթներն է շարունակում թատերագիրը: Այսպես Էմիլ Ֆագեն նմանություն էր նկատում «Ռոմանտիկների» և Ա. Դը Մյուսեի «Ինչ են երագում օրիորդները» պիեսի միջև, իսկ Լուի Օգմարի կարծիքով Ռոստանը ստեղծագործում է Հյուգոյի և Բանվիլի ոճով:²²⁴Իրականում՝ Ռոստանն իր այս պիեսում փորձում է միավորել ռոմանտիկական դրամայի ժանրային գծերը «լավ սարքած պիեսի» դպրոցի ոճով գրված զավեշտախաղի գծերի հետ: Պետք է նշել, սակայն, որ, ի տարբերություն ռոմանտիկական դրամայի, Ռոստանի պիեսի նպատակն է *ծաղրել* աշխարհի մասին կեղծ ռոմանտիկական պատկերացումը: Պատահական չէ, որ թե՛ վերնագրում, թե՛ ողջ պիեսի ընթացքում նա գործածել է ոչ թե *romantique*, այլ *romanesque* (վիպական) բառը՝ ընդգծելով պիեսի երիտասարդ հերոսների իդեալականացված աշխարհընկալման գրքային բնույթը: Այդ հիմնական խնդրի բացահայտման վրա էլ կառուցվում է գործողությունը, որը սկզբում գրեթե կրկնում է «Ռոմեո և Ջուլյետի» սյուժեն. հարևաններ Բերգամենն ու Պասկինոն ատում են միմյանց, իսկ նրանց զավակները՝ Պերսինեն ու Սիլվետան սիրում են իրար և գաղտնի հանդիպում տարածքներն իրարից բաժանող պատի մոտ: Սյուժեի զարգացումը խթանելու համար Ռոստանը գործածում է «*բարդացման*» հնարը՝ խճճելով առանց այն էլ բարդ իրավիճակը. Բերգամենը որդուն հայտնում է հին պատի տեղը նորի կառուցման և նրան իր ընտրությամբ ամուսնացնելու որոշման մասին: Պասկինոն իր հերթին խոստանում է դատեր ապահովության համար պատի երկայնքով երկայթյա ցիցեր տնկել:

Եթե առաջին երեք գործողությունները նմանակում են «Ռոմեո և Ջուլյետի» սյուժեն, ապա չորրորդում կատարվում է «լավ սարքած պիեսի» դպրոցի ներկայացուցիչներից փոխառնված *կտրուկ շրջադարձի* հնարը. Հանդիսատեսն իմանում է, որ Բերգամենն ու Պասկինոն իրականում ընկերներ են, նրանց նպատակն է ամուսնացնել զավակներին և միավորել իրենց տարածքները, բայց, իմանալով Պերսինեի և Սիլվետայի

²²⁴ЛуковВ.А. ЭдмонРостан. Самара. 2003. С.63

ռոմանտիկական հակվածության մասին (օրինակ՝ Պերսինեի բացականչությունը «*Եթե ամուսնանամ, ապա միայն ռոմանտիկ կերպով*»²²⁵, որոշում են Ստրաֆորելի օգնությամբ կազմակերպել Սիլվետայի առևանգումն ու Պերսինեի միջոցով նրա հրաշալի փրկությունը: Պերսինեն ու Սիլվետան ընկնում են ծուղակը, հավատում են «առաջնակարգ» առևանգմանն ու հայրերի հաշտությանը: Հեղինակի ծուղակն է ընկնում նաև հանդիսատեսը, որը գիտակցում է կատարվածի իր սխալ ընկալումը:

Պիեսի **կերպարային համակարգի** հիմնական առանձնահատկությունն այն է, որ հերոսները ոչ այնքան ինքնուրույն կերպարներ են, որքան **գաղափարներ**: Երիտասարդ Պերսինեն ու Սիլվետան ներկայացնում են այն մարդկանց, ովքեր ռոմանտիկան կյանքից առավել են դասում, իսկ նրանց հայրերի համար հակառակը՝ հաշվարկը ռոմանտիկայից վեր է: Ստրաֆորելը, ով օգնում է ծնողներին իրենց ծրագրերի իրականացման գործում, ներկայացնում է այդ երկու դիրքորոշումների ծայրահեղությունները. որպես «ռոմանտիկ» նա ավելի համարձակ և հնարամիտ է, քան Պերսինեն և Սիլվետան, բայց միաժամանակ աշխարհին նայում է ավելի սթափ, քան Բերգամենն ու Պասկինոն:

Այսքանով սահմանափակվում է գործող անձանց ցանկը (մնացած անձինք հանդես են գալիս միայն որպես բեմանկարի մի մաս): Պիեսում Ռոստանը թողնում է հերոսների այն նվազագույն քանակը, որը հնարավորություն է տալիս բացահայտել իր առջև դրված խնդիրը՝ միաժամանակ պահպանելով Շեքսպիրի պիեսի նմանակման բնույթը: Ավելացնենք նաև, որ պիեսում չկան բացասական, ոչ էլ ամբողջովին դրական կերպարներ. Ռոստանը բոլորին վերաբերվում է համակրանքով, հեզմական ժպիտով:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում «Ռոմանտիկներ» պիեսի **կառուցվածքը**: Հիշեցնենք, որ ըստ «լավ սարքած պիեսի» կանոնների, առաջին գործողությունը հատկացվում է էքսպոզիցիային («Ռոմանտիկներում» երիտասարդ հերոսներն անմիջապես «տեղեկացնում» են իրենց գործողությունների մասին՝

²²⁵Ростан Э. Пьесы. М. Изд-во «Правда». 1983. С. 31 (թարգմ. հեղինակի)

«Ռոմեո և Ջուլյետից» հատվածներ կարդալով), իսկ դրա ավարտին ձևավորվում է ամբողջ ստեղծագործության հանգույցը: Պիեսի ընդհանուր հանգուցալուծումն ընկալվում է միաժամանակ որպես առաջին գործողության կուլմինացիա: Այսպիսին է Է. Մկրիբի «Մի բաժակ ջուր» և «Ադրիեն Լըկուվրյոր», Է. Օժյեի և Վ. Սարդուի բազմաթիվ պիեսների կառուցվածքը:

Ռոստանի նորարությունը «Ռոմանտիկները» պիեսում կայանում է նրանում, որ առաջին գործողության ավարտն արդեն ստեղծում է պլոտի լիարժեք ավարտի տպավորություն. Պերսինեն և Միլվետան կարող են միավորել իրենց ճակատագրերը, իսկ նրանց հայրերը՝ իրենց տարածքները: «Լավ սարքած պիեսի» դպրոցի ավանդույթների համաձայն այստեղ կարելի էր ավարտել: Ըստ Լը Դոմի՝ «*պիեսը կարող էր ավարտվել հենց այստեղ: Բայց հեղինակի քմահաճությունը կամ էլ դրամատուրգիական տեխնիկայի զարգացման հանդեպ նրա հետաքրքրությունը հուշեցին այլ կուլմինացիա*»:²²⁶ Այդ կուլմինացիան երկրորդ և երրորդ գործողություններում պայմանավորված է առաջին գործողության վերջում աննշան թվացող դրվագով.

Բերգամեն

Թու ղթ: Սա ի նչէ:

Եվ Ձեր ստորագրություն նր...

Ստրաֆորել (խոնարհվելով)

Պարոն, սա հաշիվն է:²²⁷

«Ռոմանտիկների» երկրորդ գործողությունը սկսվում է առաջին գործողության սկզբին հակադիր տեսարանով. պատը քանդված է, սակայն ծնողների մեջ հակասություններ են ծագել: Նույն գործողության մեջ հանդիպում ենք դրամատուրգիայում լայնորեն կիրառվող «**ականջ դնելու**» հնարին: Հիշենք «Համլետը» (Պոլոնիուսը վարագույրի հետևում), «Տարսյուֆը» (Օրգոնը սեղանի տակ), «Էռնանին» (Դոն Կառլոսը պահարանում և դամբարանում), «Ժլատ ասպետը» (Ալբերը կողքի սենյակում) և այլն: Սակայն, ի տարբերություն վերը նշված օրինակների, «Ռոմանտիկներում»

²²⁶ **Le Daum H.** Introduction // **Rostand E.** Les Romanesques. Boston, 1924. P. XV

²²⁷ **Ростан Э.** Пьесы. М. 1983. С. 46

սիրահարների խոսակցությունը լսող հայրերը ոչ մի նոր բան չեն իմանում: Ռոստանի նպատակը՝ ինտրիգի բարդացումը չէ, այլ ռոմանտիկայի, գրքայնության, անտեղյակությանն առօրյա, սթափ գիտակցության հակադրությանընդմեջ:

Կառուցվածքի կարևոր տարր է հանդիսանում նաև **պատահականությունը**, որն, **ինտրիգի** հետ միասին, «լավ սարքած պիեսի» կմախքն է կազմում:

Ինտրիգը ենթադրում է նախապես մտածված միջոցներով նպատակին հասնելը, իսկ պատահականությունն անկանխատեսելի հանգամանք է, որը կարող է օգնել կամ խանգարել ինտրիգի զարգացմանը: «Ռոմանտիկներում» Ռոստանը ժխտում է «լավ սարքած պիեսի» գլխավոր սկզբունքը՝ պատահականության հաղթանակը. նա ընդգծում է, որ Պերսիսենն և Միլվետան միմյանց ճանաչեցին և սիրեցին ոչ թե պատահականության թելադրանքով, այլ ծնողների կամքով. Սիրահարների գաղտնիքը վերածվեց պաշտոնական նշանադրության ոչ թե պատահաբար, այլ ծնողների և Ստրաֆորելի խորամանկ քայլերի շնորհիվ. Ստրաֆորելի հաշիվը, որից Միլվետան իմանում է առևանգման իրողությունը, նրա ձեռքում հայտնվում է ոչ հանգամանքների բերումով, այն նրան են հանձնում ծնողները՝ որպես իրենց խոսքերի ապացույց: Ստրաֆորելի հաշիվը նույն դերն է խաղում, ինչ Սկրիբի մի բաժակ ջուրը, այն տարբերությամբ, որ Սկրիբի պիեսում այդ բաժակն ընդգծված պատահականությամբ շրջադարձային դեր խաղաց Եվրոպայի ճակատագրում, իսկ «Ռոմանտիկներում» Ստրաֆորելի հաշիվը՝ որպես սթափ հաշվարկի խորհրդանիշ, միանգամայն տրամաբանորեն է կապված պիեսի հիմնական խնդրի լուծման հետ:

Ռոստանի պիեսում հանդիպում ենք մեկ այլ՝ այսպես կոչված «**ճոճանակի**» հնարի, երբ կարճ ժամանակահատվածում գործողությունը նոր ընթացք է ստանում, որն այդուհանդերձ ոչ մի կերպ չի ազդում պիեսի ավարտի վրա: Այսպես՝ Միլվետան, չիմանալով, որ Պերսիսենն արդենամեն ինչ գիտի, որոշում է անտեղյակ ձևանալ, և գործողությունը ծավալվում է հակառակ ընթացքով, սակայն որոշ ժամանակ անց կրկին գործածվում է

«ճոճանակի» հնարը: Գործողությունը նորից հակառակ ընթացք է ստանում. սիրահարները, հասկանալով, որ դրամայի փոխարեն նրանք մինչ այժմ կատակերգություն են խաղացել (*Մենք տիկնիկներ էինք, որոնք ջանասիրաբար պարում էին /Չվարձացող հայրերի ձեռքերում*²²⁸), փոխադարձ թշնամանքով են լցվում: Ռոստանին բնորոշ է կատակերգականի և դրամատիկականի այդպիսի համատեղումը: Ճշմարտությունն իմանալուց հետո Պերսինեի և Սիլվետայի բաժանումը լիովին արդարացված կլիներ, սակայն նորից օգտագործվում է «ճոճանակի» հնարը.

Միլվետա

*Նրանց համար կլինեինք մենք առավել ծիծաղելի,
Եթե դադարեցնեինք սիրել միմյանց.*²²⁹

Եվ հերոսները բաժանվում են՝ իրար սիրո խոսքեր ասելով: Պերսինեն, ռոմանտիկական հիասթափված հերոսների (մասնավորապես՝ Մյուսեի Օկտավի) օրինակով, որոշում է փախչել, իրական կյանքն իր բոլոր հաճույքներով վայելելու նպատակով: Ռոստանն ընդգծում է, որ Ճշմարտությունն իմանալը չանդրադարձավ Պերսինեի աշխարհընկալման վրա, նա մնաց նույն անուղղելի ռոմանտիկը: Բերգամենն ու Պասկինտն կրկին որոշում են իրենց տարածքները բաժանել պատով, որն էլ կառուցում է քարշարի կերպարանափոխված Ստրաֆորելը:

Չգեստափոխությունը, որը, որպես պայմանական հնար, հատուկ է ռոմանտիկական դրամային (օր. Հյուգոյի «Մարիոն Դելոր», «Էռնանի», «Արքան զվարճանում է» և այլն), Ռոստանի պիեսում օգտագործվում է Սիլվետային ռոմանտիկական մոլուցքից «բուժելու» նպատակով: Ինչպես և Պերսինեն, Սիլվետան, իմանալով ճշմարտությունն իր առևանգման մասին, չի ազատվում գրքային պատկերացումներից, նա ավելի է տարվում դրանցով՝ նամակագրական կապի մեջ մտնելով անձանոթի հետ, ով հենց Ստրաֆորելն է: Վերջինս համոզված է, որ տնից հեռացած Պերսինեն շատ արագ կաթափվի իրական կյանքի հետ բախվելու արդյունքում, իսկ Սիլվետային նա որոշում է պատրանքներից ազատել գրոտեսկի հասցված ռոմանտիկայի միջոցով՝

²²⁸Ibid, стр. 71

²²⁹ibid

ներկայանալով նրան որպես «ասպետ դ'Աստաֆյորկվերչիտա՝ քանաստեղծ, երագող և մարկիզ»: Վերադարձած Պերսինենն նորովի է պատկերացնում ռոմանտիկականը՝ դրա իրական աղբյուրը գտնելով միայն բնության մեջ, մինչդեռ Միլվետան հանգում է այն մտքին, որ շրջապատող աշխարհի գեղեցիկն ու ռոմանտիկականը կարող են տեսնել միայն քանաստեղծական հոգի ունեցողները.

Միլվետա

Պոեզիան հավերժ ապրում է սիրահարների սրտերում[...]

Մեր սրտերում պետք է փնտրենք մենք երագները երկնային.²³⁰

Վ.Լուկովն իրավացիորեն նկատում է, որ կլասիցիստական դրամատուրգիային հատուկ հիմնական խնդիրը զգացմունքին պարտքի հակադրումը, «Ռոմանտիկներում» փոխարինվում է զգացմունքին շահի հակադրումով, բայց գալիս է, մեր կարծիքով, թերի եզրակացության, որ պարտքի փոխարինումը շահով ավելի մոտ է նեոռոմանտիզմին, քանի որ լիովին «համապատասխանում է XIX դարի երկրորդ կեսի հասարակական կյանքի բնույթին: Կատակերգության մեջ ներկայացված է ռոմանտիկական պատրանքների և գործնականության ոգու բախումը: Մինչդեռ, ըստ Ռոստանի, այդ նոր բախումն անլուծելի չէ, այդ իսկ պատճառով նրա գրչի տակից դուրս է գալիս ոչ թե ողբերգություն, այլ թեթև, ուրախ կատակերգություն»²³¹:

Հիմնականում ընդունելով այս կարծիքը՝ չենք կարող չնշել, որ վերոնշյալ բնութագրումը նեոռոմանտիզմին հատուկ չէ: Նեոռոմանտիկական դրաման, բնականաբար, պայմանավորված է հասարակական կյանքի խնդիրներով, սակայն չի կարող «համապատասխանել» դրան: Հակառակը՝ նեոռոմանտիկները ձգտում էին հեռանալ իրականությունից և իդեալները փնտրել հերոսական անցյալում, իսկ Ռոստանի պիեսում ծաղրի են ենթարկվում հենց ռոմանտիկական պատրանքները, նրանց անհամապատասխանությունն իրական կյանքին: Այդպես որ «Ռոմանտիկները», մեր համոզմամբ, չի կարելի համարել նեոռոմանտիկական դրամա:

²³⁰ Ibid, стр. 94

²³¹ Лукнов В.А. Эдмон Ростан. Самара. 2003.С.83

Ավելացնենք, որ նեոռոմանտիկների համար «պատրանքների և գործնականության ոգու բախումն» անլուծելի է, իսկ Ռոստանն իր պիեսում հեշտությամբ հաշտեցնում է պատրանքներն ու պրակտիցիզմը: Այդ պատճառով էլ նա ընտրում է կատակերգության ժանրը, որտեղ հերոսների ռոմանտիկայի հանդեպ միամիտ հավատքը բախվում է իրական, ոչ գրքային կյանքին: Սակայն, ըստ ժանրի օրենքների, այդ բախումը բարեհաջող լուծում է գտնում. ռոմանտիկայով տարված կերպարները պետք է հաշվի առնեն իրականությունը, մյուս կողմից անհրաժեշտ է ապրելակերպի մեջ ռոմանտիկա մտցնել: Այս միտքը Ռոստանը հաստատում է կարևոր գործոն հանդիսացող **պատի** միջոցով, որը նա անվանել է «*համր գործող անձ*»:²³² Պիեսի ավարտին պատը քանդելը կնշանակեր քանդել պատրանքը, իսկ պատը կանգուն թողնելը նշանակում է գիտակցաբար պահպանել պատրանքը բարեկեցիկ կյանքով ապրող քաղքենիների անհրաժեշտ չափաբաժնով: Այդ «չափավոր ռոմանտիզմը» բուրժուական երազանք է, և հենց այդ եզրահանգման են գալիս պիեսի երիտասարդ հերոսները: Ի տարբերություն XIX դարասկզբի ռոմանտիկական պիեսների հերոսների՝ նրանք մարտահրավեր չեն նետում բուրժուական հասարակությանը, այլ հաշտվում էրա հետ:

«Ռոմանտիկները» պիեսը գերում է նախ և առաջ իր փայլով և նրբագեղությամբ, նուրբ հեզնանքով, հոգու ռոմանտիկական մղումների և ազնվաբարո, վեհ արարքների մասին թախծալի երազանքով: Ռոստանի այդ կատակերգությունը քնարական է, այդ իսկ պատճառով «*ներելի են հերոսների զվարճալի խենթություններն ու ակնհայտ են նրանց զգացմունքների մաքրությունն ու անկեղծությունը*»:²³³

Tatevik Танзян

²³²**Bourdon G.** La destinée de M. Edmond Rostand // L'Art du Théâtre . – 1903. – № 33. – P. 146.

Բուրդոնի վկայությամբ՝ պիեսի առաջին տարբերակը վերնագրված էր «Պատը»

²³³**Михайлова А.Ор.** Cit. С. 2

ЖАНРОВЫЕ И КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ПЬЕСЫ Э.РОСТАНА «РОМАНТИКИ»

В статье рассматриваются жанровые и композиционные особенности пьесы Э.Ростана «Романтики», применение в ней художественных приемов: типичных для классического театра (подслушивание), для «хорошо сделанных пьес» (резкий поворот действия и «усложнение»), авторских («качели»), а также – введение «стены» как «немного действующего лица».

Tatevik Tanguyan

GENRE AND COMPOSITIONAL FEATURES OF E. ROSTAND'S "THE ROMANTICS"

The article discusses genre and compositional features of "The Romantics" by Edmond Rostand, the usage of artistic techniques in the play that are typical for classical theater (eavesdropping), for "well-made plays" (abrupt turn of actions and "complications"); as well as the introduction of the "wall" as "a silent actor."

**ԷԴՄՈՆ ՌՈՍՏԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԸՆԴՈՒՄԵՆՏԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԵԼՈՒՑԹԸ**

19-րդ դարի ֆրանսիացի նշանավոր դրամատուրգ Էդմոն Ռոստանը (1868-1918) հայտնի է հանրությանը նախ և առաջ որպես «Սիրանո դը Բերժըրակ» (1897) հերոսական կատակերգության հեղինակ, թեև ունի ոչ պակաս հայտնի մի շարք այլ գործեր՝ «Ռոմանտիկները» (1894թ.), «Հեռավոր արքայադուստրը» (1895թ.), «Սամարացի կինը» (1897թ.), «Արծվի ձագը» (1900թ.), «Շանտեկլեր» (1910թ.): Իսկ գրականագիտության համար մեծ արժեք է ներկայացնում Ռոստանի՝ Ֆրանսիական Ակադեմիա մուտք գործելիս արտասանած ելույթը, որը, հանդիսանալով ֆրանսիական նեոռոմանտիզմի կարևորագույն փաստթուղթ և իր մեջ ամփոփելով այդ ուղղության բոլոր հիմնական դրույթները, այդուհանդերձ ցայսօր բավականաչափ ուսումնասիրված չէ: Բացառություն են կազմում միայն «Եվրոպայի տեղեկագրում» Զ. Վենգերովայի հոդվածը²³⁴ և Վ. Լուկովի մենագրությունը²³⁵, որտեղ հանգամանորեն քննվում են Ռոստանի ելույթի որոշ էական դիրքորոշումներ:

1901 թ-ի մայիսի 30-ին մահացած դրամատուրգ Անրի դը Բոնրնիեի փոխարեն Ֆրանսիական ակադեմիայի անդամ ընտրվեց Էդմոն Ռոստանը: Ակադեմիայի ավանդույթի համաձայն ելույթը պետք է վերաբերեր դը Բոնրնիեին, ում տեղը (№13) զբաղեցրեց Ռոստանը: Պոետն ինքը չէր առաջադրել իր թեկնածությունը, քանզի կարծում էր, որ իրեն, որպես Դրեյֆուսի կողմնակից, այդ հնարավորությունն ընձեռված չի լինի: Սակայն «Արծվի ձագը» դրաման Ակադեմիայի կողմից ընդունվել էր որպես Ռոստանի «ճկուն» դիրքորոշման ապացույց, իսկ քաղաքականության մեջ չխառնվելը՝ որպես դրեյֆուսյան շարժման հետ իր կապերի թուլացման նշան:

²³⁴Венгерова З. Edmond Rostand. Discours de reception a l'Academie francaise, le 4 juin 1903. Vicomte de Vogue. Reponse au discours de E. Rostand // Вестник Европы. – 1903. – Т.V. – С. 420-427

²³⁵ Луков В. А. Эдмон Ростан. Самара. 2003. - С. 172-187

Ռոստանին ընդունելու օրը Ակադեմիայի դահլիճում հավաքվել էին գրականության, արվեստի, գիտության ներկայացուցիչներ: Նիստը, ժամանակակիցների վկայությամբ, ամենահիշարժաններից էր: *«Բազմաթիվ հանդիսականների առջև,..... պարոն Մելշիոր դը Վոզելի ներկայությամբ, ով պետք է պատասխաներ Ակադեմիայի նորընտիր անդամին, կանցլեր պարոն դը Հերեդիայի և Ակադեմիայի մշտական քարտուղար պարոն Գաստոն Բուասիեի՝ Էդմոն Ռոստանը, սլացիկ և նրբաոճ իր կանաչ ֆրակով, կարդաց Անրի դը Բորնիեի մասին իր հիանալի էլույթը, որը հռետորին արժանացրեց դրամատիկ բանաստեղծի հնչեղ հաղթանակներին հավասար ծափողջունների»*²³⁶:

Անրի դը Բորնիեի (1825-1901թ.) անունը ներկայումս գրեթե մոռացված է, թեև նրա «Ռոլանդի դուստրը» ողբերգության (1868թ.) հաջողությունը նեոռոմանտիկական գեղագիտության ձևավորման առաջին ապացույցներից է: Բորնիեն առաջիններից էր, ով գիտակցաբար փորձում էր թատրոն վերադարձնել ռոմանտիկական չափածո դրամայի ավանդույթները: Նրա այդ տեսակետը բարձր գնահատանքի արժանացավ և՛ պահպանողական, և՛ ազատական քննադատների կողմից: Այսպես՝ Շառլ Միմոնը գրել է. *«Պարոն Անրի դը Բորնիեն նորարար է, ով իր արվեստի թեմաներն ու ձևերը փնտրում է անցյալում, ոչ թե ապագայում: Նա հանձն է առել վերակենդանացնել ողբերգությունն ու այն տեղափոխել ազգային պատմության ոլորտ»*²³⁷: XX դարում Ա.դը Բորնիեի ստեղծագործությունը դիտվում է Ֆ.Կոպեի, Վ.Սարդուի, Է.Ռոստանի ստեղծագործության հետ նույն՝ նեոռոմանտիկական համատեքստում:

Այսպիսով, ակադեմիական աթոռում իր նախորդի ավանդական գովաբանության անհրաժեշտությունը չէր հակասում ֆրանսիական նեոռոմանտիկական թատրոնի խնդիրների ձևակերպմանը: Պատմելով Բորնիեի մանկության, պատանեկության, հասունության մասին՝ Ռոստանը միաժամանակ

²³⁶ http://www.cyranodebergerac.fr/rostand_cyrano_contenu

²³⁷ Simond C. Henri de Bornier // Bornier H. Un cousin de passage. Comment on devînt beau. – P., 1891. – P. 1

իր ուշադրությունն է կենտրոնացնում *նոր* դարաշրջանի ռոմանտիկական հերոսի բնույթի վրա: Բորնիեի տարբեր դրամատիկ ստեղծագործությունների վերլուծությունը Ռոստանին հնարավորություն է ընձեռում ձևակերպելու գեղարվեստական ստեղծագործության իր հայեցակարգի որոշակի դիրքորոշումները: Ուսումնասիրելով «Լյութերի հարսանիքն» (*Le mariage de Luther*) ու «Դանթե և Բեատրիչե» (*Dante et Béatrix*) գործերը՝ Ռոստանը ցույց է տալիս գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության կախվածությունը դարաշրջանի տրամադրությունից, «Ռուլանդի դուստրը» դրամայի վերլուծությունը թույլ է տալիս առաջ քաշել *պանաշի* գաղափարը, հերոսականության և հայրենասիրական թեմայի հայեցակարգը:

Առաջ քաշելով իր ծրագրի՝ ըստ էության տեսական դրույթները Ռոստանը դիմում է զուտ գեղարվեստական միջոցներին. նա բանաստեղծ է ոչ միայն մասնագիտությամբ, այլև աշխարհի հանդեպ հատուկ բանաստեղծական հայացքով: Այսպես՝ աշխարհի մասին իր պատկերացումը Ռոստանը ներկայացնում է Ա.դր Բորնիեի ծննդավայր՝ Ֆրանսիայի հյուսիսում գտնվող Լյունել (Էրո) քաղաքի բանաստեղծական պատկերի միջոցով: Լյունելի կերպարը Ռոստանի պատկերմամբ կոչված է մարմնավորելու այն գաղափարը, որ աշխարհի նույնիսկ ամենաառօրեական երևույթներում առկա է բանաստեղծական, ռոմանտիկական կողմը, և, հետևաբար, երազայինն ու իրականը գոյություն ունեն ոչ թե տարբեր աշխարհներում, այլ միահյուսված են մեկ՝ իրական-երազային աշխարհում: Այս աշխարհընկալումն արտացոլված է Ռոստանի «Հեռավոր արքայադուստրը» պիեսում, իսկ հետագայում նաև նրա մյուս պիեսներում:

Պատմական Բորնիեն բավականին մռայլ անձնավորություն էր, բայց Ռոստանն ակադեմիկոսի անձի օբյեկտիվ գնահատականը փոխարինում է գեղարվեստական կերպարով՝ օգտագործելով կենսագրական փաստերի վրա հիմնված գրական կերպարի ստեղծման միջոցները:

Ռոստանն իր ստեղծագործության մեջ օգտվել է հերոսների պատկերման երկու սկզբունքից՝ բնավորության շարժունություն «Սիրանո դը Բերժրակ» կատակերգությունում և բնավորության

միօրինակություն, անշարժունություն «Արծվի ձագը» պիեսում, և Բորնիեի կերպարը ներկայացնելիս նա դիմում է երկրորդ սկզբունքին: Պատահական չէ, որ այդ կերպարն ունի դուքս Ռեյխշտադի որոշ գծեր: Իր ստեղծագործության մեջ առաջին անգամ հենց այդ պիեսում է Ռոստանը մանրամասնորեն մշակել «հայրերի աշխարհի» և «զավակների աշխարհի» հարաբերակցությունը՝ որպես ռոմանտիկական կերպարների երկու տիպ:

Ռոստանի գրչի տակ Բորնիեի պատմությունը նմանվում է «Արծվի ձագի» պատմությանը. որդին չափազանց թույլ է կրկնելու համար հոր հերոսական արարքները, նրա կյանքն անգույն է, բայց հոգին՝ հերոսական: *«Հավատացնում եմ ձեզ,- գրում է Ռոստանը,- որ երբ այդ խաղաղ պաշտոնյան դանդաղ քայլով անցնում էր կամրջով, իր երազանքներում նա արքայադուստրեր էր ազատում ու կանգնեցնում կատաղած ձիերին»*²³⁸:

Նման ձևակերպումը շատ կարևոր է մարդու՝ ռոստանյան հայեցակարգը հասկանալու համար, քանզի այն, ըստ Ռոստանի, միահյուսում է մարդկային բնույթի երկու կարևոր գծերը՝ հերոսությունն ու երազելու կարողությունը: Փոփոխվելով՝ այդ գծերը ստեղծում են մարդկային տեսակների շարք:

Առաջին տեսակ է համարվում հենց **հերոսը**, ով գործում է հատկապես բարոյական սխրանքներ: Նման հերոսներին կարելի է գտնել Բորնիեի լավագույն «Ռոլանդի դուստրը» դրամայում:

Այս պիեսը «Ռոլանդի երգը» ֆրանսիական հերոսական պոեմի երևակայական շարունակությունն է: Դրա վերջաբանը հիշեցնում է Լոպե դե Վեգայի «Սևիլիայի աստղը» պիեսի վերջին տեսարանը, իսկ պիեսն ամբողջությամբ գրված է կոմունյան «Միդի» նմանությամբ:

Ռոստանն իր ելույթում և, ընդհանրապես, իր գրեթե բոլոր գործերում մեծ տեղ է հատկացնում **պանաշին**, արիության յուրօրինակ ոգուն: Պանաշը Ռոստանի համար դառնում է **«հին»** հերոսությունը **«նորից»** տարբերող չափանիշ, և, հետևաբար, դառնում է դրամատուրգի նեոռոմանտիկական հայեցակարգի կարևորագույն դրույթներից մեկը:

²³⁸Ibid.- P. 15-16

Ռոստանի գեղագիտության մեջ պանաշի հակատիպը նշանակող հասկացությունը «*պարծենկոտությունն*» է (*la blague*): Առաջին անգամ Ռոստանը պանաշին հակադրում է «*ժամանակակից պարծենկոտությունն իր նողկալի ծիծաղով*»²³⁹ «Ստանիսլավի քոլեջի աշակերտներին» իր բանաստեղծության մեջ:

Այդ հասկացությունը կրկին հայտնվում է Ռոստանի ելույթում: Նրա բնութագրմամբ՝ պանաշն ազնվագարմ «կեցվածք» է²⁴⁰, և դրամատուրգը փորձում է այն անջատել «պարծենկոտությունից», հոգևոր լեցունությունը՝ հոգևոր աղքատությունից:

Ռոստանի հերոսական կերպարների շարքն ավարտվում է «*հոգով հերոսի*» կերպարով, ինչպիսին էլ, համաձայն դրամատուրգի, հենց Անրի դը Բորնիեն է: Այդ կերպարը «հերոս պանաշի» հետ միասին «նոր» ռոմանտիկական հերոսի հայեցակարգի կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում:

Ռոստանը հերոսականի գաղափարն իրականությունից տեղափոխում է երևակայության դաշտ: Անհրապույր արտաքինի և հերոսական հոգու հակադրությունը Ռոստանը համարում է Բորնիեի ռոմանտիկ դառնալու միակ պատճառը: Հակադրությունների անքակտելիության գաղափարը, շատ կարևոր էր Ռոստանի համար. նրա համոզմամբ հերոսականն առօրեականից դուրս գոյություն չունի: Միաժամանակ իրական և երևակայական կյանքով ապրելու մարդկային ունակության պատկերացումը դառնում է Ռոստանի ելույթում շարադրված արվեստի հայեցակարգի հիմնական դրույթը:

Ռոստանն իր ելույթում մեծ ուշադրություն է դարձնում արվեստի, հատկապես թատրոնի խնդիրներին: «*Թատրոնն իր պատմության մեջ պահում է այն արևոտ և խենթ օրը, երբ աթենացիները պարսիկների ներկայացումից հետո խմբվում են տաճարների մոտ ու թակում դռները՝ բացականչելով “Հայրենիք, հայրենիք...” Անհրաժեշտ է, որ ժամանակ առ ժամանակ ժողովուրդը կրկին լսի իր խանդավառության ձայնը, քանզի այդ ձայնով նա կարող է որոշել, ինչ բարոյական վիճակում է գտնվում:*

²³⁹ Rostand E. Le Cantique de l'Aile. P.1922. P. 102

²⁴⁰ www.edmond-rostand.com/discours

Եվ հատկապես մենք, որ այլևս չունենք ոչ հրապարակ, ոչ էլ որևէ այլ հավաքատեղի, ինչպես և կհիշենք համախմբվածության վեհ պահերը, անհամբեր ուժերի թրջոթոնները: Այժմ միայն թատրոնում է, որ կողք-կողքի նստած մարդիկ կարող են զգալ միմյանց հոգու թևերը»²⁴¹:

Ռոստանն իր ելույթում առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես արվեստում արժարժվող խնդիրներին: Նա բոլորովին չի ընդունում այն հեղինակներին, ովքեր իրենց «վեր են դասում» որոշ թեմաների մասին գրելուց. «Մի թե որոշ սյուժեներ չափազանց գեղեցիկ են, կամ էլ չափազանց վեհ: Ո՞վ է ասել նման բան: Ուրեմն նա բանաստեղծ չէ»²⁴²:

Արվեստի հիմնական խնդիրներից մեկը նա համարում է հանդիսատեսի երևակայությունն արթնացնելը, պատրանքին հավատալուն սովորեցնելը. «Թատրոնը մեծ առեղծված է, և մեր մեղավորությունը չէ, որ մարդիկ մոռացել են, թե ինչ սրբություն այն ունի, որ նրանք այլևս չեն զգում այն պահերի գեղեցկությունը, երբ ... ներկված կտորը դառնում է երկինք, իսկ շպարված մարդը՝ աստված: Պիեսներ չեն գրում այն դժբախտների համար, ովքեր հիշում են դերասանի անունը ...»²⁴³:

Թատրոնում երևակայության՝ որպես պատրանքային իրականության հաստատման կարևորագույն միջոց, Ռոստանը համարում է բանաստեղծական դրամայի ժանրը: Իր ելույթի ամենասկզբում Ռոստանը հայտարարում է, որ իր համար զգալիորեն հեշտ կլինեն հանդես գալ ոչ թե ելույթով, այլ պիեսով, որը, սակայն, կհակասեր Ակադեմիայի ավանդույթներին: Նա նաև ավելացնում է. «... և դուք, պարոնայք, կհամաձայնեք ինձ հետ, որ պիեսը, որտեղ կա նման անձմարտացիություն, կարող է գրվել միայն բանաստեղծությամբ»²⁴⁴:

Ռոստանի համոզմամբ նեոռոմանտիկական թատրոնի հիմքում ընկած է «անձմարտացիությունը», երազանքը, միայն առօրեական վիճակից հեռանալով, միայն բանաստեղծական

²⁴¹ ibid

²⁴² ibid

²⁴³ ibid

²⁴⁴ ibid

աշխարհում կարող է զարգանալ իրականության պատրանք, որին կհավատա հանդիսատեսը:

Մինչդեռ, հանդիսականի **երևակայության** արթնացումն ինքնանպատակ չէ, այն, ըստ Ռոստանի, կոչված է լուծելու արվեստի մեկ այլ հիմնական խնդիր՝ հանդիսատեսի **բարոյական դաստիարակությունը**: Երկու խնդիրներն էլ ներդաշնակորեն լուծվում են, երբ բեմի վրա մարմնավորվում է վեհ երազանքը:

Ելնելով **վեհ զգացմունքներն** արթնացնող ծրագրից՝ Ռոստանը ձևակերպում է նեոռոմանտիկական թատրոնի հիմնական գծերը. *«Բրական միտքը երևակայությանը թներ է տալիս, իսկ այն ինչ թեթն է, հոգին է: Ահա թե ինչու է անհրաժեշտ թատրոն, որտեղ, ոգևորելով քնարերգությամբ, բարոյախոսելով գեղեցկությամբ, մխիթարելով նրբագեղությամբ, բանաստեղծներն ակամա հոգու դասեր են տալիս: Ահա թե ինչու է անհրաժեշտ բանաստեղծական, նույնիսկ հերոսական թատրոն»*²⁴⁵:

«Բորնիեի պատվին ելույթի» շրջանակները հնարավորություն չէին տալիս Ռոստանին բաց **բանավեճի** մեջ մտնել գրական տարբեր ուղղությունների հետ: Մինչդեռ անկհայտ է, որ ոչ թե Բորնիեի դրամաներն, այլ ավելի շուտ «Սիրանո դը Բերժրակի» և «Արծվի ձագի» փորձն է կազմում նրա տեսական որոնումների հիմքը:

Բորնիեին նվիրված ելույթում, այսպիսով, ներկայանում է հենց Ռոստանի սկզբունքների որոշակի համակարգը: Սակայն ավելի կարևոր է այն, որ Ռոստանը, ընդհանրացնելով մյուս ֆրանսիացի նեոռոմանտիկների, հատկապես Բորնիեի, ձեռքբերումները, կարողացավ ձևակերպել ֆրանսիական նեոռոմանտիզմի ընդհանուր պահանջները: Այդ տեսանկյունից Ռոստանի ելույթն օբյեկտիվորեն կարելի է համարել նեոռոմանտիզմի մանիֆեստ:

Татевик Тангян

**РЕЧЬ Э.РОСТАНА ПРИ ВСТУПЛЕНИИ ВО
ФРАНЦУЗСКУЮ АКАДЕМИЮ**

²⁴⁵ ibid

Анализируется речь французского драматурга Эдмона Ростана при вступлении во Французскую академию. Изложенные в речи, посвященной жизни и творчеству неоромантика Анри де Борнье, принципы и задачи нового искусства, в частности – театра, идея *панаша*, позволяют считать речь Ростана манифестом французского неоромантизма.

Tatevik Tanghyan

E.ROSTAND'S SPEECH WHEN ENTERING FRENCH ACADEMY

The article analyzes the speech by French playwright Edmond Rostand when entering the French Academy, dedicated to the life and work of neo-romantic Henri de Bornier. The principles and objectives of new art, outlined in the speech, in particular, of theater, the idea of Panache, allow us to consider Rostand's speech a manifesto of French neo-romanticism.

ԺՈՋԵ ՂԵ ՍՈՋԱ ՍԱՐԱՄԱԳՈՅԻ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՎԵՊԸ

Պորտուգալացի երևելի գրող Ժոզե Ղե Սոզա Սարամագոն²⁴⁶ (1922-2010) գրական գործունեությամբ զբաղվել է երիտասարդ տարիներից, սակայն նրան հաջողվել է լայն ճանաչում ձեռք բերել միայն 60 տարեկանում: Սարամագոյին հաճախ են համեմատում Խորխե Լուիս Բորխեսի, Խուլիո Կորտասարի և Գաբրիել Գարսիա Մարկեսի հետ, չնայած գրողն ինքն իրեն առավել հոգեհարազատ էր համարում Միգել Սերվանտեսին և Նիկոլայ Գոգոլին:

1991-ին գրական ասպարեզում հայտնվում է նրա «Ավետարան ըստ Հիսուսի» աղմկահարույց ստեղծագործությունը, ուր հեղինակը միանգամայն այլ՝ շրջադարձային մոտեցում է ցուցաբերում և փորձում նոր տեսանկյունից դիտարկել Փրկչի կյանքին ու վախճանին վերաբերող հարցերը: Սարամագոյին հետաքրքրում է մարդու և Աստծո պայքարը: Նրա Հիսուսն ավելի շատ մահկանացու է, քան նոր ուսմունքի հիմնադիր: Առաքյալները ևս առավել նման են ուղեկիցների, քան հետևորդների: Իսկ Հուդայի մատնությունը տեղի է ունենում Հիսուսի իմացությամբ ու թույլտվությամբ: Նա անգամ գովաբանում է վերջինիս այդ ստորագույն քայլը, քանի որ պետք է իրականանար այն, ինչ նախատեսված էր: Հռոմեացի զինվորներով շրջապատված Քրիստոսն էլ լոկ մի պահ է ցանկանում հարություն տալ ինքնասպան եղած Հուդային, քանի որ անմիջապես հիշում է, որ ինքը Հրեաստանի թագավորն է, իսկ թագավորները հրաշքներ չեն գործում... Այսպիսով, կարելի է ասել, որ Սարամագոյի Հիսուսը կերտված է գնոստիկ Ավետարանի սկզբունքների համաձայն:

Գնոստիկ կամ իմացաբանական Ավետարանը, որը հայտնի է «Հուդայի Ավետարան» խորագրով, գրվել է մ. թ.ա. 300-400 թթ. հին եգիպտական լեզվով՝ *դպտիերենով*, այնուհետև վերջին ժամանակներում թարգմանվել մի շարք լեզուներով: Այն 1978-ին

²⁴⁶ Իսկական անուն-ազգանունը՝ Ժոզե Ղե Սոզա. Սարամագո կեղծանունը պորտուգալերենում վայրի շաղգամի ժողովրդական անվանումն է:

պատահաբար հայտնաբերել է մի ազարակատեր եգիպտական Մինյա քաղաքի մոտ գտնվող անապատում: 2000 թ. նշյալ Ավետարանը հայտնվեց Չվեյցարացի Ֆրիդա Նուբերգեր Չակուսի ձեռքերում, որի շնորհիվ ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության գիտնականները համակցված քննության միջոցով կարողացան վերծանել այն:

«Գնոստիկ» բառն ունի հունական ծագում և նշանակում է ճանաչողություն: Գնոստիկներն ստեղծել էին գաղտնի հասարակություն, որն ուներ աստվածաշնչյան երևույթների իր յուրատեսակ հասկացողությունը. նրանք գտնում էին, որ մարմինն ախտածին է, իսկ փրկության կարելի է հասնել միայն աստվածային ծագման սեփական ընկալմամբ: Սակայն, ըստ գնոստիկների, փրկվել կարող են միայն ընտրյալները: Իրենց հայեցակարգային ընկալման մեջ նրանք ավելի հեռուն էին գնում՝ հայտարարելով, որ բոլոր քրիստոնյաները խաբված են, և ճշմարիտ են միայն իրենք՝ գնոստիկները:

Հենց այդ պատճառով էլ Սարամագոյի վեպը, անտարակույս, չէր կարող վրիպել Վատիկանի ուշադրությունից: Ավելին, եկեղեցին սույն երկն անվանում է «պարսավազիր Նոր Կտակարանի դեմ», սակայն շուտով զարմանալիորեն հենց այս ստեղծագործության համար վիպասանը՝ որպես «երևակայության, հեզնանքի վրա հիմնված քարոզների» լավագույն ստեղծող, արժանանում է Նոբելյան մրցանակի:

Սարամագոյի երկը Նոր Կտակարանի բավական համարձակ մեկնաբանումն է. նրա Քրիստոսն ավելի շուտ մարդ է, քան Աստված, որին հատուկ են մարդկային ամենատարբեր կրքերը, զգացմունքներն ու երկմտանքները: *«Ինձ համար Հիսուս Քրիստոսը պարզապես մարդ է եղել»*, - ռուսական լրագրերից մեկին տված հարցազրույցի ժամանակ հայտարարում է Ժոզե Սարամագոն: *«Մարդ, որը հաջողակ էր կամ անհաջողակ, և որը դարձավ Աստծո ընտրելին, որին նա հավատում էր: Ես, օրինակ, չեմ հավատում Աստծո գոյությանը: Իսկ նրան Տեր Աստվածն ընտրել էր առաքելության համար, որն էլ, ինչպես գիտենք, հանգեցրեց նրա մահվանը»*:²⁴⁷

²⁴⁷ Независимая газета. 2001. 15 июня

Ժողովը Սարամագոյի վեպը գրական շրջաններում ևս տեղիք է տվել բավական հակասական, նույնիսկ իրարամերժ կարծիքների: Այսպես, օրինակ, Օլեյա Նիկոլանան վեպը քննում է սոսկ քրիստոնեական կրոնի տեսանկյունից և հայտարարում. «Քրիստոնեական մշակույթում Աստվածաշնչի մեկնաբանումը կարող է իրականացվել միայն վերջինիս հանդեպ ակնածանքի ու հոգացողության դրսևորմամբ»:²⁴⁸ Իսկ Դմիտրի Ստախովն ընդգծում է, որ վեպում էականը «Սարամագոյի՝ ոչ թե Աստծո դեմ պայքարի փորձերն են, այլ՝ այն ուժի առկայությունը, որը վեր է Աստծուց»:²⁴⁹

Սարամագոյին որոշ վերապահումներով ընդունված է անվանել մոզական ռեալիզմի ներկայացուցիչ, թեև նրա ստեղծագործություններին բնորոշ են նաև մարդկային հավասարության ու խոր հումանիզմի դրսևորումները: Մոզական ռեալիզմը հիմնականում ի հայտ է գալիս երևակայական դրվագներում:

«Ավետարան ըստ Հիսուսի» երկն առանձնանում է Ժ.Սարամագոյի բազմաբնույթ ստեղծագործություններից, քանի որ այն աստվածաշնչյան հայտնի իրողությունների բավական համարձակ ու ինքնօրինակ պատկերումն է և, ինչպես հիշատակվեց, ժամանակին առաջացրել է բավական լայն ու տարաբնույթ արձագանքներ: Ուշագրավն այն է, որ այստեղ գլխավոր հերոսն ավելի շատ հեղափոխական է, քան Աստծո խոսնակ: Հեղինակի հավաստմամբ՝ նա եկել է ոչ թե իրականացնելու մարգարեների կանխագուշակությունները, այլ խախտելու դրանք:

Վեպն սկսվում է Քրիստոսի խաչելությունը պատկերող որմնանկարի ծավալուն ու մանրակրկիտ նկարագրությամբ, որին հաջորդում է հյուսն Հովսեփի և Մարիամի նորաստեղծ ընտանեկան կյանքի հովվերգական պատկերումը: Արձակագիրն ամենայն մանրամասնությամբ տալիս է հրեական այդ համեստ ընտանիքի բնութագիրը և կտրուկ անցումով անդրադառնում Հիսուսի կերպարին:

Հիսուսը միայն Աստծո Որդին չէ: Ըստ հեղինակի՝ նա ամենից առաջ հյուսն Հովսեփի անդրանիկ զավակն է, որի լույս աշխարհ

²⁴⁸ Новый мир. 1999. № 1

²⁴⁹ Дружба народов. 2004. № 8

գալու խնդրում Աստված ունեցել է մասնակի դերակատարություն: Բավական հետաքրքրական է նաև այն, որ Մարիամին իր գավակի ծննդյան լուրը հայտնում է ինչ-որ մուրացիկ, որը հայտնվում է դռան շեմքին ու ողորմություն խնդրում: Ի պատասխան Մարիամի սրտացավ արարքի՝ նա վերջինիս հայտնում է իր որդու ծննդյան մասին և հավելում. «Այն, ինչ ունի սկիզբ, ունի և ավարտ»:²⁵⁰ Ընթերցողը նույն մուրացիկին այլակերպություններով հանդիպում է թե՞ քարանձավում, ուր նա Մարիամին մասամբ բացահայտում է անդրանիկ գավակի ընտրյալ լինելու գաղափարը, թե՞ տառապող մոր երագում, երբ Մարիամը տեղեկանում է Հիսուսի և Աստծո հանդիպման մասին իր որդու պատմած եղելության ճշմարտացիությանը: Նույն մուրացիկն է հանդիպում և Հիսուսին, որը, իմանալով իր ծննդյան պատճառով մանուկների սպանդի մասին և անցնելով հոգեկան անլուր տառապանքների միջով, ակամա հայտնվում է իր ծնված քարանձավում: Մարամագոյի մեկնությամբ՝ այս մուրացիկը, որն անգամ հաճախ սեփական արտաքինն է փոխում՝ անասելի հսկա կերպարանքից վերածվելով սովորական մահկանացուի, սկզբում ներկայանում է իբրև հրեշտակ, ապա, չգիտես ինչու կամ ինչպես, վերածվում է Հովվի, որը տարիներ շարունակ առաջնորդում ու դաստիարակում է Հիսուսին: Վիպական հյուսվածքում հետագայում պարզվում է, որ նա հենց ինքը՝ Սատանան է, որը ոչ թե թշնամաբար պայքարել, այլ համագործակցել է Աստծո հետ: Այս ցնցող բացահայտումը վիպասանը կատարում է Աստծո և Հիսուսի երկրորդ հանդիպման ժամանակ, երբ նավակի առաջամասին նստած՝ երկնքի Տիրակալը Քրիստոսին բացում է իր մտադրություններն ու տեղեկացնում նրան գալիքի մասին՝ ընդգծելով, որ Որդին չունի այլընտրանք. պարտավոր է սուկ հպատակվել իր կամքին:

Աստված տեղեկացնում է Հիսուսին, որ նրան սպասում է հետմահու ճանաչում ու փառք, որը, սակայն, ձեռք է բերվելու անմեղ զոհերի կյանքի գնով: Ասվածն առավել համոզիչ դարձնելու համար Արարիչը Քրիստոսին ցույց է տալիս արյան գետեր ու անգամ մանրամասն նկարագրում Փրկչի հետևորդներին սպասվող

²⁵⁰ Сарамаго Ж. Евангелие от Иисуса. (пер. А.Богдановского). М. Махаон. 1998.С. 16

անագորոյն մահվան տեսարանները: Այս լուրը հոգեցունց ազդեցություն է ունենում Քրիստոսի վրա: Իբրև հասարակ մահկանացու՝ Հիսուսն ընդվզում է նման հեռանկարի դեմ:

Նմանատիպ տեսարան կա նաև Մարամագոյին ժամանակակից ամերիկացի վիպասան Նորման Քինգսլի Մեյլերի (1923-2007) «Ավետարան ըստ Ռրդու» վեպում: Նշելի է, որ մեյլերյան Քրիստոսը միանգամայն այլ կերպ է ընդունում նման տեսիլքն ու հաշտվում է սեփական ճակատագրի հետ: Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում օծվելուց հետո Հիսուսն ասում է. *«Զգացի, որ կորցրածիցս շատ բան հետ եկալ: Ես վերագտա ինձ՝ աղքատ, բայց լալ մարդ: Ապա զգացի ավելին. ես փառքի տեսիլք ունեցա: Երկնքի դռները բացվեցին, և տեսա միլիոնավոր, ո՞չ, միլիարդավոր հոգիներ»*:²⁵¹

Սարագամոյի վեպում անհրաժեշտ է մատնանշել ևս մեկ կարևոր հանգամանք. Աստված ունի արտաքին նկարագրություն. *«Դա բարձրահասակ ծերունի էր՝ կրծքով մեկ փռված մորուքով, բաց գլխով, լայն երեսով ու մեծ բերանով, որի հաստ շրթունքները չէին շարժվում, երբ նա խոսում էր: Նա հագնված էր, ինչպես հարուստ՝ հրեա. հագին ուներ վառ կարմիր տունիկա, իսկ վերևից՝ երկնագույն, ոսկեկար երկարաթև թիկնոց, հասարակ և ամուր սանդալներ՝ կոշիկ, որ նախատեսված է քայլելու, այլ ոչ թե գեղեցկության համար, և անմիջապես կարելի էր ասել՝ նա, ով նման կոշիկ է հագնում, տեղում նստած չի մնում: Իսկ թե ինչ գույն ունեին նրա մազերը՝ ճերմակ՝ սև՝, շագանակագույն՝, դժվարանում ենք ասել. այդ տարիքում պետք է որ ճերմակած լինեին, բայց գուցե նա նրանցից է, ովքեր մինչև խոր ծերություն չեն ճերմակում»*:²⁵²

Թերևս առաջին անգամ գրականության մեջ Աստված ձեռք է բերում արտաքին նկարագիր, հայտնվում մարդկային կերպարանքով, թեպետ Հիսուսի հետ առաջին հանդիպման ժամանակ անապատում նա սուկ փոշու սյուն էր: Իսկ Մեյլերի վեպում Աստված իր Ռրդու հետ գրուցում է միայն իբրև ականջում հնչող ձայն կամ ներսից թելադրված ինչ-որ անբացատրելի

²⁵¹ Mailer N. The Gospel According to the Son. Ballantine Books. New York, 1997. P. 37

²⁵² Сарамаго Ж. Указ.соч. С. 297

զգացողություն: Նա անընդհատ Քրիստոսի կողքին է, և հրաշքները, որ վերջինս գործում է իր Հոր օգնությամբ, ուղղված են մեկ նպատակի՝ մարդկությանն ապացուցել, որ հայտնվել է իրենց Փրկիչը: Մինչդեռ պորտուգալացի գրողն ընթերցողի դատին է ներկայացնում նույն հրաշքների հպանցիկ դրվագները, սակայն նրա Հիսուսն այդ ամենն անում է ինչ-որ տեղ անգիտակցաբար: Աստված որոշ առումով հետապնդում է փառասիրական նպատակներ. նրան բնավ չի հետաքրքրում այն պարագան, որ մարդիկ սիրեն ու ընդունեն Փրկչին. Որդին անհրաժեշտ է նրան միայն մարդկանց հանդեպ անսահման իշխանություն ձեռք բերելու, այլ աստվածությունների հաղթելու և երկրի վրա սեփական ու միակ գերիշխանությունը հաստատելու համար:

Վեպի հիմնաքարը փոթորկալից ծովի կենտրոնում Աստծո և Հիսուսի հանդիպումն է, որը նախանշում է Քրիստոսի հետագա ճակատագիրը: Աստծուց տեղեկանալով հետագա սպասվելիք արհավիրքների մասին, որոնց պատճառն ակամայից ինքն էր լինելու, քանի որ այդ ամենը պայմանավորվելու էր հավատի խնդիրներով, մարդկության Փրկիչն ընդունում է իր սեփական որոշումը. պետք է խաչվել ոչ իբրև Աստծո որդի, այլ Հրեաստանի թագավոր: Սակայն, ավա դ, Աստծո որոշումներն անբեկանելի են, և մահկանացուներին վիճակված է խաղալիքների նման ի կատար ածել Բարձրյալի ծրագրածը: Ահա հոգեվարքի վերջին վայրկյաններն ապրող Հիսուսի աչքի առջև երկինքը երկփեղկվում է, և հայտնվում է Աստվածն ինքը. *«Նա հագնված էր այնպես, ինչպես նավակում եղած ժամանակ և, երբ խոսում էր, Նրա որոտընդոստ ձայնը սիռովում էր երկրի վրա. Դու իմ սիրասուն Որդին ես, որի հանդեպ բարեհաճ է հոգիս»:* Այդժամ Հիսուսը հասկացավ, որ իրեն խաբեությամբ են բերել այստեղ, ինչպես գառնուկին զոհասեղանի մոտ, որ ի սկզբանե հաշվարկված է եղել, որ իր կյանքը պետք է ավարտվեր հենց այսպես, և վերհիշելով արյան ու տառապանքների գետը, որն սկիզբ էր առնելու իրենից և ընդարձակվելու էր, մինչև որ հեղեղեր ամբողջ աշխարհը, նա աղաղակեց դեպի երկփեղկված երկինք, որտեղից ժպտում էր Աստված. *«Ներե՞ք նրան, մարդի՞կ, քանզի չգիտի, թե ինչ է անում»*²⁵³

²⁵³ Նույն տեղում, էջ 365

Այս դրվագում ևս տեսանելի է ակնհայտ տարբերություն Սարազամոյի և Մեյլերի կերտած Քրիստոսի գեղարվեստական կերպարների միջև: Պորտուգալացի գրողի մտահղացմամբ՝ Փրկիչը խաչելության վրա ճշում է ոչ թե հոգեվարքի ցավերից, այլ խաբված լինելու անասելի ծանր զգացումից, քանի որ չի ցանկանում գործիք լինել այն Աստծո ձեռքին, որը երկրի վրա տենչում է հաստատել իր միանձնյա իշխանությունն ու որպես իր այդ խորամանկ ծրագրի իրականացնող՝ ընտրում է Որդուն: Ուստի Հիսուսն ակամա գոհ է: Իսկ ամերիկացի վիպասանի մոտ Քրիստոսը մինչև իր կյանքի վերջին ակնթարթը հավատում է իր երկնային Հորը, որին համարում է միակն ու ճշմարիտը, և անգամ չի վիրավորվում վերջինիս սեփական Որդու անասելի տառապանքներին ի պատասխան անողորմելի լռություն պահպանելու փաստից: Նրան հուզում է միայն մարդկության հավատի կորստյան և սիրո բացակայության թեման:

Աստծո կամքի կատարման անխուսափելիության մասին է վկայում նաև Հիսուսի առաջին հանդիպման մասին պատմող դրվագը: Ի տարբերություն բուն աստվածաշնչյան պատմության, որն ընկած է Մեյլերի վեպի հիմքում, Սարամագոյի երկում Քրիստոսը գնում է անապատ՝ որոնելու կորած գառնուկին, այլ ոչ թե՛ հանդիպելու Սատանային: Ի դեպ, նա այդ ուղին բռնում է Հովվի՝ նույն ինքը՝ Սատանայի պահանջով: Անապատում նա հանդիպում է Աստծուն, ինչը հակասում է թե՛ աստվածաշնչյան մեկնաբանությանը և թե՛ Մեյլերի վեպի համանուն դրվագին: Այդ հանդիպման ժամանակ Հիսուսն առաջին անգամ գիտակցում է Բարձրյալի կամքի անխախտելիությունը. նա ստիպում է մանուկ Քրիստոսին իր ձեռքով սպանել և Աստծուն զոհաբերել իր իսկ փայփայած գառնուկին: Սա հոգեկան առաջին տվայտանքն է, որ Հայրը պարտադրում է Որդուն: Վերադարձին Հիսուսն ապրում է երկրորդ հարվածը. Հովիվը վռնդում է նրան ու դատապարտում անիմաստ թափառումների: Սակայն վիպական հետագա գործողությունները բացահայտում են այս բավական դժվարըմբռնելի և տարօրինակ իրողությունը. նավակում զրույցի ժամանակ Հովիվ-Սատանայի ներկայությամբ Աստված խոստովանում է Հիսուսին, որ ինքը համաձայնության է եկել վերջի-

նիս հետ, և դա ամեննին էլ պատահական չի եղել: Խոստովանենք, որ շատ համարձակ է հայտարարելը, թե Աստված և Սատանան գործում են մեկտեղ, անգամ փոխհամաձայնությամբ: Մինչդեռ Նորման Մեյլերի վեպում Հիսուսի և Սատանայի հանդիպումը աստվածաշնչյան պատմության ճիշտ վերարտադրությունն է, անշուշտ, գրական որոշակի հնարքներով համեմված: Այստեղ վիպասանն ակնհայտորեն ներկայացնում է Երկնային Թագավորի ու Տարտարոսի Տիրակալի հակադրությունը և այն արտահայտում է Սատանայի՝ հետևյալ, ինչ-որ տեղ դառը ծաղրանքով արտաբերած բառերով. «*Երբ հաջորդ անգամ խոսես Նրա հետ, ասա՞, որ ես ողջունում եմ Իրեն: Քանի որ, գիտե՞ս, Հայրդ ու ես շատ ենք առևտուր արել և բավական վեճեր ենք ունեցել, այնպես որ տենչում ենք Միմյանց մասին որևէ խոսք լսել*»:²⁵⁴ Բացի այդ՝ մեյլերյան Քրիստոսը հանդիպում է Սատանային ոչ թե նրա մոտ աշխատելու, այլ բանավեճի բռնվելու համար, որպեսզի առավել թրծված կամքով ձեռնամուխ լինի մարդկության փրկության գործին:

Ինչպես արդեն նշել ենք, Ժոզե Սարամագոն գրական աշխարհում հայտնի է որպես մոգական ռեալիզմի ներկայացուցիչ, ուստի այս վեպը չէր կարող անմասն մնալ նման գերբնական, ինչ-որ տեղ անհավատալի իրողությունների նկարագրումից: Բավական պերճախոս են կավե գավաթի հետ կապված դրվագները. այդ գավաթում Մարիամն ուտելիք է տալիս մուրացիկին, որը ծպտված հրեշտակ էր: Ի պատասխան հրեուհու բարության՝ մուրացկանը գավաթը լցնում է սովորական հողով, որից սկսում է անհավանական պայծառության լույս սփռվել: Որպես ճշմարիտ հրեա՝ Նովսեփը հրավիրում է սինագոգի ավագներին՝ լուծելու այդ առեղծվածը: Իմաստունները, սակայն, ևս անկարող էին բացահայտել տարօրինակ խորհրդի բուն էությունն ու այն պարզապես թաղում են տան բակում: Տարիներ անց, երբ Հիսուսը՝ իբրև հասուն երիտասարդ, հեռանում է հայրական տնից ու բռնում իր առաքելությունն իրականացնելու ուղին, հայտնվում է նույն հրեշտակն ու արմատախիլ անելով գավաթում աճած ծառը՝ անհետանում: Տնից հեռանալիս էլ Հիսուսը բազմաթիվ գավաթներից ընտրում է կավե նույն սև գավաթը: Սակայն գավաթի խորհուրդն

²⁵⁴ Mailer N. The Gospel According to the Son. P. 47

իր գազաթնակետին է հասնում միայն վեպի վերջնամասում, երբ խաչելության վրա հայտնված Հիսուսի արյունը շիթ առ շիթ ծորում է նրա ոտքերի մոտ դրված հենց այդ գավաթի մեջ: Ըստ վիպասանի հղացման՝ հոգեվարքի ճիրաններում տառապող Հիսուսը կարողանում է տեսնել այն մարդուն, որը քացախի մեջ թաթախված սպունգով թրջում է նրա՝ ծարավից տոչորվող շուրթերը, սակայն չի տեսնում խորհրդանշական կավե սև գավաթը: Դա Հիսուսի կյանքի խորհրդանիշն է, որն սկզբում պայծառ լույսով ողողում է հյուսնի համեստ խրճիթը, ապա հայրական տան բակում դառնում բարձր ծառ, որը հովանի է անում ամբողջ ընտանիքին, իսկ վերջում՝ հայտնվում է խաչի վրա մահացող Փրկչի ոտքերի տակ՝ տրամաբանական ավարտի հասցնելով նրա անցած ուղին:

«Ավետարան ըստ Հիսուսի» վեպում գլխավոր կերպար է նաև հյուսն Հովսեփը: Եթե մեյլերյան վեպում հյուսնը պարզապես Քրիստոսի հայրն է, որը նրան դաստիարակում է սեփական օրինակով՝ քաջ գիտակցելով, որ նա Աստծո գավակն է, և հենց նա էլ իր պարտքն է համարում մանուկ Հիսուսի համար այդ գաղտնիքի բացահայտումը, ապա Սարամագոն նրան միանգամայն այլ դեր է վերապահում. Հովսեփը բազմանդամ ընտանիքի հայր է, որի անդրանիկ գավակն է Հիսուսը: Նա կնոջ և որդու հետ Գողգոթայից գնում է Բեթղեհեմ՝ ոչ թե մղված Աստվածաշնչից մեզ հայտնի մարգարեական երազից, այլ մասնակցելու մարդահամարին, որը, ըստ հռոմեական կայսեր հրամանի, յուրաքանչյուրը պետք է անցկացնեք սեփական ծննդավայրում: Ուստի Հիսուսի՝ Բեթղեհեմում լույս աշխարհ գալու պատճառը՝ Սարամագոյի մեկնաբանությամբ, բավական բանական է և բնավ ոչ գերբնական: Հեղինակն այստեղ զանց է առնում մի հանրահայտ փաստ ևս. Հիսուսը լույս աշխարհ է գալիս ոչ թե մտուրում, այլ քարանձավում, ուր Հովսեփի ընտանիքին ուղղորդում է բեթղեհեմցի մի հարուստ կին և իր ստրկուհուն էլ ուղարկում՝ օժանդակելու երկունքի ցավերով բռնված Մարիամին: Ուստի, ըստ Սարամագոյի, մարդկության ապագա Փրկիչը լույս աշխարհ է գալիս իբրև սովորական մի մահկանացու: Այս նույն դրվագն այլ կերպ է ներկայացնում ամերիկացի վիպասանը. *«Մարիամն ինձանով ծանրացած էր, սակայն ցանկություն հայտնեց երեք օր ճամփորդել Նազարեթից դեպի Բեթղեհեմ. նա*

հայարտանում էր Հովսեփի նախնիներով: Մա է մեր ճամփորդության ճշմարիտ պատճառը, և ճշմարիտ է նաև, որ ես ծնվել եմ մտուրում՝ մոսի լուսի ներքո: Ինչպես բոլորն այժմ գիտեն, պանդուկում սենյակ չկար»:²⁵⁵

Աստվածաշնչյան պատմությունից շեղում է նաև այն, որ հյուսն Հովսեփն ինքն է պատահաբար լսում Հերոդոտոս Անթիպացու զինվորների զրույցը, թե արքան որոշել է գիշերը սպանել նորածին բոլոր երեխաներին: Հայրական սիրուց խելագարված՝ նա նետվում է քարանձավ՝ փրկելու սեփական որդու կյանքը: Օնոդական սիրով թելադրված այս պարզ արարքը արձակագիրը վերածում է վեպի կենտրոնական ու շրջադարձային գաղափարներից մեկին: Անմեղ գոհված մանուկները դառնում են Հովսեփի, հետագայում նաև նրա որդու՝ Հիսուսի խղճի ծանրագույն մեղքն ու հալածում են նրանց: Ըստ հեղինակի՝ Հովսեփը պարտավոր էր փրկել ոչ միայն սեփական զավակին, այլև տեղեկացնել մյուս մանուկների ծնողներին վերահաս վտանգի մասին և կանխել անագորույն ոճրագործությունը: Այս մեղադրանքը հնչում է հենց իր՝ Հիսուսի բերանով. «*Հիսուսի ձեռքերը ձգվեցին դեպի սեփական դեմքը, կարծես փորձում էր եղունգներով պոկել այտերը, և կրծքից դուրս թռավ մի անմխիթար ճիչ. "Հայրս մորթել է մանուկներին Բեթղեհեմում"*»:²⁵⁶ Վիպասանն իրեն բնորոշ սուր դիտարկումներով ավելի է խորացնում այս գաղափարը, երբ պարզվում է, որ այդ չարաբաստիկ օրվանից ի վեր Հովսեփին տարիներ շարունակ կեղեքող երազը ժառանգաբար անցել էր նաև որդուն. Հիսուսն ամեն գիշեր տեսնում էր՝ ինչպես է հայրը, հռոմեական զինվորների գլուխ անցած, փորձում սպանել անգամ սեփական զավակին:

Նորման Մեյլերը ևս անդրադարձել է այս դրվագին, ու եթե Սարամագոյի վեպում Հերոդոտոսին երազում մահացած մարգարեն է տեղեկացնում երեխայի ծննդյան մասին, այն էլ բավական երկիմաստ ու մշուշապատ ակնարկներով, իսկ քարանձավում արդեն նորածին Հիսուսին այցելության են գալիս երեք հովիվներ, որոնց թվում Մարիամը ճանաչում, բայց չի բարձրաձայնում իր տան

²⁵⁵ Նույն տեղում, էջ 15

²⁵⁶ Сарамаро Ж. Указ.соч. С. 147

շենքին հայտնված մուրացիկին, ապա այստեղ ընթերցողը տեսնում է միանգամայն այլ պատկեր: Քրիստոսի՝ լույս աշխարհ եկած քարանձավի կողքին իրենց հոտն էին արածեցնում մի քանի հովիվներ, որոնց հայտնվում է հրեշտակն ու ավետում Աստծո Որդու ծննդյան ավետիսը. «*Հովիվները հրեշտակի մասին այնքան շատ կանանց ու տղամարդկանց պատմեցին, որ լուրն այն մասին, թե Բեթղեհեմում Մուրք ծնունդ է եղել, հասավ Բսրայելի թագավոր Հերոդոտոսին: Նա անմիջապես հասկացավ, որ ցանկացած երեխա, որին հրեշտակն է պահպանում, կարող է թագավոր դառնալ: Նա ուրիշ թագավորների կարիք չուներ*»:²⁵⁷

Տուրք տալով մոզական ռեալիզմին բնորոշ հատկանիշներին՝ Մարամագոն խաչ է բարձրացնում նաև Հովսեփին, որն անմեղ զոհ է և արժանանում է այդ ճակատագրին սուկ այն պատճառով, որ խռովարարներին պատժող հռոմեական ջոկատի առաջնորդը որոշում է Սեփհորիսում խաչվածների թիվը հավասարեցնել: Խորհրդանշական է, որ հյուսն այդ ժամանակ ընդամենը երեսուներեք տարեկան էր: Այսպիսով, պորտուգալացի վիպասանը կարծես նախապատրաստում է ընթերցողին. որդին կիսում է հոր ճակատագիրը:

«Ավետարան ըստ Հիսուսի» վեպում կենտրոնական կերպար է նաև Մարիամ Մագթաղինեցին: Նա Հիսուսի համար դառնում է հենարան ու եզակի կին, որին սիրահարվում է նա: Քրիստոսի անցած ամբողջ ճանապարհի ընթացքում Մարիամ Մագթաղինեցին ուղեկցում է նրան՝ դառնալով միակ հավատարիմ և սիրեցյալ էակը: Նա Հիսուսի կինն է. մի հայտարարություն, որը չէր կարող միանշանակ դրականորեն ընդունվել կրոնական աշխարհում: Մինչդեռ ամերիկացի վիպասանի վեպում լեռան վրա պասի օրերին Հիսուսը լսում է իր Հոր հետևյալ հայտարարությունը. «*Ես քեզ հարստություն չեմ տա: Եվ դու երբեք կնոջ հետ չես ապրի, կամ այլապես դու կկորցնես Տիրոջը*»:²⁵⁸

Հետաքրքրական է նաև, որ Հիսուսը Մարիամի Մագթաղինեցուն հանդիպում է տասնութ տարեկանում և ոչ թե

²⁵⁷ Mailer N. The Gospel According to the Son. P. 16

²⁵⁸ Նույն տեղում, էջ 42

թողություն է տալիս նրա մեղքերին, այլ այս կինը լցվում է այնպիսի սիրով, որն ինքնըստինքյան մաքրագործում է նրան:

Բավական պերճախոս է Մարիամ Մագթաղիներու և Հիսուսի հանդիպման պատմությունը: Առաջին անգամ նրանք գտնում են միմյանց, երբ Հովիվը վռնդում է Հիսուսին, քանի որ նա անապատում չէր կարողացել ընդդիմանալ Աստծո կամքին և զոհ էր մատուցել իր փայփայած գառնուկին: Այսինքն՝ ժամանակն էր, որ Քրիստոսը լքեր Սատանային և կանգներ սեփական ճակատագրի իրականացման ճանապարհին: Գառնուկին փնտրելիս նա վերքերով էր պատել ոտքերը, և հորից ժառանգություն մնացած սանդալներն էլ շուտով վերջնականապես քրքրվում են, ու Հիսուսը հայտնվում է Մագթաղիներու տան առջև՝ բոկոտն ու արյունածոր վերքերով: Մարիամը ոչ միայն գիշերելու տեղ է տալիս նրան, այլև ձեռնամուխ է լինում միամիտ երիտասարդին սիրո արվեստին ծանոթացնելու գործին, և Հիսուսի սրտում բույն է դնում այն անարատ սերը, որ դառնում է այս երկուսին ամուր գոտևորոջ օղակ: Մարիամ Մագթաղիներին բժշկում է Հիսուսի մարմնական վերքերը, բայց մի նոր վերք է բացում նրա սրտում. Փրկիչը սիրահարվում է Մարիամին և իր կյանքի ամբողջ նվիրական զգացումները վստահում միայն նրան: Այս կինը դառնում է Որդու սրտի միակ տիրուհին, որը նրա հետ կիսում է կյանքի բոլոր դժվարությունները և մինչև վերջին վայրկյանը հետևում նրան: Երբ Հիսուսը վերադառնում է ընտանիք և մորն ու եղբորը պատմում անապատում Աստծո հետ իր հանդիպման մասին, մայրը՝ իբրև հասարակ հրեուհի, չի հավատում այդ պատմությանը, և խորապես խոցվում է որդին: Նա վերստին լքում է հայրական տունն ու բռնում պանդխտության ճամփան, բայց այս անգամ արդեն որոշակի ուղղությամբ. եթե առաջին անգամ մանուկ Հիսուսը լքել էր հայրական օջախը և փորձել էր անապատելի լուրից փոթորկվող հոգին հանգստացնել իր ծննդյան ակունքների ճանապարհն անցնելով, որի ժամանակ հանդիպում է անգամ իր լույս աշխարհ գալուն օժանդակած արդեն գառամյալ ստրկուհուն, ապա այժմ վստահ բռնում է դեպի Մարիամ Մագթաղինացու տուն տանող ուղին: Մարիամի մոտ նա գտնում է ոչ միայն օթևան, այլև հոգեկան անդորր ու հասկացվածություն: Մարիամ Մագթաղիներին, որը

տարիքով մեծ էր անգամ Հիսուսի սեփական մորից, Քրիստոսին ընդունում է մի սիրով, ուր առկա են և՞ կանացի մաքուր զգացում, և՞ մայրական խանդաղատալից սեր: Նա ոչ միայն ունկնդրում է Հիսուսի պատմությունը, այլև նրա հետ կիսում է բոլոր հետագա դառնություններն ու գորավիզ լինում նրան: Ասել է թե՛ Մարիամ Մագթաղինեցին դառնում է Քրիստոսի միակ ընտանիքը:

Նորման Մեյլերը ևս բնականաբար անդրադարձել է Մարիամ Մագթաղինեցու կերպարին, սակայն վերջինս չի վերածվում կենտրոնական հերոսուհու: Ամերիկացի վիպասանը կենտրոնանում է Հիսուսի մարդկային կերպարի վրա՝ սուկ ընդգծելով, որ, իբրև այր, նա չէր կարող անտարբեր լինել կանացի հմայքի հանդեպ, բայց աստվածայինը հաղթում է, և Փրկիչը խոստովանում է. «*Ինչպես և վախենում էի. նա գեղեցիկ էր*»:²⁵⁹ Հետևաբար, թեպետ ոչ ակնհայտ, սակայն արձակագիրն անուղղակի ակնարկներով ընթերցողին որոշակի միտք է ներշնչում. Հիսուսն օգնում է Մարիամ Մագթաղինացուն մաքրագործվել, որովհետև գնահատում է նրա կանացի գեղեցկությունն ու ականա գործում իբրև մահկանացու: Սակայն այս դրվագն ավարտվում է սուկ վերոհիշյալ պատկերով և հետագա խորացումներ չի ունենում:

«Ավետարան ըստ Հիսուսի» վեպում Մարամագոն կերտել է նաև Քրիստոսի մոր՝ Մարիամի կերպարը, որն ավելի շուտ ընտանեկան պարզ կյանքի, քան ինչ-որ աստվածային խորհրդածությունների մեջ ընկղմված հասարակ հրեուհի է: Նա Հիսուսին վերաբերվում է սուկ ինչպես անդրանիկ զավակի, որը հորից հետո պարտավոր էր ղեկավարել ընտանիքը: Մարիամը լռելյայն տառապում է որդու հեռանալու փաստից, սակայն ոչինչ չի ձեռնարկում իրենց տարաձայնությունը հարթելու համար: Թվում է՝ անգամ չի գիտակցում որդուն վերապահված առաքելության բուն իմաստը: Բազմանդամ ընտանիքի հոգսաշատ մայրն անբացատրելի անտարբերությամբ է վերաբերվում իր երագներին, որդու պատմածներին, անգամ վերջինիս՝ հայրական օջախն ընդմիջտ լքելու փաստին: Ուստի Մարամագոյի վեպում ընթերցողն ականատես չի լինում մայրական այն սիրուն, որը, թեպետ քողարկված, սակայն ակնհայտ է Մեյլերի երկում:

²⁵⁹ Նույն տեղում, էջ 177

Պորտուգալացի վիպասանը փոխակերպում է անգամ Գալիլեայի Քանա քաղաքում Հիսուսի՝ հանրահայտ ջուրը գինու վերածելու պատմությունը: Փրկիչն այդ հրաշագործությունը կատարում է սեփական քրոջ հարսանիքի ժամանակ՝ իր խմած գինուց մի քանի կաթիլ կաթեցնելով ջրով լի սափորների մեջ: Իսկ այդ հարսանիքին նա Մարիամ Մագթաղինացու հետ հայտնվում է պատահաբար, քանի որ առաքյալներից մեկը փեսայի ընկերն էր: Այս տեսարանի ամբողջ զգայացունց պատկերն ամփոփված է այն դրվագում, երբ Մարիամը, որդու գալուստը տեսնելով, հուզմունքից արձանանում է, իսկ քիչ անց սեփական որդու մասին հոգացողությունը հանձնում է Մարիամ Մագթաղինացուն՝ կարծես ընդունելով սեփական պարտությունն ու այդ անձանոթ կնոջ մեջ տեսնելով իր տկար բնավորության ամուր մարմնավորումը: Նա այսպես է դիմում Մարիամ Մագթաղինացուն. «Պահպանի՞ր նրան. հրեշտակն ինձ ասաց, որ նրան մեծ փորձություններ են սպասվում, իսկ ես չեմ կարող կողքին լինել»:²⁶⁰

Եթե Մարամագոյի վեպում այսքանով էլ ավարտվում է մայրական սիրո դրսևորումը, ապա Մելլերի մտահղացմամբ մայրը մնում է մի անբացատրելի սրբություն, որի արարքները, թեև երբեմն անընդունելի են Հիսուսի համար, սակայն նա երբևէ չի մերժում մայրական սերը. ներում է և հաճախակի վերադառնում հայրական օջախ, իսկ խաչելության պահին նրան կրկին ուղեկցում է Աստվածամայրն ու իր լուռ, արտասովալից տառապանքներով կրկնապատկում Քրիստոսի արյունածո հոգու տվայտանքները:

Ժոզե Մարամագոյի «Ավետարան ըստ Հիսուսի» վեպում բազմիցս հնչում է հույն արքա Էդիպի անունը: Հեղինակը ոչ թե Քրիստոսին համեմատում է այս կերպարի հետ, այլ ցանկանում է ցույց տալ ճակատագրի անխուսափելիության խնդիրը. մարդը, թեկուզև Աստծո Որդին, սուկ խաղալիք է ճակատագրի ձեռքին և անկարող է վերափոխել այն, ինչ պետք է պատահի: Ըստ վիպասանի՝ Հիսուսը նման է Էդիպին, որովհետև լքված է թե՞ Երկնային և թե՞ Երկրային հոր կողմից:

²⁶⁰ Նույն տեղում, էջ 177

Այսպիսով, ընթերցողի աչքի առջև հառնում է եռակողմ Քրիստոսը. Հիսուս-աշակերտը, երբ Հովվի, նույն ինքը՝ Սատանայի մոտ կյանքի դպրոց է անցնում, Հիսուս-սիրահարը, երբ հանդիպում է Մարիամ Մագթադինացուն ու նվիրվում նրան, և ըմբոստ Հիսուսը, երբ ընդվզում է Տիրոջ կամքի դեմ ու գնում գիտակցված մահվան: Սարամագոյի համար էականը բարու և չարի հակադրումն է, այլ ոչ թե քրիստոնեական թեմայի արձարձումը: Ուստի «Ավետարան ըստ Հիսուսի» վեպի էջերում նկատելի է հեղինակի բացառիկ սերը Հիսուս-մահկանացուի հանդեպ, որը գրողի համար մարդասիրական գաղափարների ազդարարման միջոց է:

Այկանուշ Շարուրյան

СЕНСАЦИОННЫЙ РОМАН ЖОЗЕ ДЕ СОЗА САРАМАГО

Статья посвящена исследованию сенсационного романа известного португальского писателя Жозе Сарамаго «Евангелие по Иисусу». В вышедшем в 1991 году романе художественный образ Иисуса Христа раскрывается с совершенно новой точки зрения: в определенном смысле он создан в соответствии с принципами гностического Евангелия. Иисус, скорее всего, – первенец плотника Иосифа и простой еврейки Марии, нежели сын Божий. Воплощенный Сарамаго образ Иисуса существенно отличается от подобных образов, созданных другими писателями. Здесь перед глазами читателя Иисус предстает в трех ипостасях: Иисус-ученик, когда он проходит школу жизни у Сатаны; влюбленный Иисус, когда встречается Марию и посвящает себя ей; мятежный Иисус, когда он восстает против воли Господа и идет на осознанную смерть, поднимаясь на крест как царь евреев, а не как Божий сын.

Haikanush Sharuryan

THE SENSATIONAL NOVEL BY JOSÉ DE SOUSA SARAMAGO

The article is dedicated to the study of the sensational book entitled "The Gospel According to Jesus Christ" by the famous Portuguese Author José de Sousa Saramago. In this novel published in 1991 the literary character of Jesus Christ is observed from another viewpoint: to some

extent it is created by the principles of Gnostic Bible: Jesus is mainly the first son of the carpenter Joseph and an ordinary Jewish woman Maria than the Son of God: Jesus created by Saramago is essentially different from the same character touched upon by other writers. Here the reader sees a three-sided Jesus: Jesus-pupil, when he is passing the school of life with the Shepherd who is Satan, Jesus-lover, when he meets Maria Magdalena and is devoted to her and Jesus-rioter, when he stands against God and takes the path of conscious death: he is crucified as a King of Judas and not as a Son of God.

ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ НЕЗАВЕРШЕННОГО РОМАНА В.Я.БРЮСОВА «СЕМЬ ЗЕМНЫХ СОБЛАЗНОВ»

Тема семи смертных грехов на протяжении многих веков будоражила творческое воображение поэтов, философов и художников. Этой теме касались Кристофер Марло («Доктор Фаустус»), Джеффри Чосер («Кентерберийские рассказы»), Эдмунд Спенсер («Королева фей») и многие другие.

В обширном литературном наследии В.Брюсова, где многое осталось незавершенным, есть и незаконченный им роман под заглавием «Семь смертных грехов», который был анонсирован в каталоге издательства «Скорпион» на 1909 год. Под таким же заглавием роман фигурировал в письме издателя журнала «Весы» – С.А.Полякова к Брюсову от 1 октября 1909 года: *«Теперь же, – писал Поляков, – я жду "с нетерпением" начала Ваших "Грехов" для следующей книжки "Весов"... Я надеюсь, что Вы, быть может, дадите в "Весы" все три главы, т.е. Ваш роман войдет во все три "последние" номера "Весов" <...>».*²⁶¹ Из документов, хранящихся в фонде Брюсова (РО ГБЛ, ф.386) известно, что заглавие им много раз варьировалось: «Знаки семи планет», «Семь земных искушений», «Семь цветов радуги». В конце концов Брюсов остановился на варианте «Семь земных соблазнов», как «более наглядно выражавшем сложную структуру задуманного произведения» [там же, с. 126].

В «Весех» главы из романа Брюсова так и не были опубликованы, поскольку после 1909 г. деятельность журнала была прекращена.²⁶² Реализовать свой грандиозный замысел Брюсову не удалось: отрывки из глав первой части романа были опубликованы в 1911 году в пятом томе альманаха «Северные

²⁶¹ Литвин Э.С. Незаконченный утопический роман В.Я.Брюсова «Семь земных соблазнов» // Брюсовские чтения 1973 года. Ереван, 1976. С.126

²⁶² В начале 1910 г. вышел последний номер «Весов» – см.: Азадовский К.М, Максимов Д.Е. Брюсов и «Весы» (к истории издания) // Лит. наследство. Т.85. М., 1976. С.314.

цветы». В предисловии «От редакции» отмечалась незавершенность произведения и фрагментарность представленного материала, оговаривалась и перспектива его появления в полном виде: *«Роман из будущей жизни "Семь земных соблазнов", над которым В.Я.Брюсов работает уже давно и сведения о котором не раз появлялись в печати, в полном своем виде может быть издан лишь через несколько лет»*.²⁶³ Далее представлялась общая структура будущего романа безусловно, с «подачи» самого Брюсова: *«Разделенный на семь частей, по числу традиционных "семи смертных грехов" – Богатство, Сладострастие, Опьянение, Жестокость, Праздность, Слава, Мечь, – он должен объять все стороны человеческой жизни и пересмотреть все основные страсти человеческой души. Каждая часть представляет собой более или менее самостоятельное целое, которые все связаны между собой только образом главного действующего лица»*.²⁶⁴

Указанные названия частей будущего романа, по сути, обозначают как традиционные «смертные грехи» (*Сладострастие, Опьянение, Праздность*), так и сопутствующие им компоненты (*Богатство, Жестокость, Слава, Мечь*)²⁶⁵.

²⁶³ Брюсов В.Я. Семь земных соблазнов. Отрывки из романа // Северные цветы на 1911 год. М., «Скорпион». 1911. С. 172

²⁶⁴ Там же

Իհարկե Նիցշեի անձի և փիլիսոփայության նկատմամբ նման բացառիկ հետաքրքրությունը ուներ և ունի օբյեկտիվ հիմքեր, որոնցից գլխավորն էլ հենց եվրոպական մշակույթի ճգնաժամի վերաբերյալ նրա առավել քան դիպուկ դատողություններն ու մտորումներն են: Ըստ Նիցշեի՝ վերոնշյալ ճգնաժամի էությունը կարելի է արտահայտել «Աստված մեռավ» բանաձևով: Եթե առավել ընդհանուր փորձենք սահմանել վերջինս, ապա այն նշանակում է, որ սփոփման ու փրկության հին կրոնական և մետաֆիզիկական ուսմունքները, որոնք 2500 տարի ուղորդում ին մարդկությանը, իմաստավորում էին կյանքը, օգնում էին հաղթահարել գոյության դժվարությունները, միանգամից հօդս ցնդեցին. Այսուհետ մարդիկ այլևս չեն կարող օգտագործել Աստծո գաղափարը կամ փիլիսոփայական իդեալների որևէ արժեհամակարգ՝ բացատրելու համար աշխարհը և հիմնավորելու մարդկային ու հասարակական հարբերությունների կազմակերպման գոյություն ունեցող

⁴²⁰ Ницше Ф.Ессе Номо (Как становятся сами собой), М., 2006., с. 171.

⁴²¹ նույն տեղում.

տարբերակները: Ավելի պարզ ձևակերպմամբ՝ մինչ այժմ անբեկանելի ու բացարձակ թվացող բոլոր արժեքները կասկածի տակ են դրվում, որովհետև ակնհայտ է դառնում դրանց պատրանքային ու հարաբերական բնույթը: Մ.Հայդեգերը, Նիցշեին նվիրված իր աշխատության մեջ շատ դիպուկ նկատել է, որ «Աստված մեռավ» արտահայտությունը *«հերթական աթեիստական դրույթ չէ պարզապես, այլ արևմտյան քաղաքակրթության կեցության փորձի տրամաբանական արդյունք»*⁴²²: Այսինքն՝ «աստված» տերմինը տվյալ դեպքում ավելի շուտ պայմանական անվանում է, և դրա «մահն» արձանագրելով Նիցշեն ի նկատի չունե՞ր այն, որ վերերկրային ինչ-որ արարիչ դադարեց կամ պետք է դադարի գոյություն ունենալ, որովհետև մենք կորցրել ենք կամ հիմքեր չունենք նրա գոյությանն հավատալու, այլ այն, որ մարդկային մտածողության ու պատմության մեջ առհասարակ հասունացել է անցած ուղին վերաիմաստավորելու ու վերաարժեքավորելու անհրաժեշտություն, ինչի արդյունքում պարզ է դառնում, որ եվրոպական մշակույթի հիմքում ընկած քրիստոնեական բարոյականության արժեհամակարգն ինքնին խարսխված է միանգամայն հակաբնական իդեալների ու գաղափարների վրա, որոնց հաղթանակի և գերիշխանության պատճառով էլ այդ քաղաքակրթությունը կանգնեց այդպիսի սարսափելի ճգնաժամերի առջև: Հարկ է հատուկ շեշտել, որ Նիցշեն կարիժքով, այդ ճգնաժամը, նախ և առաջ, դրսևորվում է հենց մեր մտածողության ու հոգեկանի մեջ, իսկ իրականության տարբեր ոլորտներում դրա արտահայտություններն ուղղակի դրա անմիջական ու տրամաբանական շարունակությունն են: Պատահական չէ, որ այդ նույն «Աստված մեռավ» ասույթի հաջորդում է հետևյալ տողը. «Այդ մենք սպանեցինք նրան»⁴²³:

Նիցշեն գրում է, որ մեր մտքի մեջ տեղի ունեցած այդ հեղափոխությունը, որում նշանակալից դեր են խաղացել նաև հենց իր փիլիսոփայական մտորումները, ճանապարհ է հարթում դեպի վերջին 25 դարերի ընթացքում իշխող մտածողությունից որակապես միանգամայն այլ աշխարհընկալում: Այդ նպատակով է, որ

⁴²² Хайдеггер М. Ницше, т. 1, СПб., 2006, с. 129.

⁴²³ Ницше Ф. [«Воля к власти»](#), М., 2006, с. 73.

գերմանացի փիլիսոփան սուր քննադատության է ենթարկում պլատոնական մետաֆիզիկայի ողջ հասկացությանին ապարատը, առհասարակ, պլատոնական մետաֆիզիկական ամբողջությամբ՝ պատճառականություն, հիմնավորում, նպատակ, ճշմարտություն, օրենք, սուբյեկտ, օբյեկտ ... Մետաֆիզիկայի՝ որպես մտածողության քննադատությունը Նիցշեն կատարում է հետևյալ կերպ. առաջին հերթին նա մերժում է աշխարհի երկատման անհրաժեշտությունն իրական ու թվացյալ աշխարհների, երկրորդ՝ համարում է այդ մտածողության ձևը *ressentiment*-ի ծնունդ, երրորդ՝ պնդում է, որ այն ամբողջ աշխարհը գնահատում է բարու և չարի, լավի և վատի, դրականի և բացասականի սանդղակով: Այս մտածողության փոխարեն նա առաջարկում է հասնել նոր՝ ինտեգրալ մտածողության, որի պարագայում կտրականապես վերանում են գիտակցության և անգիտակցականի, պատկերավորի ու տրամաբանականի, էմոցիոնալի ու ռացիոնալի միջև սահմանները: Դա վերտրամաբանական, վերդիալեկտիկական, վերարժեքային մտածողություն է, որը գործառնում է ոչ թե վերացական հասկացություններով, ինչպես փիլիսոփայության մեջ, այլ ամբողջական անմիջական մտահայեցողությամբ: Այն չի տրոհում կյանքը հակասությունների. *«Իրականում,- գրում է Նիցշեն,- ոչ մի հակասություն էլ գոյություն չունի. մենք միայն ներմուծում ենք մեր գիտակցության ու տրամաբանության հակասությունները շրջապատող երևույթների մեջ»*⁴²⁴:

Եվ հենց առաջին հերթին մտածական ու հոգեբանական այս կատակլիզմն է, որ Նիցշեն մեկ բառով անվանում է «եվրոպական նիհիլիզմ»: Նիհիլիզմ տերմինն ունի լատիներեն ծագում և բառացի թարգմանությամբ նշանակում է «ոչնչապաշտություն». այն փիլիսոփայության մեջ է ներմուծել գերմանացի փիլիսոփա Ֆ.Գ.Յակոբին 1799 թ-ին՝ փորձելով նկարագրել Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ կրոնի դերի վերաարժեքավորման միտումների էությունը: Սակայն հենց ի շնորհիվ Նիցշեի ստեղծագործությունների այս եզրույթը հարստացավ բովանդակային առումով և առավել լայն տարածում գտավ արևմտյան մշակույթի մեջ: Ըստ Նիցշեի՝ նիհիլիզմն այնպիսի

⁴²⁴ նույն տեղում, էջ 127

հոգեբանական վիճակ է, երբ թե առանձին անհատը, թե հասարակությունը և/կամ ժողովուրդն ընդհանրապես, չեն գտնում որևէ բան, հանուն որի արժե ապրել և ինչին հարկ է ձգտել. նիհիլիզմի դրսևորումներ կարելի է գտնել տարբեր ազգերի մոտ և տարբեր պատմական զարգացման փուլերում, ինչպես օրինակ բուդդայականության առաջացումը Հնդկաստանում, սակայն «եվրոպական նիհիլիզմն» իր դրսևորման խորությամբ ու ուժգնությամբ առավել վտանգավորն ու սարսափելին է թերևս: Վերջինիս առաջացման գլխավոր պատճառներն են վերոնշյալ քրիստոնեական աշխարհընկալումը՝ մասնավորապես դրա բարոյականությունը, և պլատոնական մետաֆիզիկական, որը եվրոպական մշակույթի ու փիլիսոփայության մեջ, ըստ էության, հանդես եկավ քրիստոնեական հիմնական դոգմաների փիլիսոփայական հիմնավորումների <մատակարարողի> կարգավիճակում:

Ըստ Նիցշեի՝ ավանդական եվրոպական մտածողությունը բնորոշվում է այնպիսի կյանքի ձգտմամբ, որի «նպատակները տրված են մարդուն դրսից»⁴²⁵. Մարդիկ սովոր են որպես հենարան ընկալել «եթե ոչ աստծուն, ապա գիտությունը կամ խիղճը կամ բանականությունը կամ պատմական փորձը կամ հասարակական կարծիքը և այլն»⁴²⁶. տարբերակները շատ կարող են լինել, սակայն էությունը նրանում է, որ ինչպես առանձին անհատները, այնպես էլ մարդկությունն ընդհանրապես, իր կեցությունը կազմակերպելու համար կարիք ունի ինչ-որ «արտաքին ուժի» կողմից այն «հավանության» արժանացնելուն, և ինչն ամենակարևորն է՝ միայն վերջինիս կողմից ձևակերպված նպատակներն ու արժեքներն են համարվում ճշմարիտ:

Փիլիսոփաներն այսքան դարեր զբաղված են եղել միայն նրանով, որ «հորինել են ինչ-որ վերացական իդեալական այնկողմնային աշխարհներ և ներկայացրել դրանք որպես միակ իրական ու ճշմարիտ՝ փոխանակ կարողանան գրուի հանել այս միակ մեզ տրվածից»⁴²⁷՝ դրանով իսկ ջուր լցնելով կրոնական

⁴²⁵ նույն տեղում, էջ 138

⁴²⁶ նույն տեղում.

⁴²⁷ նույն տեղում, էջ 201

աշխարհընկալման ջրադացին: Սակայն հենց մարդ գիտակցում է, որ այս «*իրր թե ճշմարիտ աշխարհները*» ոչ այլ ինչ են, քան մարդու ձեռքի գործ, անիրական ցանկությունների փոխհատուցման պես մի բան, հենց նա գիտակցում է, որ որևէ արտաքին նպատակադրություն գոյություն չունի, այսինքն՝ արտաքին աշխարհի գոյություն ունեցող դրվածքը պարզապես այս կոնկրետ սոցիո-մշակութային ու պատմական փուլում տարածված և արմատավորված պատրանքների վրա է հենվում, ահա հենց այդ պահին էլ սկսվում է իրական նիհիլիզմը. աշխարհի ցանկացած պատկեր կորցնում է իր իմաստը և միակ բանը, որ հնարավոր է լինում փաստել այն է, որ այս աշխարհը միակն է, որ մենք ունենք, և որ այն անհամակարգ է, աննպատակ և զուրկ է որևէ արժեքից. «*Ցանկացած արժեքային մեկնաբանության անիմաստության գիտակցումն առաջացավ այն պահին, երբ պարզ դարձավ, որ ոչ “նպատակ”, ոչ “ճշմարտություն”, ոչ “միասնություն” և ոչ էլ քրստոնեա-պլատոնական արժեհամակարգի որևէ այլ կատեգորիայով հնարավոր չէ բացատրել կեցության ողջ բացմացանությունն ու անկանխատեսելիությունը ... կարճ ասած, մենք հասկացանք, որ դրանք պարզապես մեր իսկ մտքի ծնունդն են և ոչինչ ավելի»⁴²⁸: Մրա հետևանքով առաջանում են վատատեսության, դեկադանսի, կյանքի ժխտման, դրա անհեթեթության զգացումներ: Սակայն նիհիլիզմը միաժամանակ մարդկանց առջև աննախադեպ հնարավորություններ է բացում. «Աստծո մահը», որը նիհիլիստական մտածողության անմիջական հետևանքն է, մարդկանց աննախադեպ հնարավորություն է տալիս վերականգնել սեփական կամքը, որից նրանք հրաժարվեցին հոգուտ այդ «մեռյալի»: Հենց այստեղ է, որ Նիցշեն, ի հակակշիռ «եվրոպական նիհիլիզմի», բերում է, այսպես կոչված, «ռուսական նիհիլիզմի» օրինակը: Եթե առաջինը, որպես կանոն, հիվանդագին դրսևորումներ ունի, ապա երկրորդը՝ ոչ այնքան հիասթափության, որքան պարզապես առողջ թերհավատության ու կասկածամտության արդյունք է, և եթե «եվրոպական նիհիլիզմի» կրողը նախընտրում է «ցանկանալ ոչինչը», ապա «ռուսական*

⁴²⁸ նույն տեղում, էջ 173

նիհիլիզմի» կրողը նախընտրում է, առհասարակ, «ոչինչ չցանականալ»: Այսինքն՝ առաջինի դեպքում մենք գործ ունենք պասիվ նիհիլիզմի հետ, երբ մարդ հուսահատությունից ու թուլությունից անում է ինչ պատահի, չունի կամք վերջնականապես խզելու կապերը նախկին արժեքների հետ, բայց և չի կարողանում կրել դրանց բեռը, իսկ երկրորդի դեպքում՝ ակտիվ նիհիլիզմի, որը միշտ հակված է «խոսքից անցնելու գործի»՝ նախընտրելով վերջնականապես կործանել և հաղթահարել ինչ-որ բան և նոր արժեքներ ձևավորել: Նիհիլիզմի «ռուսական» տարբերակը հենց այն նիհիլիզմն է, որ կարող է ունենալ ապագա, այսինքն՝ դառնալ հիմք լիովին նոր աշխարհընկալման ու արժեհամակարգի ձևավորման համար:

Милена Месропян

ПОНЯТИЕ НИГИЛИЗМ В ИНТЕРПРЕТАЦИИ НИЦШЕ

В статье анализируется понятие «нигилизм» в интерпретации немецкого философа Фридриха Вилгельма Ницше. Термин «нигилизм» введенный в философию другим немецким философом Ф.Г.Якоби в 1799-ом году, окончательно сформировался как философская категория и стал популярен именно благодаря трудам Ницше. С позиции философской концепции последнего и описаны в данной статье причины возникновения и формы проявления нигилизма в европейской культуре конца 19-ого и всего 20-ого веков, а также проведен сравнительный анализ категорий «европейский нигилизм» и «русский нигилизм».

Milena Mesropyan

THE CONCEPT OF "NIHILISM" IN NIETZSCHE'S INTERPRETATION

This article analyzes the concept of <nihilism> in the interpretation of the german philosopher Friedrich Wilhelm Nietzsche. The term <nihilism> itself was introduced into philosophy by another german philosopher F.G.Yakobi in 1799, but was decisively formed as a philosophical category and has become popular due to the works of Nietzsche. And from the

perspective of the philosophical concept of the latter are described in this article causes and manifestations of nihilism in European culture of the late 19th and 20th centuries, as well as a comparative analysis of the categories <European nihilism> and <Russian nihilism>.

НАРОДНЫЙ КУЛЬТ И ПОВЕРЬЯ, СВЯЗАННЫЕ С ТЕРСКАН ВОРДИ – СВЯТЫМ ЕДИНСТВЕННОЙ ЛИТУРГИИ

В фольклорных материалах, собранных в конце 19-го – нач. 20-го вв. встречается персонаж по имени Терскан Ворди, которому посвящены песни и легенды, именем которого благославляли, клялись, проклинали, с этим именем были связаны поговорки. Наиболее популярным этот образ представляется в исторической провинции Васпуракан (вокруг озера Ван), жители которой являлись как основными паломниками к одноименной святыне, так и носителями посвященного ему фольклора. Некоторые данные позволяют говорить о том, что святого чтили и за пределами этой провинции.

О сущности и возможном происхождении данного образа впервые вопрос был поднят нами⁴²⁹, ранее этот народно-христианский образ не изучался.

В арменоведении традиционно считается, что Степанос сын Тер-Усика был реальным историческим лицом, умер в 1251 г., имел большое количество учеников и последователей. Ему приписываются «История Второго пришествия Христа» и «Наставление верующим»⁴³⁰. В качестве именитого ученого мужа он упоминается в Истории Киракоса Гандзакеци, который сообщает лишь, что после смерти могила его превратилась в место паломничества в целях исцеления⁴³¹. Но на деле не сохранилось источников, свидетельствующих о его жизнедеятельности, а житие этого святого начинает появляться в Синаксариях начиная с 13-

⁴²⁹ Միմոնյան Լ., Թևաթորոս և Տեսկան որդի. Առասպելական կերպարների մեկնություն Դերսիմի ազգագրական նյութերի քննությամբ// Հայ ժողովրդական մշակույթ, XV, - Երևան, էջ 462-473:

⁴³⁰ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 930-931:

⁴³¹ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն – Երևան, 1982, էջ 135:

го в. в качестве приписок к основному тексту⁴³². Поскольку и Киракос Гандзакеци, и Вардан Аревелци упоминают существование именно культа его целительной могилы, следует говорить скорее о большой древности самого паломничества и о народном характере культа.

Святому был посвящен монастырский комплекс Св. Степанос, который в народе был известен как Те(р)скан ворди ванк, и к которому совершались регулярные паломничества. По описанию начала 20-го в. монастырь Степанноса, сына Тер-Усика был построен из хорошо обработанного туфа, состоял из собора с высоким куполом и толстыми стенами и церкви, в которой находилась гробница святого, крытая мраморной плитой. Вокруг было старое кладбище, сад, состоящий из орешника и плодовых и диких деревьев, а вдоль реки – широкие угодья, принадлежащие монастырю⁴³³. Предположительно, монастырь был построен в 1251 г. на могиле святого. В 15-ом в. в нем был епископосат, действовала коллегия писцов. На поверхности окружающих скал вырублены хачкары (крест-камни) того же периода⁴³⁴. В 70-ые годы 19-го в. храм уже был полуразрушен в результате военных действий и, очевидно, более не реконструировался⁴³⁵. Однако паломничество продолжалось даже в условиях войны. Есть упоминание об экономке монастыря, женщине по имени Сасун, которая на коне, с оружием в руках, проводила к монастырю паломников⁴³⁶.

На праздник Успения Богоматери, когда паломники направлялись в находящийся в том же районе монастырь Матери Господней Врачевательницы Язв (Джарахеким Сурб Тирамер), они были обязаны посетить также и монастырь Терскан Ворди и

⁴³² Житие этого святого представлено даже не во всех печатных “Айсмавурках”, а только в некоторых из них.

⁴³³ Շէրենց Գ. Վանայ սազ, մաս 1, Թիֆլիս, 1895, էջ 81-82:

⁴³⁴ Հարարթյան Մ., Բերկրիի Ս. Ստեփանոս վանքը//«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 178:

⁴³⁵ Սրվանձտյանց Գ., Երկեր երկու հատորով, հատ. 1, Երևան, 1978, էջ 399:

⁴³⁶ Там же, с. 143.

поцеловать его могилу.⁴³⁷ В приписках к рукописным синаксариям и в старопечатном синаксарии 1730-го г. памяти Степаноса сына Усика посвящен день 5-е января, что не совпадает с вышеприведенными данными о паломничестве, т. к. паломничество к Джарахеким связано со второй декадой августа, но никак не с зимним периодом⁴³⁸.

В связи с паломничеством к монастырю св. Степаноса в народе была распространена следующая песня:

перевод

Քէն ճւրբիսներ իւլէոր սիւլէոր,	Дороги к тебе плутают,
Քէն դուռ կուկէայ շատ ըխտաւոր.	К тебе приходит много паломников,
Որ ոտաւոր, որ ձիաւոր:	Кто пешком, а кто – на коне.
Ոտաւորին մուրատ կուտաս,	Тому, кто пешком пришел, счастье даешь,
Ձիաւորին՝ իսնձոր կուտաս:	Тому, кто на коне пришел – яблоко даешь.
Քէն կող պիւլոր գեղզի ծառ ի,	Вокруг тебя сплошь – орешня,
Կարիբ խաւքեր մէջ կ'թառի:	Дикие птицы на ветвях сидят.
Քէն կող պիւլոր բարով բախշայ,	Вокруг тебя – плодоносящий сад,
Քէն իսաչ համրոյր արսուռ մաղչայ.	Жертвуют тебе чистое золото (?).
Ով խրաշալի Տէրսկան որդի ⁴³⁹ :	Ты, чудотворец Терскан ворди!

Первые жития в синаксариях содержали некоторые мотивы как жизни праведного священника Усика – отца Степаноса,

⁴³⁷ Շէրենց Գ. Սրբավայրեր - Թիֆլիս, 1902, էջ 82:

⁴³⁸ Даты, зафиксированные в синаксариях (Айсмавурк) 13-15 вв. не могут служить указаниями для реального времени проведения церковных и народных праздников, т. к. синаксарии отражали период календарных реформ, так и не утвердившихся в народе, а во время их создания существовал серьезный раскол в Армянской церкви, в частности, в той части исторической Армении, где служил и где был похоронен св. Степанос, существовал отдельный католикосат с центром в монастыре Сурб Хач на острове Ахтамар.

⁴³⁹ Շէրենց Գ. Վանայ սազ, с. 72-73:

так и некоторые чудеса, связанные с самим святым. Согласно этим житиям он прожил долгую плодотворную жизнь и умер в монастыре⁴⁴⁰. В частности, здесь отсутствует самая важная для народа особенность Степаноса – то, что он служил только одну литургию.

С 1749 г. более полный, содержащий много новых подробностей вариант жития Степаноса появляется в сборнике сказок и нравочений под названием «Медный город»⁴⁴¹. В более ранних изданиях этого сборника истории о Степаносе, сыне Тер-Усика, нет, а в более поздних изданиях в сборник обязательно включался и этот рассказ.

Краткое содержание:

В году армянском 660-ом (1212 г.) жил в городе Артамет Госпского надела земли Рштуник именитый священник Степанос. Несмотря на свое благочестие и бесконечные молитвы, он был бездетен. Но вот молитвы его были услышаны, и у него родился сын, которого назвали (h)Усик. В 14 лет Усика отдали на учение в монастырь к отшельнику Анании. Через 4 года по воле родителей он должен был жениться, хотя сам хотел принять постриг и celibат. Он договаривается с молодой женой, и она соглашается жить с ним без брачных отношений. Еще через 13 лет Усик становится священником. Скоро умирает его отец Степанос.

Через некоторое время на армянские земли идут войной татары, и жена Усика, попав в плен, увозится и продается в рабство в публичный дом. Но начальницей публичного дома оказывается христианка, которую жена Усика просит

⁴⁴⁰ Յալալաշարք, Կոնստանդնուպոլիս, 1730, день 5-е января – Քաղը (к'ахоц) 27 по армянскому (новому) календарю. Страницы данной книги не пронумерованы.

⁴⁴¹ Сборник восточных сказок и христианских рассказов под этим названием в переводе 10-го в., на данный момент считающийся самым древним (Աղինեան Ն. Ասր Պղնձէ քաղաքի//Հանդես անտօրեայ – Վիեննա, 1958, N1-4, էջ 21-48), данный сюжет не содержит. В изданиях Истории Медного города 1709 и 1731 гг. рассматриваемого произведения также нет.

позволить ей не впасть в грех, а заняться росписью по шелку. Усик пускается на поиски жены и находит ее. На просьбу вернуть ему жену начальница публичного дома требует в качестве откупа, чтобы ребенок, родившийся от этой святой пары, который будет священником, в первую свою литургию выпросил у Бога прощения ее грехов. Вернувшись в Артамет, чета усердно молится, чтобы найти выход между обетом хранить девство и обещанием породить сына.

В Артамет приходит старец отшельник Степанос, которому в ночь на воскресенье бывает виденье: Усик в светящемся облачении, а на его посохе – цветущая и сияющая роза. Выяснив обстоятельства дела, отшельник уговаривает Усика вступить в брачные отношения с женой, после чего рождается мальчик, которого тоже называют Степаносом. Мальчик растет в благочестии и глубоком уважении к родителям и вере.

Как-то раз он повез пшеницу на помол в деревню Анх. У мельницы собирается толпа бедняков, а добрый Степанос по горсти раздает им всю свою пшеницу. Потом наполняет мешки песком и пеплом, довозит их до дома и, оставив во дворе осла с поклажей, тайно убегает в сторону земли Беркри. Отец вносит мешки, а мать открывает один, вынимает муку и печет из нее хлеб, а потом просит отца позвать Степаноса на обед. Обнаружив пропажу сына, они начинают его поиски. Усик находит сына недалеко от монастыря Аргелан. Узнав о происшедшем чуде – превращении песка и пепла в муку, Усик падает на колени перед сыном. Степанос не соглашается вернуться домой, а решает остаться и служить в монастыре Аргелан до конца своих дней. Тогда Усик рассказывает ему об обещании матери, и Степанос во время первой же литургии просит Бога о спасении души Биби. В тот же миг является ему видение: сам он стоит на берегу кровавого моря, в середине которого та женщина, Биби. По мере молитв Степаноса женщина понемногу выходит из моря очищенной, но литургия, длящаяся вдвое дольше обычной, настолько истощает Степаноса, что он решает больше не служить литургий.

Далее он уходит на священную гору Головы Креста и живет отшельнической жизнью. К нему на моление приводят одержимых и душевно больных, которых он излечивает, и слава его распространяется даже среди иноверцев. Мясник Юсуф решает проверить святость Степаноса. Назвав пень, на котором он рубил мясо, своим отцом, он заявляется к Степаносу, представившись христианином и просит помолиться за своего отца. Степанос выполняет его просьбу, и когда Юсуф возвращается в лавку, он находит пень зазеленевшим. Взяв пень, Юсуф вместе с семьей возвращается к Степаносу, просит у него прощения и сообщает о своем желании креститься. Во время крещения водой источника св. Саака Партева, на воду нисходит свет. Тогда Степанос уединяется и просит исцеления от бешенства вследствие укусов животных, от ушных, зубных, желудочных, головных болей, от оспы, от родильной горячки, от одержимости, от лихорадки, от проказы для 12 народов - всех, кто обратится к нему с верой. В эту минуту раздвигаются стены церкви, и в столпе света, окруженный сонмом ангелов, ему является сам Иисус Христос на троне судилища и сладким голосом возвещает, что дает Степаносу такую власть. Он задерживается на целый час, пока Степанос молится до третьего часа ночи.

Через 12 лет в день Вознесения Степанос поднимается на гору Головы Креста, где апостол Фаддей и Григорий Просветитель возлагают на него свои руки и запечатлевают его. След от колена Степаноса остается на горе и поныне. В тот день ему дается знание о времени его кончины. В последующей молитве он просит за всех живых и мертвых, после чего ему является Богородица с Христом и сообщает, что ему даровано все, о чем он просит. Степанос отдает Богу душу в канун праздника Сошествия Святого Духа, стоя на коленях перед алтарем.

Тело Степаноса кладут на арбу, чтобы перевезти в монастырь Аргелан и похоронить. Арбу окружают больные бешенством, которые мгновенно исцеляются. Тело праведника довозят до монастыря Аргелан и хоронят там, а над могилой строят часовню, к которой до сих пор ходят паломники. Свя-

тое место исцеляет от многих болезней, прежде всего от бешенства⁴⁴².

Первые этнографические свидетельства о народном культе этого святого относятся к середине 19-го в. О популярности Терскан-ворди за пределами Васпуракана, а именно в Высокой Армении, свидетельствует песня алашкертского сказителя-ашуга Синан-оглы, содержащая некоторые мотивы “жития”:

	<i>перевод</i>
Ականջ արեք պատմեմ զճան, թե ինչ արաւ Տէրսկանորդին, Терсканорди,	Послушайте, расскажу вам О том, что сделал
Օր մեծացաւ հասաւ քամալ, Շնորհք առաւ Տէրսկանորդին:	Как вырос, стал он <i>камалом</i> , Дар получил Терсканорди.
Էբարց ցորեն գնաց ջաղաց, Բազում աղքատ կայնան դիմաց	Пшеницу в мельницу повез, Толпа голодных стала перед ним,
Ճանկ ճանկ ցրուեց, աւազն էբարց, песок,	По горстке роздал, взял
Ալիւր դարցուց Տէրսկանորդին: Վերնդ է սար, ներքնդ է գետ, Դուն շուռ եկար վարպետիդ հետ,	Мукою сделал Терсканорди. Гора вверху, река внизу, Ты долго странствовал с учителем,
Յառաջ մականդ էր Արտամերդ, Առաւ զքամալ Տէրսկանորդին:	Ступал твой посох в Артамет, Взял его <i>камал</i> Терсканорди.
Քո ջուր կիզայ վերին սարէն,	Вода твоя струится с гор,

⁴⁴² История Тер-Усика и сына его Степаноса//Պատմութիւն Պղնձէ քաղաքի, Կ.Պօլիս, 1749, с. 184-219: История Тер-Усика и сына его Степаноса//Գիրք պատմութեան Պղնձէ քաղաքի, Կ.Պօլիս, 1792, с. 184-219: История Тер-Усика и сына его Степаноса//Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք, Կ.Պօլիս, 1807, с. 144-172. История Тер-Усика и сына его Степаноса//Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք- Կալկաթա, 1814, с. 119-141: История Тер-Усика и сына его Степаноса// Պատմութիւն Պղնձէ քաղաքի, Թիֆլիս, 1911, с. 184-217:

Գիգայ թափի ժամտան քարէն,
Բիրին հանիր արնծովէն,

Ազատ էրիր, Տէրսկանորդի:
Մինան-օլլին եմ Բեդեցի,
Լալով ողբալով զնացի,

Տէրսկանորդին ուխտ էրեցի,
Հրաշալի Տէրսկանորդի⁴⁴³:

Течет с камней у церкви.
Ты вывел Биби из кровавого
 моря,

Освободил, Терсканорди.
Синан-оглы я из Бехи,
Пошел я с плачем, со
 стенаньем,

Паломником к Терсканорди,
Ты чудотворец, Терсканорди.

Намеки на «житие» содержат такие выражения, как «Падучий Терсканворди, закованный в цепи, весь в пене»⁴⁴⁴, где имеется ввиду типичный больной-паломник к св. Степаносу – зараженный бешенством от укуса животного, или благопожелание «Дай тебе силу и поддержку единственная литургия Терсканворди»⁴⁴⁵, где речь идет о чудесном спасении падшей женщины из «жития».

Собственно народный вариант «жития», сохранившийся в пересказе народного собирателя из Вана А.Абраамяна⁴⁴⁶ кроме типичных мотивов превращения песка в муку, спасения падшей женщины единственной в жизни литургией, обращения турка-мясника в христианство после чуда с пнем, отшельничества и многочисленных исцелений, содержит также несколько отличных сюжетов и чисто фольклорных подробностей. Так, священник из Иерусалима не получает видение, а просто уговаривает Усика вести нормальный семейный образ жизни на основе примеров праведников из Библии. Место, откуда Степанос берет песок, после получает название «Авазтар» (*Возьми песок*). Он убеждает он не сразу в сторону Беркри, а направляется в Ван, где

⁴⁴³ Մուրադեան Պ. Նշխարք հայկականք, Ալաշկերտի ժողովրդական բանահիւսութիւն, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ արխիվ, Մուրադյան-Այվազյան ֆոնդ, թղթ. N2, թ. 30-34:

⁴⁴⁴ Շէրենց Գ. Վանայ սիւզ, մաս 2, Թիֆլիս, 1899, էջ 158:

⁴⁴⁵ Там же, с. 163.

⁴⁴⁶ Абрамян А. История Тескан ворди, Национальный архив РА, ф. 1336, список 7, дело 961, л. 51-67 (021428-021444):

останавливается у знакомых, а на следующий день поздно ночью доходит до деревни Кочани, где останавливается на ночлег у «проститутки Майрам», которая относится к нему с материнской заботой. В этом варианте жена Усика не попадает в плен, а святой сам встречает падшую женщину. Здесь Усик обнаруживает, что мука, в которую превратился песок, из белой пшеницы, тогда как он отдавал на помол пшеницу гораздо более низкого качества. Мать Степаноса поет жалобную песню в связи с исчезновением сына. Усик очень долго разыскивает Степаноса, а дойдя до дома Майрам, он узнает, что женщина видела вещий сон, в котором сын Усика станет святым, и клятва о первой литургии, которую она берет с Усика, становится условием сообщения о местонахождении Степаноса. Когда люди узнают о чуде с мукой, юношу начинают звать Ускан орди. Иноверца, пожелавшего проверить чудесные качества Степаноса, здесь зовут Осман, а не Юсуф, и вслед за Османом христианство принимают многие другие «таджики» (в данном контексте - турки). Духовный сан *варданета* Ускан ворди принимает в монастыре отшельников на острове Лим на озере Ван. По дороге обратно в Беркри он встречает воюющие армии змей, из жалости молится за них, чем достигается перемирие между армиями, и змеи по очереди приходят к нему на поклон. Во время единственной литургии он видит Майрам, плывущую к нему по морю крови. Это устрашает его, и он оставляет службу на середине. Именно отсюда в народе непоследовательность в ведении дел называют «Это как единственная литургия Тескан ворди». Каждый раз, вспоминая видение Майрам в кровавом море, святой теряет сознание.

В народном варианте больше рассказов о конкретных чудесных исцелениях, а сцены видений отличаются от письменного варианта. Так, Тескан ворди видит лестницу в небо, по которой поднимаются и спускаются ангелы. Когда Тескан ворди смертельно заболевает (а не получает видение о времени своей смерти), он пишет письмо на камне в стихотворной форме, в котором составляет эпитафию себе и нечто вроде завещания: положить его мертвое тело на два ореховых бруса, впрячь двух молодых бычков и отпустить их без управления, и устроить ему могилу на месте, где бычки сбросят его тело. Он умирает глубо-

кой зимней порой (а не в канун праздника Сошествия Духа), но когда весной паломники находят его тело, он выглядит спящим. Уже в это время зажиточный крестьянин по имени Мелик приводит к нему свою дочь, больную падучей болезнью. Девушка немедленно исцеляется, и Мелик берет организацию похорон святого на себя. Он стегает запряженных в брусья бычков, и они, поднявшись на зеленую вершину, рвутся в разные стороны и оставляют тело на земле, причем брусья ломаются и остаются торчащими в земле по разные стороны от тела. Позже эти брусья зазеленели и превратились в деревья, так и оставшись на месте могилы Степаноса – таким образом объясняется наличие орешника в святилище, о котором твердят народные песни. Могилу святого устраивают из мрамора, над ней строят церковь.

История Терскан ворди в рассказе Сероба Варданяна, которую он слышал от бабушки-уроженки Мамртана недалеко от Беркри и которую мы записали в с. Двин в 2010 г., содержит только первую часть «жития» Терскан ворди (Варданяну неизвестны ни имя Степанос, ни его священническая деятельность), а именно – превращение песка в муку, после чего подросток уходит в горы, заболевает и гибнет, а место его смерти становится святилищем⁴⁴⁷.

Сохранилась еще одна версия народного «жития», на этот раз не из Васпуракана, а из соседней провинции Харк-Буланых⁴⁴⁸. Эта история тоже содержит некоторые отклонения от письменного сюжета, как то любовь между Усиком и его будущей женой и случайный характер превращения в «брата и сестру». В отличие от ванского варианта, здесь жена Усика также увозится, но не в рабство, а в гарем, хозяин которого умирает и лишь его младший брат продает женщину в публичный дом христианке Биби. Биби возвращает жену Усику, когда видит свет, исходящий из его рта. Степанос раздает бедным пшеницу, но не превращает песок в муку, а просто убегает в горы. Наконец, он в своей единственной литургии

⁴⁴⁷ Симонян Л., Шамамян Н. Полевые материалы, Двин, 2010 г.

⁴⁴⁸ Բենուէ, Բուլանըի, կամ Հարք գաւառը//Ազգագրական հանդէս, գ. Զ - Թիֆլիս, 1900, էջ 23-25:

освобождает попавшую в кровавое море Биби и дает обет больше никогда не служить литургий. В буланыхском варианте история завершается на этом месте, а «*Да будет свидетельством единственная литургия Тер Скан ворди*» служила клятвенной формулой.

Для того, чтобы представить природу видения Терскан ворди во время единственной литургии, надо обратиться к этнографическим данным совершенно другого типа, а именно – к описаниям обрядов посвящения в колдуны и видениям во время акта колдовства. Например, в этнографическом районе Буланых, для получения сверхчеловеческих способностей, особого мистического знания «садились в овалусин» (выполняли ритуал с луной месяца Ов, т. е. август-сентябрь). Во время этого ритуала надо было ни мигая смотреть на луну через зеркало, положив перед собой чашу с водой. Первое видение, которое приходит при этом – это семикратное размножение и вторичное воссоединение луны, после чего открывается широкое море крови⁴⁴⁹. Дело в том, что наследственное колдовство в духе североазиатского или алтайского шаманизма – весьма редкое, очевидно, заимствованное, явление среди армян. По большей части люди с экстрасенсорными способностями – это самородки и самоучки. Среди армян бытовало поверье, что дети, родившиеся на Рождество или в день пасхального жертвоприношения (*ахар*) получают способности к гаданию и колдовству с помощью делания надписей на ногтях своих рук. А. Мхитарянц описывает историю юного колдуна, родившегося в день «ахара», который с неохотой делал надписи на ногте и глядел в них, плакал и противился, потому что при этом действии его как бы ставили над кровавым морем, и перед его глазами пронеслось бесчисленное количество людей, животных и сказочных существ, среди которых преступники не могли пройти море, оно хватало их за ноги. Юноша очень уставал от таких сеансов и в концов отказался от них, предпочтя гадание по лопаткам жерт-

⁴⁴⁹ Бенсе ук. соч, с. 32-33.

венных животных⁴⁵⁰. По-видимому, именно сюда можно отнести упоминание о «камале», в данном контексте - «знающий, мудрец, обладающий сверхчеловеческими способностями» - в вышеприведенной песне ашуга Синан-оглы.

Казалось, с утратой самой святыни, культ должен был умереть, т. к. он был связан с конкретным местом, а мигрировавшее население находило новые святые места и методы исцеления. Однако в 2011 г. в городе Апаран нами была изучена семейная святыня под названием «Святой Терскан ворди»⁴⁵¹. История этой святыни загадочна прежде всего потому, что ни хранители и исполнители целительных обрядов, ни те, кто обращался к ним за помощью или просто совершал паломничество и приносил жертву Терскан ворди, не имели представления об этом святом и не знали его «жития». По рассказу старшей в семье, святыню основала женщина по прозвищу К'то, которая появилась в Апаране вместе с единственным сыном Киркором в начале 19-го века и принесла с собой несколько предметов, среди которых - золотая фигурка воина 12-13 см высотой, серебряный крест, подсвечник и деревянная палка для квашения. К'то была родом из Беркри – района в Западной Армении, где находился монастырь св. Степанноса. Все члены семейства Григорянов (по имени Киркора) и Манукянов считают себя потомками сына этой женщины. Позднее фигурка воина была утрачена (украдена), палка (очевидно, ореховый брус) износилась, была попытка украсть и подсвечник, но после серии чудесных событий он был возвращен обратно. Крест и по сей день используется в обряде. Первоначальное святилище представляло собой маленькую четырехугольную комнату, в которой в постоянно открытом ящике (закрывать его служители не имели права) хранились священные предметы, позже Григоряны сделали

⁴⁵⁰ Մխիթարեանց Ա. Փշրանքներ Շիրակի ամբարներինց//Էմինեան ազգագրական ժողովածու, գ. 1 – Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 180:

⁴⁵¹ Здес и далее данные по святилищу Терскан ворди в Апаране: Л. Симонян Полевые материалы, Апаран, 2011 г. Сказительница: Грануш Геворгян, 1937 г. рожд., служительница семейной святыни.

пристройку, в результате святилище стало выглядеть как дом, в котором можно разжигать свечи, воскурять ладан. Перед святилищем довольно широкая площадка, пригодная для собрания большого количества людей и приношения жертвы. Для жертвоприношения в святилище хранится освященная в церкви соль.

Когда фигурка воина еще находилась в святилище, исцеление кожных болезней любого происхождения производилось следующим образом: из семейного ручья приносилась вода в глиняной чашке, в нее клалась фигурка воина, несколько раз переворачивалась в воде, а затем давалась на поцелуй всем присутствующим, после все отпивали из таким образом освященной воды (процедура называется «хачалва», букв. «омовение креста»). Теперь то же самое продельвается с помощью креста. Эту воду наносят на грудь женщины или на вымя коровы для увеличения количества молока или снятия боли. Если нужно вылечить кожные болезни, служительница набирает в рот воды и брызгает ею на кожу посетителя. Апаранцы трепетно относятся к святыне и неизменно ходят к ней в случае кожных заболеваний. Иначе исцелялась болезнь вследствие «т'п'ха»⁴⁵² (женская болезнь, вследствие которой рождающиеся дети либо умирали, либо были очень болезненными): вышеупомянутую палку для квашения подносили к телу больного ребенка.

Терскан ворди способен был также давать детей бесплодным парам. Рассказывают случай, когда бесплодная женщина увидела сон, в котором тогдашняя служительница святыни положила руку на живот женщины и сказала: «*Любимец Св. Ованнеса (Иоанна Крестителя), крестный сын Терскан ворди*». Когда у женщины родился ребенок, его крестили в церкви Св. Ованнеса и назвали Ованнесом.

При этом служительницы (упоминаются исключительно женщины) не имеют представления о происхождении даже имени этого святого. По их версии (народная этимология имени) «Тер ска ворди» – это «Великан – сын Господа».

⁴⁵² Также злой дух, вселяющийся в женщину и отнимающий у нее детей.

В 2013 г. две молодые собирательницы почти случайно наткнулись на еще одну семейную святыню под названием «Святой Тескан ворди», на этот раз – в марзе Котайк, в селе Зовбер⁴⁵³. Здесь речь не об отдельном святилище, а о маленьком (1 см³) кубике желтоватого мрамора, хранящемся в особом шкафчике и помогающем при тяжелых родах⁴⁵⁴. В настоящее время у камешка нет особого хранителя. Члены семьи Акопян ничего не знают ни о происхождении камня, ни о святом, который является им то во сне, то в виде привидения, в основном, в образе молодого человека или девушки. Единственное предположение, которое можно сделать в этом случае – что камешек является обломком от мраморной плиты с могилы св. Степаноса. У жителей Зовабера сохранилось только смутное воспоминание о святом месте его происхождения и имя – Терскан ворди.

Таким образом, после утраты возможности реального паломничества к монастырю Св. Степанноса в Беркри, память о святом претерпела коренные изменения. История о сыне Усука и культ чудотворца Терскан ворди разобщены, в одном случае можно записать фольклорные образцы, в другом – зафиксировать народный культ, но донныне не зафиксировано случая сочетания культа Терскан ворди с мифологией, связанной с именем этого народного святого. Исследование ни в коем случае нельзя считать окончательным, так как есть возможность обнаружения новых фактов, свидетельствующих о живом культе Степаноса, сына Тер-Усука.

Լիլիթ Միննյան

**ՄԻԱԿ ՊՍՏԱՐԱԳԻ ՍՐԲԻ՝ ՏԵՐՍԿԱՆ ՈՐՈՒԻ ՀԵՏ ԿԱՊԿԱՍԾ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ**

Հնդվածում ուսումնասիրվում են Հուսիկի որդի Սուրբ Ստեփանոսի, կամ, ինչպես նրան անվանում են բանահյուսության մեջ, Տերսկան որդու կերպարի հետ կապված պաշտամունքները: Սրբին նվիրված միակ վանքը լքված և գտնվում է Հայաստանի սահմաններից

⁴⁵³ Акопян Г., Лачинян А, Полевые материалы, Меградзор-Зовабер, 2013 г. Сказительница: Софик (Дустрик) Акопян, 1947 г. рожд..

⁴⁵⁴ Освященная вода из апаранского святилища также использовалась в этих целях.

դուրս: Սրբի հանդեպ հետաքրքրության մասին է վկայում նրա մասին վարքագրությունների, ժողովրդական երգերի առատությունը: Ապարանում և Զովաբերում կան «Տերսկան որդի» կոչվող սրբարաններ, որոնք ունեն իրենց պատմությունը, որը կապված չէ Սրբի մասին վարքագրությունների հետ: Այսպիսով, հոդվածի հեղինակը ուսումնասիրում է մի կողմից՝ այդ կերպարի հետ կապված բանահյուսական նմուշները, մյուս կողմից՝ նրա հետ կապված ժողովրդական պաշտամունքը:

Lilit Simonian

**THE FOLK WORSHIP AND BELIEFS AROUND TERSKAN
VORDI – THE SAINT OF A SINGLE LITURGY
SUMMARY**

In the article the worship and mythological aspects concerning the folk saint Stephanos, Husik's Son, or Terskan Vordi are discussed. The only monastery dedicated to him is abandoned and is situated abroad Armenia. About popularity of that saint before the beginning of 20th century witnesses abundance of his hagiographies in blackletter literature, folk variants of his story and folk songs of pilgrimage to his shrine. In Aparan and Zovaber there are shrines called «Terskan vordi» which have their own mythology but it is not connected with the «hagiographies». In the article the items of ways of preservation of the image in the folk's memory as well as of interrelationship between the folk variants of the Saint's story and the character of wisdom-acquiring rites are presented.

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ III ՀԱԶԱՐԱՍՅԱԿԻ ՇԵՄԻՆ**

Համաշխարհային զարգացումների արդի փուլում առանձնապես կարևորվում են համամարդկային արժեքները, որոնք բաղկացած են բազմաթիվ ու բազմազան ազգային արժեքներից, ձևավորված լինելով տարբեր ժողովուրդների տարածքային, էթնիկ և մշակութային արժեքների հավաքականությունից:

Երկրագնդի քաղաքակրթական արժեքների ներկայանակում ուրույն տեղ է գրավում հայերիս մշակույթը՝ իր ինքնատիպ գույներով ու երանգներով: Ժամանակային առումով, հայոց մշակութային արժեքները հնագույն քաղաքակրթական դաշտից են ակունքվում և հազարամյակների տարիք ունեն:

Տարածական առումով՝ ձևավորվելով և զարգանալով արևելյան ու արևմտյան, հյուսիսային ու հարավային մշակույթների բանուկ խաչմերուկներից մեկում՝ Հայկական լեռնաշխարհում, մեր օրերում հայկական ազգային արժեքները սփռված են աշխարհով մեկ, քանզի դրանց կրողներն են աշխարհասփյուռ՝ կենտրոն ունենալով ներկայիս Հայաստանը և Արցախը որպես ազգային պետականության կրողներ:

Ազգային արժեքներ են՝

ա) **տարածքն ու բնակչությունը**, որոնց պահպանումը գենաֆոնդի պահպանման առաջնային նախադրյալն է: Անցյալ դարի պատմական հայտնի իրադարձությունների կոտորածների և տեղահանությունների, ինչպես նաև պատմա-քաղաքական այլ գործոնների հետևանքով, մենք՝ հայերս կորցրեցինք մեր պատմական տարածքների մեծ մասը (9/10-ը), և մեծ թվով բնակչություն, որը կամ կոտորվեց, կամ գաղթեց այլ երկրներ: Պատմական Հայաստանի մեծագույն մասն, իր հարստությամբ հանդերձ, մնաց օտարին, իսկ հայերը կենտրոնացան Խորհրդային Հայաստանի ոչ մեծ տարածքում: Արցախյան գոյամարտը, որ տեղի ունեցավ խորհրդային կարգերի փլուզումից հետո, եկավ ապացուցելու, որ չի մարել կորուսյալ հայրենիքը ետ

վերադարձնելու տենչը, և հայն ունակ է կռվելու իր պատմական հողերի համար: Մեծ Եղեռնից մեկ դար անց էլ Հայ Դատը տակավին իր հանգուցակետին չի հասել, սակայն արցախյան հաղթանակի շնորհիվ տարածքի և բնակչության իբրև ազգային արժեքների, պահպանումը միտված է արդեն իսկ ձեռք բերածի յուրացմանը ներկայում և Ցեղասպանության հետևանքով կորցրածի վերականգնմանն ապագայում:

բ) **պետությունը**, որն ազգային շահերը պաշտպանող կառույց է եղել դարեր շարունակ՝ Հայկագունյաց հնագույն արքայական հարստություններից սկսած մինչև Կիլիկյան միջնադարյան թագավորատներ և ուշմիջնադարյան իշխանատները: Սակայն քաջ հայտնի է, թե ինչ ծանր է ժողովրդի գոյությունն իսկ առանց ազգային պետության, որպիսի իրադրության վկան էր հայերի վիճակը Օսմանյան Կայսրությունում՝ դարերով հարստահարված և, ի վերջո, վտարված սեփական հայրենիքից: Այնուհետ, երբ Հայաստանը հայտնվեց Խորհրդային Միության կազմում, 70 խաղաղ տարիների ընթացքում ազգային արժեքները որոշակի զարգացում ապրեցին: Իսկ Արցախում պատմական հաղթանակ տանելուց հետո աշխարհի ներկայիս քարտեզին հայտնվեց երկրորդ հայկական պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը Հայաստանի Հանրապետության հետ ձեռք-ձեռքի անկախ պետականություն է կառուցում: Արդի փուլում տեր դառնալով ազատ և անկախ պետականության, երկիրը ջանում է ժողովրդավարության ուղով ընթանալ, սակայն ժողովրդավարությունից ոչ պակաս կարևոր է խաղաղությունը տարածաշրջանում, որի շնորհիվ միայն Հայաստանը և Արցախը կկարողանան զարգանալ մերօրյա չափանիշներին համապատասխան:

գ) **մշակույթը**, որի պահպանումը և զարգացումը ներառում է նախ, անցյալի արժեհամակարգի պահպանումը, ապա՝ ներկա փուլում ավանդական ու ժամանակակից արժեքների ներդաշնակ գոյակցումը, ինչպես և՛ ապագայի նյութական և հոգևոր կյանքի ապահովումը: Յուրաքանչյուր ազգային մշակույթ, նաև՝ հայկականը, ինքնաբավ համակարգ է, սակայն մեկուսացած չէ և տարբեր ազդեցություններ է կրում ժամանակի ընթացքում:

Այսօրվա մշակույթը դրա վառ ապացույցն է, քանզի առատ հոսքով Հայաստան ու Արցախ են ներխուժում օտար մշակութային արժեքներ, որոնք մինչև վերջերս անհայտ էին տեղի հայ հասարակությանը: Մյուս կողմից, աշխարհի տարբեր ծագերում բնակվող հայերն իրենց մշակութային ինքնատիպությամբ փոքր կամ մեծ ազդեցություն են գործել և գործում այն միջավայրի վրա, որտեղ բնակվում են: Մշակույթների այսօրինակ փոխհաղորդակցման արդյունքում ծնունդ են առնում նոր երևույթներ, որոնք հատուկ են արդի քաղաքակրթությանն ամենուրեք, աշխարհի բոլոր երկրներում: Եվ հայ հասարակության մեջ, լինի սփյուռքում թե հայրենիքում, ավանդական ու ժամանակակից մշակութային արժեքների գոյակցումն է, որ ապահովելու է հասարակության մշակութաստեղծ գործունեությունը:

դ) **տնտեսական, սոցիալական և հասարակական ոլորտը**, որի վերականգնումն ու բարելավումը խիստ հրատապ է, քանզի առանց դրա վտանգված է ազգի գոյությունն իսկ սեփական հայրենիքում: Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին խորհրդային բոլոր երկրներում ստեղծվեցին ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակներ, որոնք հասարակական կյանքում նույնպես խմորումներ առաջացրեցին: Փոխվեց քաղաքական դաշտը, ինչի արդյունքում պատերազմական օջախներ ստեղծվեցին նախկին ԽՍՀՄ տարածքներում, այդ թվում և Արցախում, որին մասնակից եղավ ողջ Հայաստանը՝ որպես մայր հայրենիք: Այս ամենի հետևանքը եղան անապահով կյանքն ու արտագաղթը, որ դամոկլյան սրի պես հիմա էլ կախված են ժողովրդի գլխին, և որոնց կասեցումը տնտեսական, սոցիալական և հասարակական ապահովության վերականգնման ու բարելավման շնորհիվ կարող է լինել:

Արդի հայ (և ոչ միայն հայ) հասարակության խնդիրներն անհնար է պատկերացնել և ներկայացնել գլոբալիզացիայի 21-րդ դարի համաշխարհային քաղաքակրթության ամենաաշխույժ գործոնի, համատեքստից դուրս:

Համաշխարհայնացման (գլոբալացման) մերօրյա գործընթացներում բարձր տեխնոլոգիաների շնորհիվ աշխարհն

ավելի ճանաչելի և հասանելի է դարձել: Մակայն գլոբալացումը կամ, ինչպես հաճախ այն անվանում են, ամերիկանացումը կամ արևմտականացումը, ինչպես ամեն մի նոր և սրընթաց երևույթ, ունի իր դրական ու բացասական կողմերը: Գլոբալացման ներկա փուլը այնքանով է շահեկան հայերիս համար, որ հնարավորություն է ընձեռում աշխարհով մեկ սփռված մեր հատվածներին առավել ազատ ու սերտ շփվելու միմյանց և մայր հայրենիքի հետ:

Ներկայումս Հայաստանն ընդգրկվել է համաշխարհային գործընթացների ոլորտ, որոնցից մինչ այդ Խորհրդային Միությունը մեկուսացած էր երկաթե վարագույրով: Հիմա այդ վարագույրը չկա, և նախկինում փակ, այժմ բաց Հայաստան են ներխուժում արժեքներ, որոնք դժվար է մշակութային, առավել ևս՝ ազգային համարել: Դրանք ոչ միշտ են հարիր հայ հասարակության սովորութակարգին, մտածելակերպին, նկարագրին: Ժամանակն, անշուշտ, կխմբագրի դրանք, ու հայոց ավանդական կենսակերպին ավելանալիք նոր գծերը կբեկվեն ազգային արժեհամակարգով, և նույնիսկ բացասական երևույթները մեծ սպառնալիք չեն լինի տոհմիկ ինքնությանը և նկարագրին: Ազգային արժեքների պահպանման խնդրում որոշիչ դեր ունի հայ հասարակությունը, որը հենց դրանց կրողն ու սերնդե սերունդ փոխանցողն է: Եվ հայ հասարակությունը՝ թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում, պետք է ոչ միայն հստակ պատկերացնի ազգային արժեքների կարևորությունը, այլև ամենաաշխույժ մասնակցությունն ունենա դրանք պահպանելու և փոխանցելու գործընթացներում:

***Ինչպեսի՞ն է հայ հասարակությունն այսօր՝ Քրիստոսից հետո
III հազարամյակի շեմին, ավելի ճշգրիտ՝ 21-րդ դարի երկրորդ
տասնամյակի կեսերին:***

Մինչ այս հարցին պատասխան որոնելը անդրադառնանք խորհրդային ժամանակների հասարակության որոշ հարցերի: Մտքով տեղափոխվելով 70-ական թվականներ, հիշենք, որ այն տարիներին դպրոցներում սկսեց դասավանդվել նոր՝ «Հասարակագիտություն» առարկան, որի հիմնական նպատակն էր խորհրդային քաղաքացուն պատանի տարիքից արդեն ներշնչել կատարյալ հասարակության գաղափարը, որն, անշուշտ, խորհրդային հասարակությունն էր, որում բոլորը «հավասար էին և

ագատ»: Մակայն այս առասպելը երկար չտևեց, քանզի Խորհրդային «իդեալական» կառույցը փլուզվեց, անցյալի գիրկը տանելով կատարյալ հասարակության մասին ակնկալիքները: Եվ եկավ այն պատմական պահը, երբ պարզվեց, որ խորհրդային հասարակությանը տարիներ շարունակ հրամցված գաղափարախոսությունն իրեն չի արդարացնում, կոմունիզմ կառուցելու գեղեցիկ խոստումները չեն իրականանում: Խորհրդային հասարակության նախկին անդամները, որոնք իրականում Միության կազմի մեջ մտնող ժողովուրդներն էին, պատերազմական գործողություններ սկսեցին միմյանց դեմ: Եվ սկսվեց պատերազմների մի ողջ շարան (այդ թվում և արցախյանը), որը 90-ականների հետխորհրդային տարածաշրջանի դեմքը կերտեց՝ ի դերն հանելով հասարակության ընդերքում եղած բազում հակասություններ:

